

43

8

Uh - 55

2 NOV 2009

ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼԱՏԵԱՆԻ ՆԵ

Պ. ԱՐԱՔՍԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴՊԱԿԱՆ ԹԱՑՐՈՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ Ա.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Թանգագին համբոյր.
2. Յանկալին եւ անսպասելին.
3. Լուսանկարչութեան պատուիքը.
4. Բարիլոնեան խառնակութիւն.
5. Աւելիս Սովա.
6. Շփորուած ծառայ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆՑԻ ՊՈԼԵՑ. 7.

1910

Գ. ԳԱԼՈՅՏԵԱՆԻ
ԵՐԳ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

8
Ա-55

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՈՅՏ

1. Վերջին օրերը, Յ. Միրզայեանի	1 50
2. Վափաղեանի	— 15
3. Ամազլը ծովերի խորքում, 50 պատկերով Լուս- կավիչի, թարգմ. Ստ. Մալխասեանի	— 30
4. Տրելթի, զրամա 4 ար., թ. 1. Մելիք-Աղամ. — 25	
5. Եաղ-աստ, գող. 1 արար. Յ. Ղազարեանի	— 25
6. Դարվինիզմ, Դարվինի պատկերով Ս. Բալա- զեանի.	— 50
7. Ազնիւ գող, Ֆ. Մ. Դոստոևսկու, թ. Ն. Զ. — 10	
8. Ինքնավարութիւն և Զեմստվօ, Բէլօկօնսկու, թարգմ, Կ. Զալալեանի	— 15
9. Տնտեսագիտական զրոյցներ, Կարիշիկ թարգմ. Կ. Զալալեանի.	— 40
10. Կъ введенію на "Кавказъ Земскаго Самоуп- равленія, Кн. Г. М. Туманова.	— 20
11. Քերականութիւն մայրենի լեզուի, Ա. Բ. և Գ. մաս միասին, Ստ. Պալասեանի	— 75
12. Ընդհանուր պատմ. Հեն-Ֆար, Վինօգրադո- վի, թարգմ. Խաժակի.	— 1 —
13. Եւրոպա և Հայաստան, Ամֆիտէատրովի թարգմ. Ա. Միիթարեանի	— 10
14. Փուչ զաւակ, զրամա 5 գործ. Գ. Ղարաջեանի. — 50	
15. Արթուրի աւետարանը, թարգմ. Տ. Զաւէնի . — 25	
16. Գծագրութեան օրինակներ, Գ. Լևոնեանի Ա. մաս.	— 20
17. Բ. մաս.	— 20
18. Գ. մաս.	— 35
19. Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան, Քաղաքական մաս, կազմեց Լ. Բաբայեան. — 65	
20. Начальная книжка для армян. ШКОЛЪ, С. Мандиняна.	— 55
21. Կառապան Հենչէլ, թարգմ Լ. Բաբայեան	— 50
22. Հող և նրա մշակութիւնը, Գ. Ղազարեանի. — 20	
23. Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան, Գ. մաս, Եւրոպա. կազմեց Լ. Բաբայեան. — 50	

Գ. ԱՐԵՔՄԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԹԱՏՐՈՆ

ԺՈՂՈՎԱՃՈՒ Ա.

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Թաճագին համբոյր.
2. „Յանկալին եւ անսպասելին“.
3. Լուսանկարչուրեան պատուհան.
4. Թարիլոնեան խառնակուրիւն.
5. Աւելիս Աղա.
6. Շփորուած ծառայ.

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՐԱՋ ՑՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆՅ. ՊՈԼԻ 7.
1910

22.02.2013

43

Ամեն կողմից շարունակ դիմում են ինձ, խընդ-
քելով ուղարկել իրանց թատրօնական գրուածքներ ու
մանաւանդ վօդըվիլներ: Ես միշտ մեծ ցանկութիւն
եմ ունեցել և պատրաստականութիւն ընդ առաջ գնալ
այդ պահանջին, բայց անկարող եմ եղել բաւարարել:
Ներկայումս, «Գուտտենբերգ» գրավաճառանոցի նախա-
ձեռնութեամբ ես հնարաւորութիւն ունեցայ հրատա-
րակել մի շարք վօդըվիլներ, որ յոյս ունիմ կարող են
օգտակար լինել հայ բեմը սիրողներին:

Հարկաւոր եմ համարում իմ սրտագին չնորհա-
կալութիւնը յայտնել «Գուտտենբերգ» գրավաճառա-
նոցի տէր պ. Գ. Յ. Գալատեանցին այս հրատարակու-
թեան համար, որին և ձօնում եմ իմ ներկայ համեստ
աշխատութիւնը:

Պ. Արամիսին

ՏԸ



3896-76

ԹԱՆԳԱԳԻՆ ՀԱՄԲՈՅՑ

Վոդեվիլ 1 գործողութեամբ

ԹԱՐԳԱ:

Պ. ԱՐԱՋԵԱՆԻ

ԴԱՐՁԱՊԱ ԱՆՁԻՆՔ

ԱՆԴՐԵՅ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՌԻՏՈԶԿԻՆ. ծառայում է նշանաւոր բանկում:

ՄԱՐԻԱ ՊԵՏՐՈՎՆԱ, նորա կինը:

ԻՎԱՆ ԻՎԱՆԻՉ ԲԻԲԻՆԻԿԻՆ, մասնաւոր բանկի կառավարիչ՝ մեծ դիրք ունեցող անձնաւորութիւն է:

ՆԱՍՏԻԱ, Ռւտօչկինների աղախինը:

Գործողութիւնը կատարվում է ամառը Ռւտօչկինների ամառանոցում:

Բեմը ներկայացնում է մի սենեակ ամառանոցում: Աշ, ծախ եւ մէջ տեղը դրներ. խորքում պատուհան, աշ ծաղիկներ, ծախ սեղան. կարասիքը ամառային:

ՏԵՍԻԼ 1.

ՌԻՏՈԶ. (ըեմի յետելից). Նաստիա, Նաստիա, ուր Էք կորել, ուր Էք կորել Նաստիա, Նաստիա. Վերցրէք իրերը, Նաստիա: (Ներս ընկնելով). ոչ ոք չկայ, բոլորը սատկել են: Նաստիա: Ում տամ իրերը. Նաստիա. սա անտանելի է. (վայր է ծգում ծեղքից արկղները): Կոկորդս տրաքվեց. Նաստիա. (զանգահարում է). Նաստիա. (վերցնում է երկրորդ զանգը եւ երկուսով զանգահարում). Նաստիա. լեզուս պատռեցի. (զանգահարում է ականջի դէմ):

ՏԵՍԻԼ 2.

ՌԻՏՈԶԿԻՆ եհ ՆԱՍՏԻԱ.

ՆԱՍՏԻԱ.—Ա, դուք արդէն բարեհաճել էք վերադառնալ, պարո՞ն:

ՈՒՏՕԶ.—Վերադարձել եմ, վաղուց վերադարձել եմ. ամբողջ մի ժամ է ձեզ եմ կանչում, կոկորդս տրաքուեց, լեզուս պատռուեց:

ՆԱՍՏԻԱ.—Այդ ինչնւ պարոն, ինչնւ էիք բորում, ես ահա այստեղ դոների յետևն էի:

ՈՒՏՕԶ.—Ասացէք խնդրեմ. մեղաւորը դարձեալ ես եմ. հասկացիր, երկու զանգ եմ փշրել, ձայնս եմ կորցրել... վերցըու իրերը:

ՆԱՍՏԻԱ.—Տեսէք, տեսէք ինչպէս է թափել և յետոյ ինձանից պիտի պահանջեն, ով է մեղաւորը, ի հարկէ պարոնը:

ՈՒՏՕԶ.—Խնդրեմ թողնէք ձեր փիլիսոփայութիւնը, ուփ շան նման յոգնել եմ. (ընկնում է այս եւ այն կողմը):

ՆԱՍՏԻԱ.—Եթէ յոգնել էք ուրեմն նստեցէք, ապա թէ ոչ վաղում էք և բորում կարծես հըրդէն է պատահել:

ՈՒՏՕԶ.—Խնդրեմ թողնէք ձեր նկատողութիւնները... (նստու է). Ուփ, ինչքաղցած եմ, ինչ քաղցած: Որտեղ է տիրուհին.

ՆԱՍՏԻԱ.—Գնացել են երաժշտութիւն լսելու:

ՈՒՏՕԶ.—Ինչպէս թէ երաժշտութիւն, ինչ երաժշտութիւն:

ՆԱՍՏԻԱ.—Այսօր այգում երաժշտութիւնը նուագում է և ամբողջ այգին լուսաւորուած է. Արդէն երկու ժամ է ինչ երաժշտութիւնը նըւագում է: Այսքան բազմութիւն է որ ասեղ

գցելու տեղ չը կայ:

ՈՒՏՕԶ.—Այդ էր պակաս. ես շան նման քաղցած եմ, իսկ կինս գնացել է երաժշտութիւն լսելու: Տուր ինձ ճաշել:

ՆԱՍՏԻԱ.—Առանց տիկնոջ:

ՈՒՏՕԶ.—Բո գործը չէ:

ՆԱՍՏԻԱ.—Առանց տիկնոջ:

ՈՒՏՕԶ.—Տուր ինձ ճաշ:

ՆԱՍՏԻԱ.—Այդ անկարելի է:

ՈՒՏՕԶ.—Ի՞նչ:

ՆԱՍՏԻԱ.—Ի հարկէ այդ ինչպէս առանց տիկնոջ: Տիկինը գնացել է երաժշտութիւն լսելու իսկ դուք ուզում էք ճաշել:

ՈՒՏՕԶ.—Բայց չէ որ ես քաղցած եմ, հասկանում ես դու վերջապէս, ես քաղցած եմ:

ՆԱՍՏԻԱ.—Դուք պարոն, աւելի լաւ կանէք եթէ ինքներդ գնայիք երաժշտութիւն լսելու:

ՈՒՏՕԶ.—Այդ ինչ, դու ցնդել ես ինչ է, կամ մի գուցէ շոգն է ազդել ուղեղիդ. —ես քաղցած եմ, ուտել եմ ուզում ոչ թէ երաժշտութիւն, հասկացար վերջապէս թէ ոչ:

ՆԱՍՏԻԱ.—Ինչ կայ այստեղ չը հասկանալու, շատ պարզ է. —Ճշմարիտ, պարոն, աւելի լաւ է գնաք այգի: Գնացէք, գնացէք պարոն:

ՈՒՏՕԶ.—(Վերցնում է գլխարկը եւ փայտը). Ես այսօր կը խելագարուեմ. —լաւ, շատ լաւ, ես կերթամ այգի երաժշտութիւն լսելու, բայց եթէ

կէս ժամից յետոյ ճաշը պատրաստ չը լինի այն-
պիսի երաժշտութիւն կըսարքեմ ձեր գլխին
որ բոլորդ էլ գոհ լինէք:

ՆԱՍՏԻԱ.—Լաւ, լաւ պարոն, գնացէք,
գնացէք:

ՈՒՏՈՉ.—Բաւական է, առանց այլ և այլի ..
այդ էր պակաս—վանդում է: (զնում է եւ ապա
վերակառնում): Դուք, նաստիա, ձեզ շատ էք
թոյլ տալիս. դուք չպէտք է մոռանաք որ ես
ձեր պարոնն. եմ ձեր պարոնը այսինքն տիկնոջ
ամուսինը, որը իմ կինս է, հասկանում էք, իմ
կինս. իսկ ես նորա ամուսինը:

ՆԱՍՏԻԱ.—(քանալով ղոները). համեցէք
պարոն:

ՈՒՏՈՉ.—Ա՞ս, լեզուդ կարճացըիլ: (զնում է):

ՏԵՍԻԼ 3.

ՆԱՍՏԻԱՆ ՄԻԱՅՆԱԿ

ՆԱՍՏԻԱ.—Ասացէք ինդրեմ ինչպէս է
տաքացել, կարծես պատերազմի դաշտում լի-
նի: Այդ է ես էլ վախեցայ, ինչպէս չէ. (ծաղ-
ընելով). «Նաստիա ես ձեր պարոնն եմ, տիկնոջ
ամուսինը, որ իմ կինս է»...խա, խա, խա, խա...
և որտեղի պարոն է, մի ինչ որ գրասենեակում
երեսուն և հինգ ըուբլի ոռնիկ է ստանում.—
այդ ինչ պարոն է.—եթէ տիկինը չը լինէր,

դու պարոն հաւաքունում կապրէիլ և ոչ թէ
ամառանոցում: (նայում է պատուհանից). Գնաց,
տեսէք, տեսէք, ինչպէս է տաքացած գնում...
իսկ այստեղ պատուհանի մօտ ինչ լաւ է և ինչ
անոյշ հօտ է բուրում. ամբողջ կեանքս այստեղ
կը նստէի. (նստում է). կը նստէի, և զանազան
բոմաններ կը կարդայի... Ախ, ինչ, լաւ է:

ՏԵՍԻԼ 4.

ՆԱՍՏԻԱ ԵՒ ԲԻՐԻԻԼԿԻՆ

ԲԻՐԻԻԼ. (պատուհանից). Ճուտիկս, ախ դու
իմ ճուտիկս, թռչնակս:

ՆԱՍՏԻԱ.—Այս ի՞նչ կապիկ է:

ԲԻՐԻԻԼ. — Ի՞նչ, վախեցաք, իմ ճուտիկս:
Միք վախենալ այդ ես եմ: (անհետանում է):

ՆԱՍՏԻԱ.—(պատուհանի մօտ). Ի՞նչ էք կա-
մենում: Տանը ոչ ոք չկայ:

Բոլորը գնացել են... հեռացէք:

ԲԻՐԻԻԼ.—(մտնում է, ծեռքին ցիլինդր եւ
անձրեսանոց: Սպիտակ զգեստով). Ճուտիկս, ախ
դու իմ ճուտիկս, ինչ կրակոան է, ինչ կըտ-
րիչ... իսկ աչքերը, ուփ, ուփ, ուփ, շանթեր է
արձակում...

ՆԱՍՏԻԱ.—Տանը ոչ ոք չըկայ, տիկինը և
պարոնը գնացել են, մնաք բարեաւ:

ԲԻԲԻԻԼ.—Գնացել են երաժշտութիւն լըսելու։ Շատ լաւ, ես շատ եմ սիրում երաժշտութիւնը։

ՆԱՍՏԻԱ.՝ Եթէ սիրում էք, ուրեմն դուք ևս գնացէք. մնաք բարեաւ։

ԲԻԲԻԻԼ.՝ Ոչինչ, ես այստեղ էլ կը լսեմ։ Իսկ դուք իմ թմփլիկս, միք լինի դէպի ինձ այդքան խիստ։ Միք դուրս անիլ ինձ պառաւիս, ես բարի եմ... դուք ինձ փաղաքշեցէք, փայփայեցէք... ես փայփայանք սիրում եմ...

ՆԱՍՏԻԱ.՝ Փայփայանք սիրում էք, բայց տեսէք յանկարծ տիրուհին կը գայ և մեր երկուսի բանն էլ վատ կը լինի։ Մնաք բարեաւ. գնացէք, զընացէք։

ԲԻԲԻԻԼ.՝ Ախ դու փիս, ես քեզանից փաղաքանք եմ խնդրում, իսկ դու... գնացէք, գընացէք։

ՆԱՍՏԻԱ.՝ Գնացէք պարոն, Աստւած վկայ տիկինը կը գայ և խայտառակութիւն կը լինի։ Ուրիշների ամառանոցում չի կարելի ման դալ... գնացէք։

ԲԻԲԻԻԼ.՝ Սուս, ուփ, չարաճճի, ես քեզանից փաղաքանք եմ խնդրում, իսկ դուք «գնացէք և գնացէք»... ճուտիկս. հոգեակս, մի համբ... միայն մի համբոյր։ Միայն (ըսնում է նորան)։

ՆԱՍՏԻԱ.՝ Թողէք, պարոն, ձշմարիս կը խայտառակուենք։

ԲԻԲԻԻԼ.՝ Դէ դէ դէ, բաւական է չարաճճի... ես փաղաքշանք եմ ուղում, իսկ սա դուրս է անում։ (ըսնեց եւ համբուրեց) Ճուտիկս մի համբոյր։ (Բեմի յետեւից լսվում է Մարիա Պաւոլովնայի ձայնը)։ Նաստիա, Նաստիա։ Ուր ես կորել, ոեղանը պատրաստիր, հիւրեր են դալիս։

ՆԱՍՏԻԱ.՝ Գնացէք պարոն, ալիկինը գալիս է խայտառակութիւն կը լինի։

ԲԻԲԻԻԼ.՝ Տիկինը, ախ սատանան տանի։ Ո՞ւր է գլխարկս, ճուտիկս, ուր է գլխարկս։

ՆԱՍՏԻԱ.՝ Ո՞ւր էք դըել։

ԲԻԲԻԻԼ.՝ Ես ինչ գիտեմ, ինքդ ես թագցըել...

ՆԱՍՏԻԱ.՝ Գնացէք, գնացէք, ալիկինը գալիս է, խայտառակութիւն կը լինի։

ԲԻԲԻԻԼ.՝ Ինչ ես ինձ վախեցնում... ես ահա այստեղ կը մտնեմ։ (զնում է ձախ)։

ՆԱՍՏԻԱ.՝ Այդ ուր էք գնում, ուր էք գնում, այդ տիկնոջ ննջարանն է։

ԲԻԲԻԻԼ.՝ Մի վախացնիլ ինձ, ես կը մտնեմ այստեղ. (զնաց)։

ՏԵՍԻԼ 5.

ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՐԻԱ ՊԱՎԼՈՎՆԱ

ՆԱՍՏԻԱ.՝ (ղոների մօտ). Բոնուեցանք։ ՄԱՐ. ՊԱՎ. Նաստիա, այդ ուր ես կորել, ոե-

ղանը պատրաստիր, դիր ինքնաեռը, մենք այսօր
հիւրեր ունենք. մօտ բեր քաղցրաւենիքը և պէտք
է ուղարկել դարձեալ ուրիշ բաներ գնելու:

ՆԱՍՏԻԱ.—Շատ բարի. (կողմը). Այս բո-
պէիս խայտառակութիւն կը լինի: Շատ բարի...
բռնուեցանք:

ՄԱՐ. ՊԱՎ.—Այդ ի՞նչ է պատահել քեզ, Նաս-
տիա, դու բոլորովին դունատ ես:

ՆԱՍՏԻԱ.—Ես... Ես... ես ոչինչ... ես ճշմա-
րիտ ոչինչ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Դու ամբողջովին դողում ես...
ի՞նչ ես արել այստեղ:

ՆԱՍՏԻԱ.—Ես... ես ճշմարիտ ոչինչ... ճշմա-
րիտ ես մեղաւոր չեմ... մեղաւոր չեմ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Նաստիա, դու ամանեղին ես
կոտրել, խոստովանիր կոտրել Բո... աչքերիդ երե-
ւում է որ կոտրել ես:

ՆԱՍՏԻԱ.—Ճշմարիտ, տիկին, ես մեղաւոր
չեմ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Հենց այդպէս է—կոտրել ես.
իմ տուալետի գաւաթը հորեղբօրս ընծան... թան-
կագին գաւաթը... այդ սարսափելի է... (բաց է
անում ննջարանի դռները եւ տեսնում է Բիրիկ-
կինին): Այս, ով է այնտեղ, գողեր... Օգնեցէք...

ՆԱՍՏԻԱ.—Այ քեզ խայտառակութիւն:
Բիրիկի. — (մտնելով). Հանգստացէք, այդ ես
եմ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Ո՞վ էք դուք: Ինչու համար
էք իմ ննջարանում:

ԲԻՐԻԿԻ.—Ես ճշմարիտ... Ես ոչինչ... Ես
միայն անցնում էի:

ՆԱՍՏԻԱ.—Ճշմարիտ, ես մեղաւոր չեմ:
Բիրիկի. — Ես ճշմարիտ... Ես ոչինչ, ես միայն
անցնում էի:

ՆԱՍՏԻԱ.—Ճշմարիտ ես մեղաւոր չեմ:
Բիրիկի. — Եւ ոչ էլ ես:

ՄԱՐ. ՊԱՎ.—Նաստիա, ով է սա:

ՆԱՍՏԻԱ.—Ներեցէք տիկին, ճշմարիտ ես
մեղաւոր չեմ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Նաստիա, ով է սա:
Բիրիկի. (Նաստիային զանազան նշաններ է
անում):

ՆԱՍՏԻԱ.—Աա... սա... սա իմ նշանածն է:

ՄԱՐ. ՊԱՎ.—Նշանածը:

ԲԻՐԻԿԻ. (կողմը). Մորթեց անիծեալը:

ՆԱՍՏԻԱ.—Ազնիւ խօսք... իմ նշանածն է:
Դուք որ գնացիք երաժշտութիւն լսելու, ահա
Սիմիօն Իվանովիչն էլ եկաւ այստեղ. ես ասում
է ձեր պարոնների մօտ եմ եկել. ես ասում է
կամենում եմ որ բոլորը իմանան թէ ես ըն-
դորինի նշանածդ եմ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Ուրեմն դուք Նաստիայի նը-
շանածն էք:

ԲԻՐԻԿԻ.—Այսինքն... ես մի կողմից: (կողմը):

Այլ լիմար դրութիւն

ՆԱԾՈՒՅ. — Դէ լաւ Սիմիօն Իվանիչ, միք քաշվիլ. Սոքա առանց այն էլ վշտացած են... ես մերժեցի:

ՄԱՐ. ՊԵԿ.—Նա ձեզ մերժել է:

ԲԻԲԻԿԻԼ.—ՄԵՐԺԵԼ Է՛: Այս մերժել է. ես
խնդրեցի իսկ նա մերժեց, ես... (հազում է). առա-
ջին անգամն եմ այսպիսի յիմար դրութեան մէջ:

ՄԱՐ. ՊՂՎ.-Լաւ, լաւ. ես ձեզ կըհաշտեց-
նեմ: Ես շատ ուրախ եմ որ Նաստիային նշանածը
պատկառելի մարդ է և ոչ թէ երեխայ, նա ձեզ
հետ երջանիկ կը լինի:

ՆՈՍԻՒ. — Ուրեմն, աիկին, մեզ դուք ներսում էք:

Բիթիթլ. — (կողման). Նա ասում է «մեզ». այդ
արսափելի է:

ՄԱՐ. ՊԱՎ.—Ներում եմ և ինքս կը պատկեմ ձեզ։ Սորա դէմքը ինձ դուր է գալիս։ (Նորան) դու չես խմնեմ։

ԲԻՐԻԻԼ.՝ (այշած). Ալսինքն ալդինչպէս:

ՆԱՍՏԻԱ. —Ի՞նչ էք ասում, տիկին, սա ամենահին,

ՄԱՐ. ՊԱՎ.—Եւ շատ լաւ ես անում, այժմ
այդ ծառաների մէջ հաղուագիւտ բան է:

ՆԱՍԻԱ. — Այս, տիկին, սա ամենելին չէ
խմում... բոլորովին:

ԲԻՐԻԻԼ.—(ալշած). Ինձ հետ պուով է խօսում:

ՄԱՐ. ՊԱՎ.—Շատ ուրախ եմ, ես մինչև անգամ սորան կը թողնեմ մեզ մօտ: Մեզ վաղուց պէտք էր մի կրթուած ծառայ: Ահա ինչ Սկմիօն, առաջին ծառայութեան համար օդնիր այսօր Նատիային... դիր ինքնաեռը, պատրաստիր սեղանը: Բիթիկլ.—Ի՞նչ... ինքնաեռը:

ՄԱՐ. ՊԱՎ.—Այս... քեզ սովորացնելու կարիք չը կայ: Դու երկի ծառայել ես բարձր ընտանիքներում: Ուստի մօտ ես ծառայել.

Bible History.—B. C. 500.

ԱՎԵՐ. ՊԱՎ.—ԴՈւ... ինչ աղեան ես...

Բիրիիլ.—Ես ոչ ոքի մօտ չեմ ծառայել, ևս...

ՆԱԽԾԻԱ. — Սիմիօն Բվանիչի ինչու էք շպորտ-
վում: Աս, տիկին, ժողովարանումն է ծառայել...
անուիական ժողովարանում:

ՄԱՐ. ՊԱՎ.—Ա՞ս շատ գեղեցիկ։ Այդ լաւ
հիմնարկութիւն է։ Դէ, իսկ այժմ գնացէք և ձեր
գործը կատարեցէք... ախ, այո, Նաստիա, տուր
սորան պարոնի հին ֆրակը։ Դու Սիմիոն այսօր
կը ծառայես մեզ ֆրակով... մենք հիւրեր ու-
նինք... Նաստիա, տուր սորան նմանապէս և
սպիտակ ձեռնոցները... պարոնի թիստարկղի մէ-
ջըն է... այժմ գնա, Նաստիան քեզ բոլորը ցոյց
կը տայ։

ԲԻՐԻՒԻԼ.—(կողմը) Ես պատրաստ եմ գետինը մտնել:

ՆԱՍՏԻԱ. — ԴԵ ՍԻՄԻՕՆ ԻՎԱՆԻԿԻ ԳՆԱԳԵՔ:



ԲԻԲԻՒԼ. — Ո՞ւր: Ինչո՞ւ համար: ՆԱՍՏԻԱ. — Խոհանոց. ինքնաեռը դնելու... Դէ շարժուեցէք... ԲԻԲԻՒԼ: — Գնում եմ... (կողմը). Կը փախչեմ, անպատճառ կը փախչեմ... (զնում է աջ):

ՏԵՍԻԼ 6.

ՄԱՐ. ՊԱՎ. — (միայնակ) Ախ ինչպէս ուշախ եմ Նաստիայի փոխարէն, նորա դէմքը ինձ շատ է դուր գալիս, այնպէս համեստ է, այնպէս բարի, իսկ գլխաւորն է պատկառելի մարդ է. դիտէ ծառայել և ծառայել է Սնդիական ժողվարանում:

ՏԵՍԻԼ 7.

ՄԱՐԻԱ. ՊԱԿ. ԵՒ. ՈՒՏՈԶԿԻՆ.

ՈՒՏՈԶ. — (մտնելով) Դու արդէն տանն Յս, իսկ ես քեզ այգումն էի վնտրում. մեղ մօտ հիւրեր են գալիս. Պերեպեօլկինը իւր կնոջ հետ և կուրոչկինը, դու կարգադրել Յս:

ՄԱՐ. ՊԱՎ. — Հանգիստ եղէք խնդրեմ, այդ ձեր գործը չէ. բոլորը պատրաստ կըլինի առանց ձեր օգնութեան: Ախ այս, նախազգուշացնում եմ ձեզ, մեղ այսօր կըծառայէ նոր ծառան:



ՈՒՏՈԶ. — Ծառայ. այդ ի՞նչ նորութիւն է: ՄԱՐԻ. ՊԱՎ. — Խնդրեմ առանց հանդիմանութեան, նա Նաստիայի նշանածն է: Ես նորան վերցը մեղ մօտ և նա այսօրուայ հիւրերին կը ծառայէ:

ՈՒՏՈԶ. — Ե՛յդ էր պակաս, նոր ծախսեր: ՄԱՐ. ՊԱՎ. — Ձեր ոսճիկից չէ, ձեր ստացուած 35 բուբլին մի նոր գլխարկի գին է միայն:

ՈՒՏՈԶ. — Ես կարծեմ մեղաւոր չեմ որ ըստանում եմ 35 բուբլի:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ոչ, մեղաւոր էք: Դուք չէիք կամենում խոնարհութիւն ցոյց տալ ձեր մեծաւորին: Մարդկանց հետ չէք իմանում վարուել: Ինչո՞ւ մինչև այժմ դուք չէք ծանօթացը ել ինձ ձեր կառավարչի հետ. ինչո՞ւ դուք նորան մեղ մօտ չէք հրաւիրում, ինչո՞ւ:

ՈՒՏՈԶ. — Որովհեաև իվան իվանիչը ոչ մի տեղ չէ լինում: Բիրիւլկինը խորշում է հասրակութիւնից և ծանոթութիւնից:

ՄԱՐ. ՊԱՎ. — Գատարկ բան է. այդ նշանակութիւն չունի: Այս բոպէիս կըգրեմ մի հըրաւեր Բիրիւլկինին և կուզարկեմ Սիմեօնի ձեռքով, իսկ դուք գնացէք քաղցրավենիքի յետեկց, դոնէ մի բանով պետքական եղէք:

ՈՒՏՈԶ. — Քո կարծիքով ուրեմն ես երբէք և ոչ մի բանի պէտք չեմ, դու ինձ ստորացնում

ես միայն այն պատճառով որ ես 35 բուբլի եմ
ստանում... այդ լաւ չէ:

ՄԱՐ. ՊԱՎ.—ինչպէս...:

ՈՒՏՈՉ.—Գնում եմ, գնում... ի՞նչ տեսակ
քաղցրավէնիք գնեմ:

ՄԱՐ. ՊԱՎ.—կեռաս:

ՈՒՏՈՉ.—Կորիզներնի:

ՄԱՐԻ. ՊԱՎ. Ցիմար:

ՈՒՏՈՉ.—Ես լուսմ եմ այն պատճառով որ
35 բուբլի եմ ստանում:

ՏԵՍԻԼ 8.

ՄԱՐԻԱ. ՊԱԻ. (ԱՌԱՆՁԻՆ)

ՄԱՐ. ՊԱՎ.—Կը գրեմ Բիբիւլինին մի հը-
րաւիրատոմս, թող տեսնէ մենք ինչպէս ենք ապ-
րում և հաւատացած եմ որ ընթըրիքից յետոյ նա
կաւելացնէ ամուսնուս ոռափիք:

ՏԵՍԻԼ 9.

ՄԱՐԻ ՊԱԻ. ԵՒ ԲԻՐԻԻԼԿԻՆ

ԲԻՐԻԻԼ.—Ոչ մի հնարք չ'ըկայ փախչելու,
այն անպիտան աղջիկը հանեց վրայիցս զենսաս,
հազցրեց ուժով ֆրակը և ոչինչ չէ ուզում լը-

սէլ: Երեք բուբլին չվերցրեց. բայց կըփախչեմ,
անպատճառ կըփախչեմ...

ՄԱՐ. ՊԱՎ. —Ա՛, դու արդէն պատրաստ ես.—
Թող մի նայեմ լաւ է նստած:

ԲԻՐԻԻԼ.—Նստած է: (Կողմը) կողքերքը կը
փշրէի:

ՄԱՐ. ՊԱՎ.—Մակայն Սիմիօն շտապեցէք,
պէտք է սեղանը պատրաստել... դիր տհա այս-
տեղ, իսկ ծաղիկները, այնաեղ:

ԲԻՐԻԻԼ.—Որտեղ, ինչու:

ՄԱՐ. ՊԱՎ.—Պատշգամբը. իսկ սեղանը այս-
տեղ:

ԲԻՐԻԻԼ.—Որտեղ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Այս ինչ ապուշն է: Այստեղ, դէ
շարժուցէք, դուք ուղղակի փալաս էք:

ԲԻՐԻԻԼ. Փալաս. (Կողմը): Ես չըգիտեմ ձըշ-
մարիտ ինչ անեմ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Է, ինչ էք բերանդ բաց արել
և կանգնել փայտի կտորի նման—վերցրէք ծա-
ղիկները:

ԲԻՐԻԻԼ.—(վերցնում է եւ վայր է ճգում ծա-
ղիկներից մէկը): Ֆռու, սատանան տանի:

ՄԱՐ. ՊԱՎ. Արդ ի՞նչ արիք, ի՞նչ արիք իմ
սիրած ծաղիկս, այդ անտանելի է, անտանելի...
ինչու էք այդպէս բռնելո դրէք յատակի վրայ:

ԲԻՐԻԻԼ.—(վայր ճգելով բոլոր ծաղիկնե-
րը): Թիւ գետինը մտնէք:

22

ՄԱՐ. ՊԱՎ.—ՍԻՄԻՈՆ Դուք խելագարուել
էք: Այդ ի՞նչ արիք: Լորի, գնացէք վերցրէք ավե-
լը և մաքըրեցէք այստեղ, պատրաստեցէք սեղա-
լը, ժողովեցէք յատակից կտորտանքը և հող...
ոչ դուք ինչպէս երկում է բացի ժողովարանից
ոչ մի տեղ չէք ծառայել:

յել եմ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Լուեցէք. Նաստիա, Նաստիա:

ՏԵՍԻԼ 10

ՆՈՅՆՔ ԵՒ ՆԱՍՏԻԱ

ՆԱՍՏԻԱ.—Ի՞նչ կը հրամայէք:
ՄԱՐ. ՊԱՎ.—Վերցրէք նամակը և ուղար-
կեցէք իվանիվանովիչ Բիրիւլկինի մօտ... շուտով:
ԲԻՐԻԻԼ.—(ապշաճ). Ի՞նչ, ինչպէս:
ՆԱՍՏԻԱ.—Շատ բարի. (Բիրիլ). ՍԻՄԻՈՆ
իվանիչ նայեցէք խոհանոցին (դնում է):

ՏԵՍԻԼ 11.

ՄԱՐ. ՊԱՎ. ԵՒ ԲԻՐԻԻԼ

ՄԱՐ. ՊԱՎ. — Ֆաւ, սաստիկ շոքել եմ,
գնամ գոնէ պուղը ցանեմ երեսիս (զս-
դում է):

ՏԵՍԻԼ 12.

ԲԻՐԻԻԼ. ԱՌԱՆՁԻՒՆ

ԲԻՐԻԻԼ.—Ի՞նձ նամակ: Ոչինչ չեմ հաս-
կանում! Մի միջոց կայ միայն... փախչել, փախ-
չել, լինի այդ ֆրակով բայց փախչել (ուզում է
զնալ):

ՏԵՍԻԼ 13.

ԲԻՐԻԻԼ ԵՒ ՈՒՏՈՉԿԻՆ (Քաղցրաւէնիքով)

ՈՒՏՈՉ.—Ահա քաղցրավենիքը. Ալ ուժն
եմ տեսնում:

ԲԻՐԻԻԼ.—Ուսոչկին
ՈՒՏՈՉ.—Իվանիչ իվանիչ:
ԲԻՐԻԻԼ.—Ես...ես... ես դուք...դուք...
ՈՒՏՈՉ.—Դուք...դուք...ես...ես...
ԲԻՐԻԻԼ,—(Շփոթուած). Անցնում էի փո-
ղցով... իմացայ որ դուք էք. կարծում էի որ
ես եմ... դուրս է գալիս որ դուք էք. (կողմը):
Ուժ քրաինք թափեց վրաս:
ՈՒՏՈՉ.—Ալ իվան իվանիչ, որքան ուրախ
եմ որ եկել էք մեզ մօտ, ի դէպս մենք այսօք
փոքրիկ երեկոյթ ունենք, մեզ մօտ հիւրեր են
լինելու: Մենք ձեզ համար վինա կըսարգենք...
իսկ կիսս ինչպէս կուրախանայ, միշտ խնդրում
էք ծանօթացնել իվան իվանովիչի հետ:

ԲԻՐԻՒԼ. — Ի՞նչպէս, դուք այսօր հիւրեր ու-
նի՞ք

ՈՒԾՈԶ. — Այո, մեր ծառայողներն են Պե-
րեպեռլկինը, Կուրոչկինը կնոջ հետ, նոքա այն-
պէս ուրախ կըլինեն ձեզ հետ թուղթ խաղալ
իվան իվանովիչ։ Չո՞է որ դուք այնպիսի մի հա-
զուագիւտ հիւր էք... և ահա ինչ երջանկութիւն։
ԲԻՐԻՒԼ. — Այս սատանան գիտէ թէ ինչ
խայառակութիւն է դուրս գալիս։

ՈՒԾՈԶ. — Դուք իվան իվանովիչ մեր տանը
եղէք այնպէս ինչպէս ձեր տանը. միք քաշուիլ,
եթէ դուք յոգնել էք խնդրեմ համեցէք իմ առանձ-
նասենեակը հանգստանալու։ Իվան իվանովիչ,
դուք ձեր ֆրակը թողոտել էք, թոյլ տուէք մաք-
րեմ։

ԲԻՐԻՒԼ. — Նեղութիւն միք կրիլ, ոչինչ, ես
ինքս... ես չեմ սիրում նեղութիւն պատճառել
ուրիշներին։

ՈՒԾՈԶ. — Դուք, իվան իվանովիչ, ոչ ոքին
նեղութիւն չէք պատճառում... համեցէք իմ ա-
ռանձնասենեակը առանց քաշուելու։

ԲԻՐԻՒԼ. — Շնորհակալ եմ. (կողմը) Պէտք
է աւելացնել սոճիկը։

ՈՒԾՈԶ — Համեցէք։

ԲԻՐԻՒԼ. — (կողմը) Այս բոպէիս կը փախ-
չեմ (զնում է)։

ՏԵՍԻԼ 14.

ՈՒԾՈԶԿԻՆ ԱՌԱՆՁԻՆ

ՈՒԾՈԶ. — Ախ ինչ բարի և հասարակ մարդ-
է։ Որքան զանազանութիւն կայ երբ նա ծառա-
յութեան մէջն է և տանը։

ՏԵՍԻԼ 15.

ՈՒԾՈԶ. ԵԽ ՄԱՐ. ՊԱՎԼՈՎ.

ՄԱՐ. ՊԱՎ. — ԲԵՐԻՔ վերջապէս քաղցրա-
վենիքը։

ՈՒԾՈԶ. — ԵՐԿՈւ աման, բալի և մո-
րենի։

ՄԱՐ. ՊԱՎ. — Իսկ ես ուղարկեցի...! Իվան
իվանովիչին հրաւիրատոմա։

ՈՒԾՈԶ. — Իվան իվանովիչին։ Այդ ասենք
բոլորովին աւելորդ է։

ՄԱՐ. ՊԱՎ. — Դարձեալ յանդիմանութիւն։
Դարձեալ դժգոհութիւն։

ՈՒԾՈԶ. — Հաւատացնում եմ քեզ որ աւե-
լորդ է... որովհետև իվան իվանովիչը առանց
հրաւերի էլ... ախ նա այնպէս բարի է, ֆրակով է...
ինձ ձեռք մեկնեց..., այնպէս բարի է։

ՄԱՐ. ՊԱՎ. — Ի՞նչ էք ասում, ի՞նչեր էք
դուրս տալիս, ես ոչինչ չեմ հականում։

ՈՒԾՈԶ. — Այստեղ է նա, այստեղ... ինքն

է եկել...առանց հրաւերքի: Ես լսողոցի ձաշից
առաջ նորան հանգստանալ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Ի՞նչպէս, իվան իվանովիչը
այսուեղ է: Այդ անկարելի է. ի՞նչ երջանկու-
թիւն իսկ ես այնպէս եմ կարմրել...Բերեք ինձ
պուդրա:

ՈՒՏՕԶ.—Բայց ես կուզէի որ...

ՄԱՐ. ՊԱՎ.—Բերեք ինձ պուդրա:

ՈՒՏՕԶԿ.—Գնում եմ, գնում... այդ բոլորը
նրա համար է որ 35 լուբլի եմ ստանում:

ՏԵՍԻԼ 16.

ՄԱՐ. ՊԱՎ. ԱՌԱՆՁԻՆ

ՄԱՐ. ՊԱՎ.—Իվան իվանովիչը մեզ մօտ է
և ինչ հարմար ժամանակն է եկել, ես պատուի-
րել եմ ճուտեր և մորենու պաղպաղակ... չորս
տեսակ կերակուր... Սիմեօն, Սիմեօն ուր էք կո-
րել:

ՏԵՍԻԼ 17.

ՄԱՐ. ՊԱՎ. ԵԻ ԲԻՐԻԻԼԿԻՆ

ԲԻՐԻԻԼ.—Ուզում էի փախչել... բայց ոչ
մի գուռ չկար, մի պատուհան էր... այն էլ հա-
ւաբունին էր նայում. (տեսն. Մար. Պավ.) Դար-
ձեալ նա:

ՄԱՐ. ՊԱՎ. Սիմեօն այս ուր էիք կորել:
Այս րոպէս հիւրերը պիտի գան, սեղանը պատ-
րաստ չէ... ինքնաեռը չէ գըուած:

ԲԻՐԻԻԼ.—(կողմը): Այս կինը ինձ խելա-
գարութեան կընացնի:

ՄԱՐ. ՊԱՎ.—Ի՞նչ էք գերանի նման ցցուել...
Ես նաստիային ուղարկեցի նամակով Բիրիւլ-
կինի մօտ:

ԲԻՐԻԻԼ.—Ինձ մօտ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Բիրիւլկինի և ոչ թէ ձեզ մօտ:
ԲԻՐԻԻԼ. (կողմը) Աչքերս մթնում են այլ ես
ոչինչ չեմ տեսնում:

ՄԱՐ. ՊԱՎ.—Կէս ժամից յետոյ հիւրերը
կընաւաքուեն և ոչինչ պատրաստ չէ... Սիմեօն
ինչ էք տարապել... գնացէք խոհանոց և ասա-
ցէք որ ինքնաեռը դնեն... շուտ... շտապեցէք
վերջապէս:

ԲԻՐԻԻԼ.—(զնալով) Կերթամ խոհանոց և
կըկաշառեմ խոհարարուհուն:

ՏԵՍԻԼ 18.

ՄԱՐ. ՊԱՎ. ԱՌԱՆՁԻՆ

ՄԱՐ. ՊԱՎ.—Ո՞չ, վաղը և ետ դուրս կա-
նեմ այս յիմարին: Եւ ինչ ապուշ ու զզուելիք
դէմք ունի... երեսը սափրած. առանց բեխերի:

ՏԵՍԻԼ 19.

ՄԱՐ. ՊԱՎ. ԵՒ ՈՒՏՕԶԿԻՆ

ՈՒՏՕԶԿԻՆ.—Ահա քեզ պուդրան, Մանեա: Ախ ինչպէս ես կարմրել:

ՄԱՐ. ՊԱՎ.—Ի հարկէ: Այս Ախմեծնը ամենախն պէտք չէ: Ոչինչ չէ իմանում: Այս բոպէիս հիւրեղը կը գան, իսկ մեր սեղանը դեռ պատրաստ չէ: և մեղաւորը դուք եք...

ՈՒՏՕԶ.—Ես ի՞նչով եմ մեղաւոր:

ՄԱՐ. ՊԱՎ.—Միշտ դուք եք մեղաւոր: Օք, ես սաստիկ քրտնել եմ. գնամ մի փոքր, ողէկոլոնով սրսկվեմ (գնում է):

ՏԵՍԻԼ 20.

ՈՒՏՕԶԿԻՆ ԱՌԱՆՁԻՆ

ՈՒՏՕԶ.—Միշտ ես եմ մեղաւորը և այդ միայն այն պատճառով որ ամսական ստանում եմ 35 բուբլի (նստած է):

ՏԵՍԻԼ 21.

ՈՒՏՕԶԿԻՆ ԵՒ ԲԻՐԻԻԼԿԻՆ (ԽՆՔՆԱԵՌՈՒ)

ԲԻՐԻԻԼ.—Ո՞չ, ես այստեղից չեմ ազատուելու... Անիծեալ խոհարարուհին տուեց այս ինքնաեղը ձեռքս, փրթիաց, դռները փակեց քթիս առաջ և փախաւ... Այստեղ մի ինչ որ

դաւանանք է... ամբողջ մի գաւանանք (տես՝ նելով Ռւտօշկինին), Բռնուեցայ. (ինքնաեղը պահում է իր յետելը):

ՈՒՏՈԶ.—Իվան Իվանիչ... Դուք արդէն վեր էք կացել. հանգիստ էիք: Մլակները չեին արդեօք ձեզ նեղացնում:

ԲԻՐԻԻԼ.—Ոչ, ոչինչ... շատ լաւ էր...: Այսպէս հանգիստ էի... զով (ըսնելով ինքնաեղը): Ահա սատանան տանի. ամբողջ ձեռքս այրուեց:

ՈՒՏՕԶ.—Այդ ինչ է պատահել ձեզ, Իվան Իվանիչ: Խնքնաե՞ու:

ԲԻՐԻԻԼ.—Այո, ինքնաեռ է և դուք, դուք... Փուշ ես մեռայ (ընկնում է քազկաթորի մլայ):

ՈՒՏՕԶԿ.—Իվան, Իվանիչ, դուք թէյ եք կամենում: և ի՞նչու դուք չըհրամայեցիք:

ԲԻՐԻԻԼ.—Բայց ո՞ւմ, բոլորը ուր որ փախել են... Աղախինը գնացել է նամակով... ծառան տանը չէ... ես ուզեցի թէյ, և ահա ես գրնացի, իսկ այստեղ խոհարարուհին... և ահա, ես այրուեցի...

ՈՒՏՕԶ.—Իվան Իվանիչ, ներեցէք խնդրեմ... այդ բոլորը կինս է... նա թէ մեղաւորը... այսօր մի ծառայ է վարձել և առանց ինձ, մի ծոյլին, յիմարին, հարբեցողի մէկին... միայն ժողովարաննելումն է ծառայել, գող է և ոչ մի բանի պէտք չէ: Ես ձեզ համար այս բոպէիս բոլորը կըրերեմ և թէյ և քաղցրաւենիք անյոդ կացէք:

Այդ բոլորը ծառան է մեղաւոր: Այս գողը, հար-
քեցողը, յիմարը և այնպիսի մի դէմք ունի որ
թքել անգամ չես ուզի: Այս բոպէիս ես նորան
վկին տալով դուրս կանեմ (զնում է):

ՏԵՍԻԼ 22.

ԲԻՐԻԻԼԿԻՆ (առանձին)

ԲԻՐԻԻԼ.—(ընկճուած ճայնով). Իմ կեանքու-
մըս 8 բանկային գրասենեակներ է տրաքվել և
ես այսպիսի վրդոված չեմ եղել, ինչպէս այժմ:
Այս ի՞նչ է, սատանան տանի: Ես այստեղ ընդա-
մենը մի կէս ժամ է ինչ որ եկել եմ և ինձ
ֆրակ են հագցըել, հրամայում են ծաղիկներ տե-
ղափոխել, ինքնաեռը բերել, իսկ այս պարոնը
որը ծառայում է ինձ մօտ գրասենեակում և
ստանում է միայն 35 ըուբլի ամսական, ասում
է ինձ, կառավարչին, որ ես գող եմ, հարբեցող,
յիմար և ուզում է թքել երեսիս: Ոչ պէտք է
փախչել այստեղից (ուզում է զնալ):

ՏԵՍԻԼ 23.

ԲԻՐԻԻԼ. ԵՒ ՄԱՐԻ ՊԱՎ.

ՄԱՐ. ՊԱՎ.—Այդ հւը էք գնում... Սպասե-
ցէք: Ուր է ինքնաեռը: Ուր էք տարել: Ի՞նչու
սեղանը պատրաստ չէ:

Ի ԻՐԻԻԼ.—(կողմը). Սա ինձ կըսպանի...
Մինչև անգամ խօսել չեմ կարողանում:

ՄԱՐ. ՊԱՎ.—Վերջապէս դուք ինձ համբե-
րութիւնից դուրս կը բերէք: Մի նայեցէք ձեզ
վերայինչի էք նման... մազերը փշաքաղուել, դուք
մինչև անգամ չէք ածիլուելո... Այս բոպէիս գը-
նացէք և ածիլուեցէք, նաստիան վերադարձել է
և կարող է առանց ձեզ սեղան պատրաստել...
Դուք միայն կըծառայէք սեղանին:

ԲԻՐԻԻԼ.—(կողմը). Ես պիտի ծառայեմ իմ
ծառայողին, երբէք:

ՄԱՐ. ՊԱՎ.—Գնացէք պարոնի սենեակը,
վերցըէք ածելին և սափրվեցէք... ապա թէ ոչ
ձեր երեսը լեզակի գոյն է,

ԲԻՐԻԻԼ.—Ես կարծեմ կըկերցնեմ սծելին և
բողազս դուրս կըկարեմ: Այդ է միայն լմ փըր-
կութեան միջոցը:

ՄԱՐ. ՊԱՎ.—Դէն,

ԲԻՐԻԻԼ.—(կողմը). Ի՞նչ արած, պէտք է
սափրուել (զնում է):

ՏԵՍԻԼ 24.

ՄԱՐ. ՊԱՎ. (առանձին)

ՄԱՐ. ՊԱՎ.—Դուրս, վաղ և ետ դուրս կա-
նեմ... ինչ որ ալուշ է եղել... յիմար:

ՏԵՍԻԼ 25.

ՄԱՐԻ. ՊԱՎ. ԵՒ ՈՒՏՈԶԿԻՆ (ԹԷՅԻ բաժակը ձեռքին)

ՈՒՏՈԶ.—Ահա և թէյ:
ՄԱՐԻ. ՊԱՎ.—Դու այդ սրտեղից, այդ
ինչ է:
ՈՒՏՈԶ.—ԵՐԿԱԿԱՅԻՐ, ԻՎԱՆ ԻՎԱՆԻՉԸ ինքն
է գնացել ինքնաեռը բերելու, թէյ է ուզեցել
խմել իսկ տանը ոչ ոք չէ եղել... բոլորը փա-
խել են:
ՄԱՐ. ՊԱՎ.—Այդ էր պակաս... խայտա-
ռակութիւն:

ՈՒՏՈԶ.—Դու անյոգ եղիր, ես ամեն բան
կարգի բերի; Ահա բերել եմ թէյն էլ և քաղց-
րավենիքն էլ... բայց ուր է իվան իվանովիչը:
ՊԱՎԻ. ՊԱՎ.—Իսկ ես ինչ գիտեմ, ես նո-
րան մինչև անգամ դեռ չեմ տեսել: Ես ամբողջ
ժամանակ կռվում էի քո ծառայի հետ... շատ
ժամանակալ եմ, հիանալի ծառայ էք վարձել ինձ
համար...

ՈՒՏՈԶ.—Ես, ես եմ վարձել...
ՄԱՐԻ. ՊԱՎ.—Օնտաշ է, կռպիտ, յիմար և
ոչինչ չը գիտէ, իսկ դուք... «վերցրու, վերց-
րու... Նաստիայի նշանածն է»:
ՈՒՏՈԶ.—Ես, ես եմ տսել, Մաքովս անգամ
չի անցել:
ՊԱՎ. ՊԱՎ.—Լուցեցէք, անմիջապէս դուրս

արիք նորան և մի ուրիշին վարձեցիք... Ուզ-
ինչպէս եմ յոցնել (զնում է):

ՏԵՍԻԼ 26.

ՈՒՏՈԶԿԻՆ ԱՌԱՆՁԻՆ

ՈՒՏՈԶ.—Դարձեալ ես եմ մեղաւորը: Զէ
ինչպէս այդ իվան իվանովիչը... երկու տարի
ես նորա մօտ ծառայում եմ և չէի իմանում որ
նա այդպէս թէյ է սիրում:

ՏԵՍԻԼ 27.

ՈՒՏՈԶԿԻՆ ԵՒ ԲԻՐԻԻԼԿԻՆ

ԲԻՐԻԻԼ.—(ածելին ծեռքին) Ֆու, սատա-
նան տանի: Անիծեալը այնպէս չանգուտեց երե-
սը որ...

ՈՒՏՈԶ.—Իվան իվանիչ, այդ ինչ է պատա-
հել ձեզ, ձեր երեսը սապնու է:

ԲԻՐԻԻԼ.—Բոնուեցայ: Այս ես ուզում էի
սափրուել... Զէ որ դուք հիւրեր ունիք... վեցըրի
ածելին, բայց երեսս չանգուտեցի... Այս ածելի
չէ այլ սղոց է:

ՈՒՏՈԶ.—Ես ինչ դժբախառութիւն: Ես այս
ըսպէիս ձեզ համար ջուր և երեսսը կըքերեմ,
անհոգ եղէք իվան իվանիչ... Այդ ոչինչ... Ես
իսկոյն կըքերեմ (զնում է):

ՏԵՍԻԼ 28.

ԲԻՐԻԻԼԿԻՆ ԱՌԱՆՁԻՆ

ԲԻՐԻԻԼԿԻՆ.—Վերջապէս ևս կարող եմ փախչել: Ուր է իմ գլխարկու: (ուզում է մօտենալ ոքոներին):

ՏԵՍԻԼ 29.

ԲԻՐԻԻԼ ԵՒ ՄԱՐ. ՊԱՎ.

ՄԱՐ. ՊԱՎ.—Վերջապէս դուք պատրաստէք: Աավրուեցի՞ք:

ԲԻՐԻԻԼ.—Դարձեալ նա, սարսափելի կին է սա (նստում է բազմոցի վրայ):

ՄԱՐ. ՊԱՎ.—Այդ ի՞նչ է, ի՞նչպէս էք համարձակւում նստել:

ԲԻՐԻԻԼ.—Ես չեմ կարող, ոտքերս ծալւում են:

ՄԱՐ. ՊԱՎ.—Այ յանդուգն... ինչի՞ նման էք, ձեր ամբողջ երեսը սապնոտ է... կտրել էք երեսներդ ի՞նչ է:

ԲԻՐԻԻԼ.—Այս, ուզում էի ինձ մորթել, տիրուհի:

ՄԱՐ. ՊԱՎ.—Այս բոպէիս գնացէք և ձեր այդ յիմար դէմքը լուացէք, որ ծառայէք սեղանին:

ԲԻՐԻԻԼ.—Չայն չեմ հանիլ, կեզուս կապուել է (սփոռոցվ սրբում է երեսը):

ՄԱՐ. ՊԱՎ.—Այդ ի՞նչ էք անում իմ սիրած սփոռցը:

ԲԻՐԻԻԼ.—Ես այդ սրտեղից գիտեմ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Դնւրս: Այս բոպէիս, ձեր ըստուերն անգամ չըլինի այստեղ: Սա անտանելի է:

ԲԻՐԻԻԼ.—Գնում եմ, գնում... Այդպէս միք բոռալ տիրուհի... ևս դեռ ևս ինձ չեմ մորթել, ևս դեռ ևս կարող եմ խիստ լինել:

ՄԱՐ. ՊԱՎ.—Զը համարձակուէք ինձ հետ կոպիտ խօսել: Նաստիա, Նաստիա:

ՏԵՍԻԼ 30.

ՆՈՅՆՔ ԵՒ ՆԱՍՏԻԱ

ՄԱՐ. ՊԱՎ.—Նաստիա, կանչիր այստեղ դըռնապանին: Այս բոպէիս դուրս:

ՆԱՍՏԻԱ.—Է, ի՞նչ կասէք Սիմեօն Իվանիչ, համեցէք դուրս:

ԲԻՐԻԻԼ.—Ահա քեզ 5 բուրլի միայն լոիր:

ՆԱՍՏԻԱ.—Հանեցէք ֆրակը, Սիմեօն Իվանիչ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Այս... այս... հանեցէք ֆրակը և ձեռնոցները:

ԲԻՐԻԻԼ.—Անհոգ եղէք, հետո չեմ տանիլ, ձերը ինձ ոչ մի բան հարկաւոր չէ:

ՄԱՐ. ՊԱՎ.—Իսկ իրան դուրս... այս ըստ-
պէիս դուրս:

ՆԱՍՏԻԱ. — Հանեցէք, Սիմեօն Իվանիչ, խայ-
տառակուեցաք այդ պառաւ ժամանակներդ. (հա-
նում է ֆրակը):

ՏԵՍԻԼ Յ1.

ՆՈՅՆՔ ԵՒ ՈՒՏՈՉԿԻՆ (բաժակը ձեռքին)

ՈՒՏՈՉ. — Իվան Իվանիչ ահա ջուրը և երես-
ոբիչը:

ԲԻԲԻԻԼ. — Կորայ... բոլորը կը բացուի
(ընկնում է բազմոցի վրայ):

ՄԱՐ. ՊԱՎ. ԻՆՉՎԵԱ: Այդ ի՞նչ ասաւ
ՆԱՍՏԻԱ. — Այ քեզ բան

ՈՒՏՈՉ. — Իվան Իվանովիչ: Դուք ձեղ վատ
էք զգում, հանեցէք ձեր բաճկոնակը... Նաստիա
տուր իմ խալաթը, Մանիչկա, ուղարկիր բժշկի
յետնից, Իվան Իվանիչը ուշից գնում է: Ուշի
եկէք, Իվան Իվանիչ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ուրեմն սա Իվան Իվանովիչն է:

ՈՒՏՈՉ. — Այո, ի հարկէ... իմ մեծաւորը:

ՄԱՐ. ՊԱՎ. — Տէր Աստուած, իսկ ես նորան
ծառայի տեղ լնդունեցի:

ՈՒՏՈՉ. — Ի՞նչպէս, Իվան Իվանովիչին ծա-
ռայի տեղ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ես նորան ամբողջ մի ժամ

հայհոյում էի. դուրս արի. տէր Աստուած այս
ի՞նչ եմ արել:

ՈՒՏՈՉ. — Սիրտս, բռնեցէք ինձ, Նաստիա
ջուր, Իվան Իվանիչ խղճացէք, ներեցէք, իմ կինս
մանկութիւնից...ի բնէ հիւանդ է... ժառանգա-
կան է... դորա մեծ մայրը գժանոցումն է:

ՄԱՐ. ՊԱՎ. — Իվան Իվանիչ, ներեցէք, Ես
ճշմարիտ մեղաւոր չեմ... այս բոլորի պատճառը
Նաստեան է:

ՆԱՍՏԻԱ. — Ներեցէք պարոն, այդ ես եմ մե-
զաւորը:

ԲԻԲԻԻԼ. — Գիտեմ, գիտեմ... բայց թան-
գագին համբոյը էր:

ՎԱՐԱԳՈՅՐ

ՑԱՆԿԱԼԻՆ ԵՒ ԱՍԹԱԵԼԻՆ

Կօմեղիա 1 wrwr. Վ. Ռիչելովի

፩፻፭፻

Պ. ԱՐԱՔՍԵԱՆԻ

ԳՈՐԾՅԱՂ ԱՆՁԻՆՔ

ՆԵՆԱՐՈԿՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՎԻԶ, ԻՐԻՏԱՍԱՐԴ

գիտնական:

ՕԼԻԱ, սորա քոյլը 14 տարեկան:

ԿՈՄՄ ԻԶՎԱԴԻԼՈՎ, ՆԵՆԱՐՈԿՈՎԻ ԱՆԵՐԸ, բարձր

դիրք ունեցող անձ:

ԿՈՄՄՈՒՀԻ ԻԶՎԱԴԻԼՈՎԱ, սորա կինը:

ՊՐՈՖԵՍՍՈՐ:

ԴԱՅԵԱԿ:

ԾԱՌԱՅ:

Գործողութիւնը կատարում է Պետերբուրգում, ներկայ ժամանակներում. միջակ կահատրուած հիւրասենեակ. ղոներ—ձախ տանում է դէպի ննշարանը, աջ—զրասենեակը եւ ղիւացին սեղանատուն բոլոր ղոները փակ են:

ՏԵՍԻԼ Ա.

ՆԵՆԱՐՈԿՈՎ ԵՒ ԿՈՄՄՈՒՀԻ

ՆԵՆԱՐՈԿՈՎ.—(անհարթերութեամբ ման է զայիս զորգի վերայ, խօսում է զղային, բայց շարունակ կիսածայն). Զեմ հասկանում... ամենենին չեմ հասկանում, կոմսուհի, թէ ի՞նչու դուք թոյլ չէք տալիս ինձ ներկայ գտնուել այստեղ:

ԿՈՄՄՈՒՀԻ—(նստած է ռազկաթոռում. Խօսում է իւր փեսայից աւելի բարձր, երբեմն մինչեւ անզամ բարձրացնելով ձայնը): Ես վաղուց արդէն համոզուեցի, որ դուք շատ բան չէք հասկանում... ի՞նչ արած: Դժբախտաբար դուք ապրում եք մեր շրջանում, ուրեմն հնագանդուեցէք սորա օրէնքներին—չըհասկանալով...

ՆԵՆԱՐՈԿ.—Նախ և առաջ այդ ազատութեան ձնշումն է... և անձի...

ԿՈՄՄՈՒՀԻ—Ես այդ մօդային և յիմար խօսքերից ոչինչ չեմ հասկանում:

ՆԵՆԱՐ. — Վերջապէս... երբ մի մարդու կինը
տանջւում է, ամուսինը պէտք է նորա մօտ լինի
որ...

ԿՈՄՄՈՒՀԻՀԻ — Միայն ոամիկների շրջաննե-
րումն է ընդունուած, որ ամուսինը ներկայ է լի-
նում այդ գործողութեան ժամանակ...

ՆԵՆԱՐՕԿ. — Եւինքը, էլենան, վերջապէս ինձ
խնդրեց որ ես չըհեռանամ նորանից...

ԿՈՄՄՈՒՀԻՀԻ — Էլենան երիտասարդ է... նա
ինքը չէ հասկանում ի՞նչ է խնդրում...

ՆԵՆԱՐ. — Շատ լաւ է հասկանում: Իսկ դուք
դիտմամբ փակել էք դոները... չեմ կարող ես
աղմուկ հանել... բաղիսել, կամ ոյժով ներս մըտ-
նել...

ԿՈՄՄՈՒՀԻՀԻ — Ա՝ յդ էք պակաս: Սննուի եղէք,
ամեն բան կարգին կը ինի: Այստեղ պրօֆես-
սօրն է, Աննա Բագրատովնան և ձեր դայեակը...

ՆԵՆԱՐ. — Բայց ես կարող էի օգտակար
լինել... հասկանում էք, օգնութեան գալ... բա-
րոյական օգնութեան:

ԿՈՄՄՈՒՀԻՀԻ. — Միք բոռալ: Դուք կը սպանէք
իմ աղջկան... Դուք միայն արգելք կը ինէիք այն-
տեղ...

ՆԵՆԱՐ. — Ամուսինը երբէք արգելք չի կա-
րող լինել իւր կնոջ համար...

ԿՈՄՄՈՒՀԻՀԻ — Ես ասում եմ որ ձեր բոլոր
դատողութիւններ...

ՆԵՆԱՐ. — Այս, ես այս ըոպէիս կուզէի ոամիկ
լինել, եթէ դուք միայն իրաւունք էք տալիս այդ
դասակարգին մարդկային զգացումներ ունենալ:
(աղերսանօք) Թոյլ տուէք ինձ անցնել այնտեղ...
այժմ երկի արդէն բոլորը վերջացած է...

ԿՈՄՄՈՒՀԻՀԻ — Երբ բոլորը վերջացած լինի
ձեզ կը կանչեն... ինչպէս միշտ էլ լինում է
պատուաւոր մարդկանց մէջ...

ՆԵՆԱՐ. — Շատ ափսոս, որ ես պատուաւոր
մարդ եմ:

ԿՈՄՄՈՒՀԻՀԻ — Դուք կարծեմ իւելքի վերայ
չէք...

ՆԵՆԱՐ. — Զէ որ եթէ ես անպատիւ մարդ
լինէի, ես արդէն իմացած կը լինէի թէ ի՞նչ ու-
նիմ. տղայ թէ աղջիկ: Տղայ, փոքրիկ նենարօ-
կով... Պետեա... Պետրուշկա...

ԿՈՄՄՈՒՀԻՀԻ — Աւելի լաւ է ասէք — Պետ-
րուսա. ինչպէս գոնապաններն են անուանում...
ոամիկ... և միք բոռալ: Դուք կը սպանէք իմ
աղջկան...

ՆԵՆԱՐ. — Բայց կոմսուհի, կարծեմ ես ձե-
ղանից ցած եմ խօսում: Հասկացէք վերջապէս:
Երէք տարի է ես ամուսնացած եմ և փափա-
կում եմ երեխայ ունենալ, տղայ... Թողէք, ի
սէք Աստուծոյ... երեակայէք վերջապէս մի 5 ըո-
պէյով որ մենք ոամիկ ենք... և ես, և էլենան,
և դուք...

ԿՈՄՄՈՒՀՀԻՒՆ—Այդ արդէն—միլլ պարզօն—
ես ինձ չեմ կարող երևակայել կէս վայրկեան
անգամ...

ՆԵՆԱՐ.—Երանի տղայ լինի, Պետքուխա...
ներողութիւն, ես ուզում էի ասել—Պիէր: Սա-
կայն ոչ, ես այդ չէի ուզում ասել..., Պիէրը—
քար է..., հացի փոխարէն—քար: Փոխանակ Պիէր
Նենարօկովի, ծնուած օրից մի ինչ որ ֆրան-
սիացի... շատ լաւ է ինչ ասած... Այնուամե-
նայնիւ եթէ տղայ լինի ես ուրախութիւնից կե-
կուռկ կըպարեմ:

ԿՈՄՄՈՒՀՀԻՒՆ—Նախ և առաջ—այդ մեծ ու-
րախութիւն կըպատճառէ կոմսին: Եթէ տղայ լի-
նի, Պիէր, կոմսը հրամայեց անմիջապէս ուղար-
կել ծառային նախարարների խորհուրդը: Զըմո-
ռանաք...

ՆԵՆԱՐՈՒԿ.—Ոչ, չեմ մոռանալ... իսկ եթէ
մոռանամ—յիշեցրէք ինձ կոմսուհի, ինդընմ...
այսպիսի ուրախութեան մէջ ամեն բան կարելի
է մոռանալ:

ԿՈՄՄՈՒՀՀԻՒՆ—Ամեն բան, բայց ոչ այդ...
ինձ վերայ յոյս միք դնիլ: Զեզ համար ուրա-
խութիւն կըլինի, իսկ ինձ համար կըկնակի: Էլե-
նան ինձ զաւակ է համարւում, իսկ ձեզ միայն
ամուսին...

ՆԵՆԱՐ.—Օհօ միայն: Միայն—ամուսին...

ԿՈՄՄՈՒՀՀԻՒՆ—Միք բոռալ...

ՆԵՆԱՐ.—Միլլ պարզոն, ինչպէս ձեզ մօտ
ընդունուած է ասել: Միայն ամուսին: Իսկ նո-
րածինը, ուրեմն ինձ համար կըլինի միայն որդի,
իսկ ձեզ համար թոռ... Կարծեմ գալիս է պրօ-
ֆեսիոնը (ականջ է պնում) ոչ—ինձ այնպէս
թուաց...

ԿՈՄՄՈՒՀՀԻՒՆ—Ես ձեզ հարիւր անգամ կըրկ-
նում եմ, միք բոռալ... Դուք կըսպանէք իմ աղ-
ջըկան...

ՆԵՆԱՐ.—Բայց ես կարծեմ ցած եմ խօ-
սում... Սակայն չնորհակալ եմ յիշեցնելու հա-
մար... որովհետեւ եթէ այսպէս շարունակուի, ես
իսկապէս ստիպուած կըլինեմ բղաւել ամբողջ
ոյժովս... Ուրեմն վճռուած է... եթէ մի գուցէ
ես մոռանամ կոմսի մասին, դուք ինձ կըշիշեց-
նէք: Իսկ եթէ ես չըշիշեմ—դուք չմոռանաք...

ԿՈՄՄՈՒՀՀԻՒՆ—Սացէք ինդընմ, դուք ինք-
ներդ ձեր ասածները հասկանում եք:

ՆԵՆԱՐ.—Կարծեմ ոչ... զգում եմ որ ոչ.
(Անջարանի ղոնները ներսից սաղիսում են: Լսում է)
Բաղիսում են... այն բաղիսում են... Գալիս է...
(մօտենում է ղոններին):

ԿՈՄՄՈՒՀՀԻՒՆ—(Վեր թոշելով բազկաթողից,
տրագ թոշում է ղէպի ղոտը, բաց է անուս ղըռ-
ները ներս թողնելով պրօֆեսիոնին նորից փա-
կում է եւ կանգնում ղոնների առաջ չթողնելով
իր փեսային):

ՏԵՍԻԼ 2.

ՆԵՆԱՐ. ԿՈՄՄՈՒՀԻ ԵՒ ՊՐՕՖԵՍՍՈՐ

ՆԵՆԱՐ.—(մօտենալով պրօֆեսորին մի կողմից—կիսաձայն) Ի՞նչ կայ... յաջող է, Տղայ է, թէ աղջիկ:

ԿՈՄՄՈՒՀԻ ՀԻ—(մօտենալով միս կողմից—քարձը փեսային) Շշշ... հանդարտ... գուք կըսպանէք իմ աղջկան... (պրօֆեսորին) Է բիէնս: Կենդանի է... թունիկս աղջիկ է, թէ տղայ...

ՊՐՕՖԵՍՍՈՐ.—(խորասուզուած, արագ վառաւ է ծխախոտը) Գիտէք ի՞նչ կոմսուհի... չըգիտեմ ինչպէս ասեմ...

ԿՈՄՄՈՒՀԻ ՀԻ—Ի՞նչ կայ... ի՞նչ է պատահել: Միք վախեցնիլ ինձ պրօֆեսոր... եթէ որ և է սարսափելի բան է պատահել,—աւելի լաւ է ոչինչ միք ասիլ...

ՆԵՆԱՐ.—Ասացէք... ինչ լինի ասացէք...

ՊՐՕՖԵՍՍՈՐ.—Միլ պարդոն... տեսէք բանը ինչումն է...

ԿՈՄՄՈՒՀԻ ՀԻ—Միք ասիլ, պրօֆեսոր... ինձ պէտք է նախապատրաստել... (մօտենում է բազմոցին) Ես զգում եմ որ ուշբիցս գնում եմ...

ՆԵՆԱՐ.—Պրօֆեսոր, ինձ նախապատրաստել չէ հարկաւոր: Ասացէք ի՞նչ է պատահել կնոջս հետ:

ՊՐՕՖԵՍՍՈՐ.—Ոչ, այդ կողմից բարեբախտաբար ամեն ինչ կարգին է... բայց տեսէք թէ... ԿՈՄՄՈՒՀԻ ՀԻ—(բազմոցի մօտից) Պրօֆեսոր, յանկարծ չասէք... նախապատրաստեցէք ինձ... աղաչում եմ, նախապատրաստեցէք ինձ...

ՆԵՆԱՐ.—(մօտենալով) Ես պահանջում եմ վերջապէս...

ԿՈՄՄՈՒՀԻ ՀԻ—Միք բոռալ: Դուք կըսպանէք իմ աղջկան...

ՆԵՆԱՐ. (ցած եւ մնայլ) Պրօֆեսոր...

ՊՐՕՖԵՍՍՈՐ.—Միլ պարդոն, այդ շատ հագուագիւտ դէպք է...

ԿՈՄՄՈՒՀԻ ՀԻ—(երեսը ծածկելով եւ մի աչքով նայելով բազմոցին պատրաստում է վայր ընկնել): Ա՛յ, օ՛յ, միք ասիլ...

ՆԵՆԱՐ.—(վճռողաբար մօտենալով) Ասացէք վերջապէս... տղայ ունեմ, թէ աղջիկ...

ՊՐՕՖԵՍՍՈՐ.—(յետ քաշուելով) Տղայ... և էլի տղայ... ընդամենը երկու տղայ:

ԿՈՄՄՈՒՀԻ ՀԻ—(ընկնելով բազկաթողի մէջ) Ա-ա-ահ... երկու... մեկօրեակներ... հրէշներ...

ՆԵՆԱՐ.—Երկու տղայ... Միաժամանակ երկու տղայ... այդ էր պակաս... Ոչ, այժմ միլ պարդոն, ինչպէս ձեզ մօտ ասում են, ես կամենում եմ տեսնելիմ երկու զաւակներին... (փախչում է ուղի ննջարանը)...

ՏԵՍԻԼ 4.

ԿՈՄՄՈՒՀԻՆ, ՊՐՕՖԵՍՍՈՐ

ԿՈՄՄՈՒՀԻՆ.—Երկուսը... մեկօրեակներ...
0-օ-օ...

ՊՐՕՖԵՍՍՈՐ.—Կոմսուհի... ձերդ պայծա-
ռափայլութիւն... միք վրդովւիլ... ի հարկէ այդ
թէև հազուագիւտ դէպք է...

ԿՈՄՄՈՒՀԻՆ.—Խայտառակութիւն... ուամ-
կութիւն... մեր շրջանում և յանկարծ մեկօ-
րեակներ... Մօն դիօ, ի՞նչ անել այժմ։ Մեր ցե-
ղում այդպիսի բան երբէք չէ պատահած... մե-
կօրեակներ... հրեշներ... կպած մեկօրեակներ
կոմս իզվագիլովերի տոհմի մէջ...

ՊՐՕՖԵՍՍՈՐ—Միլ պարդոն... կոմսուհի...
նոքա ամենակն կպած չեն... բոլորովին առան-
ձին, առանձին երեխաներ են։

ԿՈՄՄՈՒՀԻՆ.—Օ, այդ միենոյն է—կպած են
թէ կպած չեն... ջնախտ... դուք միայն մտա-
ծեցէք թէ ի՞նչ կասեն բոլորը...

ՊՐՕՖԵՍՍՈՐ.—Ի հարկէ, կոմսուհի, ձեր շրջ-
աններում այդ հաղիւ է պատահում օրինակ մի
վաճառականի կնոջ։

ԿՈՄՄՈՒՀԻՆ — (ականչները ծածկելով)
Ֆիք... միք վերջացնիլ, ի՞նչուս է պէտք իմա-
սալ, թէ ի՞նչ է լինում այդ տեսակ վաճառա-
կանների կնոջ... Օ. օ-օ... ուշը դնում է...

ՊՐՕՖԵՍՍՈՐ—(մօտենալով) Միլ պարդոն,
միլ պարդոն... ձերդ ազնւութիւն...

ԿՈՄՄՈՒՀԻՆ—(նայելով կոմսի մեծ սկառ-
կերին) Իմ խեղճ կոմսը չի տանիլ այդ, նա
ջղային կաթուած կըստանայ... ուղեղի ապօպ-
լեկսիս... սրտի պայմանիւն... նա այնպէս է գը-
նահատում իւր մաքուր տահմը... (Ներս է մըտ-
նում արագ նենարօկովը)

ՏԵՍԻԼ 4

ՊՐՕՖԵՍՍՈՐ, ԿՈՄՄՈՒՀԻՆ եհ նենԱՐՕԿՈՎ

ՆԵՆԱՐՕԿՈՎ — (հրճուած) Կոմսուհի ձեզ
կանչում է կենան... Նայեցէք ի՞նչ հրաշալի երե-
խաներ են... հրաշը է... հիանալի... շնորհակալ
եմ ձեզանից, պլոֆեսոր, շատ շնորհակալ եմ...
ՊՐՕՖԵՍՍՈՐ—Ի՞նչ էք ասում... ես ոչինչ
չեմ արել...

ՆԵՆԱՐՕ.—Այս այսինքն... ի հարկէ... դուք...
ոչինչ չէք... բայց և այնպէս... դուք օգնել էք,
այսինքն... թվիւ.. Այսուամենայնիւ... շնոր-
հակալ եմ... Որովհետև Աստուած վկայ, այդ
երեխաների համար ցուցահանդէսում շքանշան
կարելի է ստանալ։

ԿՈՄՄՈՒՀԻՆ—Ի՞նչպէս։ Շքանշան, կոմս իզ-
վագիլօվների թոռներին—ցուցահանդէս։ Ի՞նչ-
պէս թէ ցուցահանդէս։

ՆԵՆԱՐ. — Կոմսուհի, գնացէք նայեցէք նըրանց: Նրանք միմեանց նման են... ինձ նման են և ելենայի... և ձեզ նման:

ՊՐՕՖ. — (հանգնելով ծխախոտը) Միլլ պարդոն... Ես կերթամ նորից... (արագ գնում է դէպի ննջարանը):

ՏԵՍԻԼ 5

ՆԵՆԱՐՈԿՈՎ ԵՒ ԿՈՄՍՈՒՀԻ

ՆԵՆԱՐ. — Ի՞նչու չէք գնում, կոմսուհի: Եենան ձեզ ուղում է տեսնել, նա այնպէս ուրախ է...

ԿՈՄՍՈՒՀԻ — Ուրախացէք դուք այդ տեսակ ռամկային բազմացնելուն: Իսկ ի՞նձ հանգիստ թողէք: Հասկացմք: Ես միայն պէտք է յիշեցնեմ ձեզ որ ձեր անմիտ ուրախութիւնից դուք մոռացել էք կոմսի հրամանը:

ՆԵՆԱՐ. — Մոռացել էի, շատ ջնորհակալ եմ որ յիշեցրիք: Իսկոյն (զանգահարում է):

ԿՈՄՍՈՒՀԻ — Զհամարձակուէք միայն հաղորդել նորան որ զոյգ են:

ՆԵՆԱՐ. — Ապա ի՞նչ անել, ուրեմն:

ԿՈՄՍՈՒՀԻ — Իմ կարծիքով, նախ պէտք է պատրաստել:

ՆԵՆԱՐ. — Ի՞նչ պատրաստել:

ԿՈՄՍՈՒՀԻ — Ոչ թէ ի՞նչ, այլ ում... Պէտք

է պատրաստել կոմսին այդ հարուածի դէմ: մի գուցէ դուք ցանկութիւն ունիք կոմսին այն աշխարհը ուղարկել հէնց այնտեղ նախարարների խորհուրդի մէջ:

ՆԵՆԱՐ. — Այդ ի՞նչ է, կոմսուհի, ձեր կարծիքով ես մարդասպան եմ ի՞նչ է... մէկ ասում էք որ ձեր աղջկան եմ ուղում սպանել, մէկ կոմսին եմ ուղում ուղարկել այն աշխարհը նախարարների... (մտնում է ղայեակը):

ՏԵՍԻԼ 6

ԿՈՄՍՈՒՀԻ, ՆԵՆԱՐՈԿՈՎ ԵՒ ԴԱՅԵԱԿ

ԴԱՅԵԱԿ. — Հրամայեցիք զանգահարել:

ՆԵՆԱՐ. — Այս, ուղարկեցէք անմիջապէս Նիկոլային նախարարների խորհուրդը... Թողգեկացանէ կոմսին, որ Աստուած տուել է մեզ...

ԿՈՄՍՈՒՀԻ — Հմ... հմ... (խորհրդաւոր հագում է):

ՆԵՆԱՐ. — Թող նա զեկուցանէ կոմսին, որ Աստուած տուել է մեզ... մի տղայ... հասկանում էք, մի:

ԴԱՅԵԱԿ. — Այդ ի՞նչպէս, պարոն, ապա միւս զաւակը:

ՆԵՆԱՐ. — Թող ասէ մէկի մասին... իսկ միւսի... միւսի ես ինքս կասեմ... յետոյ, երբ կոմսը կդայ:

ԴԱՅԵԱԿ.—Սիւրպրիզ էք ուղում անե՞լ:
ՆԵՆԱՐ.—Այս, հէնց այդպէս է... սիւր-
պրիզ:
ԴԱՅԵԱԿ.—Հասկանում եմ..., լսում եմ
(գնում է):
ՆԵՆԱՐ.—Սպասիր, իսկ օրիորդը վերևն է:
ԴԱՅԵԱԿ.—Ամբողջ ժամանակ վերևն էին,
իսկ այժմ այլևս չեն կամենում այնտեղ մնալ...
ՆԵՆԱՐ.—Թող դեռ մնայ այնտեղ: Մի
փոքր...
ԴԱՅԵԱԿ.—Չեն կամենում, ասում են իբրև
դուք թոյլ էք տուել իջնել ներքն, երբ ես կա-
մեմ թէ Աստուած ինչ է ուղարկել...
ՆԵՆԱՐ.—Եւ դուք ասացի՞ք:
ԴԱՅԵԱԿ.—Այս, ի հարկէ, ասացի:
ՆԵՆԱՐ.—Ինչո՞ւ:
ԴԱՅԵԱԿ.—Ապա ի՞նչպէս:
ՆԵՆԱՐ.—Եւ ի՞նչ ասացիք դուք նորան:
ԴԱՅԵԱԿ.—Ասացի որ Աստուած տուել է
մեզ մի զոյգ պարանիկներ...
ՆԵՆԱՐ.—Մի զոյգ:
ԴԱՅԵԱԿ.—Ես չէի իմանում որ օրիորդիցն
էլ պէտք է գաղտնի լինի... և նորան էլ էք ու-
ղում սիւրպրիզ անել... (գնում է դէպի սեղա-
նատունը եւ դռների մօտ հանդիպում Օլեային):

ՏԵՍԻԼ 7

ԿՈՄՍՈՒՀԻ, ՆԵՆԱՐՈԿՈՎ եկ ՕԼԵԱ

ՕԼԵԱ.—(ըսնելով դայեակի ձեռքերը, պտոյտ
է զալիս եւ երգում) ԵՐԿՈւ ՓՈՔՐԻԿՆԵՐԻՆ դու-
պէտք է խնամես... մէկին աջ ձեռքի վերայ,
միւսին ձախ և օ-օ-ա-ա:

ԴԱՅԵԱԿ.—Թոնդ ինձ, չարաճճի...

ՕԼԵԱ.—(թողնելով նորան եւ ցոյց տալով
նենարօկովի վերայ): Նորան խնամել ես, ինձ
խնամել ես, նորանց էլ կըխնամես: Դեռ էլի հա-
րիւր տարի կապրես, Աստուած քեզ առողջու-
թիւն տայ... իսկ եթէ ոյժդ չյաղթէ ես քեզ
կօգնեմ... Մէկին այս ձեռքի վերայ, իսկ միւ-
սին—այս, և ա-ա-ա-ա: Որքան ուրախ եմ: Սաս-
տիկ ուրախ եմ: (Դայեակը գնում է դէպի սե-
ղանատուն):

ՏԵՍԻԼ 8

ԿՈՄՍՈՒՀԻ, ՆԵՆԱՐՈԿՈՎ եկ ՕԼԵԱ

ՕԼԵԱ.—(մօտենալով նենարօկովին համբու-
րում է մի քանի անգամ եւ բռնելով նորա ձեռ-
քերը պտոյտ է տալիս): Շնորհաւորնեմ եմ, Վո-
վոչկա, սիրելիս շնորհաւորնեմ եմ... Դու այժմ
պապա ես, լենոչկան—մամա, իսկ ես—տեռ-
տեա... ես տեռտեա: Խա, խա խա: Ամենքս

յանկարծ մէկ մէկ աստիճան բարձրացանք։ Այժմ մենք բոլորս էլ մեծ աստիճանի ենք հասել, (հանգիստ թողնելով նենարօկովին) մօտենում է կրմսունուն, ուզրում է նորա ձեռքերը եւս քոնի եւ պտոյտ տայ, բայց յանկարծ կանգ առնելով համեստաքար ըեվերանս է անում) իսկ դժւք կոմսուհի—մեծ մայր... ձերդ բարձր գերազանցութիւն... չնորհաւորում եմ ձեզ։

ԿՈՄՍՈՒՀԻ.—Ի՞նչու վերայ էք ուրախանում։

ՕԼԵԱ.—Ի՞նչպէս չուրախանալ! Մինչև այժմ ինձ անուանում էին միայն Օլեա։ Կարճ զգեստով; Իսկ այժմ ես հօրաքոյր եմ, տեսուեա... (զգեստի փեշերը հասցնելով մինչեւ յատակը) ... Տեսունկա Օլգա Պետրովնա... Տիօտիա Օլգա Պետրովնա... և որը ամենազլիսաւորն է տեսուիա ոչ թէ մէկի, այլ երկուսի։ Միաժամանակ երկուսի... Որքան ուրախալի՞ է... բայց, Վօվօչկա Բնչ պէտք է դնենք անուները...»

ՆԵՆԱՐ.—Չգիտեմ ճշմարիտ... ուզում էինք Պետր անուանել... իսկ այժմ... մի գուցէ կիրիլ և Մէֆօդի։

ԿՈՄՍՈՒՀԻ.—Հրաշալի է... աւելի լաւ է իօն և Ֆիլիպ անուանէք... այդ աւելի օրիժինալ է։

ՕԼԵԱ.—Ոչ, այդ լաւ չէ, աւելի լաւ է Բօրիս և Գլէբ։

ՆԵՆԱՐ.—Սպասիր, գտայ: Պետր և Պաւել... շատ լաւ է... մէկ օրում ծնուել են, մի ժամանակ էլ կը կատարենք նորանց տօնախիլմբութիւնը։

ԿՈՄՍՈՒՀԻ.—Ընուանեցէք ինչպէս կամենաք... Շտոլ և Շմիտ, Լիման և Ռիկս... Դօքչինսկի և Բօրչինսկի... ինչպէս կամենաք, միայն ինձ հանգիստ թողէք։

ՕԼԵԱ.—(մէկուաի) Ինչու է սա կատաղնւմ... Բնչ է պատահել։ (Դայտեակը մտնում է սեղանատնից)։

ՏԵՍԻԼ 9

ԿՈՄՍՈՒՀԻ եի ՆԵՆԱՐ ՕԿՈՎ. (Օլեան շիրմայի ետևն է)

ԴԱՅՑԵԱԿ.—Պարոն, ծծմայր են բերել։

ՆԵՆԱՐ.—Լաւ... երբ պրօֆեսսորը աղատուի, ես կը յայտնեմ նորան... թող սպասէ... բայց դայեակը, չէ՞ որ այժմ մեզ երկու ծծմայր է հարկաւոր։

ԴԱՅՑԵԱԿ.—Ի հարկէ... երկու փոքրիկն էլ ուտել կուզեն... և եթէ մօրը արգելում են ծիծտալ, ուրեմն պէտք է որ երկու ծծմայր լինեն։

ԿՈՄՍՈՒՀԻ.—Այդ էր պակաս, որ կոմսի աղջիկը ինքը կերակըէ երեխային։

ԴԱՅՑԵԱԿ.—Հէնց ես էլ, ձերդ պայծառա-

փայլութիւն, այդ էի զեկուցանում... որ երկու ծծմայր է հարկաւոր:

ԿՈՄՍՈՒՀԻՀԻ.—Իսկ ես էլ այն եմ զեկուցանում, որ այժմ ամեն ինչ կրկնակի հաշւապահութիւն է պահանջում... Խայտառակութիւն:

ՕԼԵԱ.—(մէկուսի) Տետաքրքիր է ինչո՞ւ է կատաղում:

ԴԱՅԵԱԿ.—Ինչ արած, ձերդ պայծառափայլութիւն: Ասուած է՝ «մանուկը Աստուծոյ տուրքէ»... Իսկ եթէ երկուսին միասին է տալիս—կընշանակէ կրկնակի բարիք է:

ԿՈՄՍՈՒՀԻՀԻ.—Գնացէք: Իսկ երբ կըլուէք—եռապատիկ բարիք կըլինիք:

ՕԼԵԱ.—(մէկուսի) Ես բոլորը կիմանամ... ինչ որ պատահել է (զնուած է իսր լիէ դայեակի հիտ, բայց թագնում է նորից շիրմայի ետելը):

ՏԵՍԻԼ 10

ԿՈՄՍՈՒՀԻՀԻ ԵՒ ՆԵՆԱՐԾԿՈՎ, (ՕՂԻԱՆ ՇԻՐՄԱՅԻ յետեն է)

ԿՈՄՍՈՒՀԻՀԻ—Եւ այս բոլորը ձեր կարծիքով դատամբկ բան է: Մինչև անգամ ուրախութիւն է պատճառում ձեզ: Երկու ծծմայր:

ՆԵՆԱՐԾ.—Ի՞նչ կայ որ: Պէտք է լինէր մէկը, այժմ կըլինեն երկուսը: Փառք Աստուծոյ, միջոցներ ունինք:

ԿՈՄՍՈՒՀԻՀԻ.—Միջոցներ: Դարձեալ ուամ-

կութիւն, մանկանոց, խանձարուր, դայեակների ապաստարան, ահա թէ ինչ է լինելու... Տէր Աստուած, ինչ կըլինի իմ խեղճ կոմսի հետ:

ՆԵՆԱՐԾ.—Ինչ կըլինի, մէկ թոռան պապիտի լինէր, այսինքն Պէտրի, ախ ներողութիւն Պիէրի: Իսկ այժմ կըլինի երկուսինը, Պիէրի և Պոլի:

ԿՈՄՍՈՒՀԻՀԻ—Ստիպուած եմ շնորհակալութիւն յայտնել... Գոնէ հէնց նորա համար, որ այն զզուելի Սիամի ծնունդները կոմս Իզվադիլովների ազգանունը չեն կըելու:

ՆԵՆԱՐԾ.—Սակայն, թոյլ տուէք կոմսուհի: Դուք կարող էք շնորհակալութիւն յայտնել որ նորա կոմս Իզվադիլովների ազգանունը չեն կըելու, բայց նոքա մըտեղի Սիամի զզուելի ծնունդներն են... Ինչպէս ձեզ մօտ ընդունուած է ասել, դուք մոռանում էք, որ նոքա իմ զաւակներն են... Դուք մինչև անգամ նրանց չէք էլ տեսել:

ԿՈՄՍՈՒՀԻՀԻ—Եւ չեմ էլ ուզում տեսնել: Երբէք չեմ տեսնիլ: Ես երբէք չեմ այցելում մուզէյները, ուր հրէշներ են ցոյց տալիս... Երբէք:

ՆԵՆԱՐԾ.—Ականջներս գնաց: Ճանձերը կը սատկուեն... ներողութիւն... կերթան այն աշխարհը ձեր խօսքերից յետոյ:

ԿՈՄՍՈՒՀԻՀԻ—Դժբախտ արարած:

ՆԵՆԱՐ. — Ընդհակառակը, նա չափազանց գոհ է։ Այս բողէիս մենք եկանք այն եղրակացութեան նորա հետ, որ այդ մինչև անգամ հրաշալի է։ Մէկ հարուածով երկու ճանճ ենք սպանել։

ԿՈՄՍՈՒՀԻՑԻ — Հասկացէք վերջապէս որ պատրաստութիւնը — բաժինքը մի երեխայի համար է տեսնուած։

ՆԵՆԱՐ. — ՄԷծ բան է։ Կըպատրաստուի և երկրորդի համար... իսկ առ այժմ կօգտուեն միասին... բայց ահա թէ ի՞նչ, երկու օրօրոց է պէտք և յետոյ երկու կառքիկ...

ԿՈՄՍՈՒՀԻՑԻ. — Հրաշալի է... երկու ծծմայր, երկու օրօրոց, երկու կառք, ինչպէս վաճառականները ասում են ամեն ինչ օպտով է։

ՆԵՆԱՐ. — Թող օպտով լինի, ես այնուամենայնիւ շատ ուրախ եմ...

ԿՈՄՍՈՒՀԻՑԻ. — Բայց հասկացէք վերջապէս որ միանգամից մի քանի զաւակներ ընդունուած է միայն կատունների և ուամիկների մէջ։

ՆԵՆԱՐ. — ԶԵմ հասկանում, մենք օրինակի համար անկասկած կատուններ չենք և ոչ էլ ուամիկներ... բայց ահա մեզ մօտ...

ԿՈՄՍՈՒՀԻՑԻ. — Զըհամարձակուէք ասել «մեզ»: «Մենք» միք ասիլ... իմ դժբախտ արարածը... ամենաին մեղ չունի։

ՆԵՆԱՐ. — Այսինքն... ի՞նչպէս թէ մեղ չունի։

ԿՈՄՍՈՒՀԻՑԻ. — Այն, այն: Դժբախտը միայն գոհ է դառել: Ոչ իմ և ոչ էլ կոմսի ժառանգութեան մէջ այդ տեսակ բան երբէք չի եղել։

ՆԵՆԱՐ. — Ես, ի հարկէ, չեմ կարող պնդել: Ես այդ հաստատ չըգիտեմ, բայց մի գուցէ իմ ժառանգութեան մէջ ես չի եղ...

ԿՈՄՍՈՒՀԻՑԻ. — Եղել է... եղել է... այդ միշտ լինում է ուամիկների, վաճառականների և ամենահասարակ և զգուելի մարդկանց մէջ։

ՆԵՆԱՐ. — Թոյլ տուէք, մի գուցէ ես զգուելի մարդ եմ, բայց չէ որ ես ոչ վաճառական եմ, և ոչ ուամիկ, այլ հոգեկորական ցեղից։

ԿՈՄՍՈՒՀԻՑԻ. — Ո՞չ... գուք... ուամիկ էք: Այսօրուանից, այս խայտառակութիւնից յետոյ, գուք մինչև անգամ հոգեկորական ցեղիցն էլ չէք կարող լինել... Դուք ուամիկ էք, կոպիտ ուամիկ, գոնապան, և ամենահասարակ կառապան։

ՆԵՆԱՐ. — Բայց մտածեցէք, կոմսուհի, ի՞նչով եմ ես մեղաւոր։

ԿՈՄՍՈՒՀԻՑԻ. — Ուրեմն ով է մեղաւոր։ Ո՞վ։

ՆԵՆԱՐ. — Ո՞վ։ Ոչ ոք։ Ես ինչ գիտեմ ով է լինում մեղաւոր այդպիսի դէպքերում... Այդ բանի համար դեռ ոչ ոքին դատի չեն ենթարկել։ Աւելի լաւ է գնանք նորա մօտ... նա խընդրում էր...

ԿՈՄՍՈՒՀԻՑԻ. — Նորա մօտ ես կերթամ։ Բայց ձեր այդ բոբշինսկու և Դօբչինսկու երեսին ան-

դամ չեմ նայիլ... չեմ նայիլ... (Քնում է ղէպի
ննջարանը, Օյեան ղուզս է զալիս:)

ՏԵՍԻԼ 11

ՆԵՆԱՐՈԿՈՎ ԵՒ ՕԼԵԱ

ՆԵՆԱՐ.—(ինքն իրան) Ո՞վ է մեղաւոր...
Սատանան գիտէ թէ ՞վ է մեղաւոր:
ՕԼԵԱ.—Վօվօչկա, սիրելիս:
ՆԵՆԱՐ.—Այդ դժու ես: Դու այստեղ էիր:
ՕԼԵԱ.—Ոչ... ես վերեն էի... նոր իջա...
Սսա ինձ, Վօվօչկա, այդ ինչժու համար է կոմ-
սուհին այդպէս կատաղում:
ՆԵՆԱՐ.—Սատանան գիտէ:
ՕԼԵԱ.—Սատանան: Իսկ դու չըգիտես,
ՆԵՆԱՐ.—Կատաղում է, հասկանում ես նո-
րա համար, որ Աստուած մեզ մէկի փոխարէն-
երկու երեխայ է տուել:
ՕԼԵԱ.—Ահա հէնց այդ է որ ես չեմ հաս-
կանում: Ո՞վ է դորանում մեղաւորը:
ՆԵՆԱՐ.—Ես որտեղից գիտեմ ՞վ է այդ
բանում մեղաւորը: (զնում է ննջարանը):
ՕԼԵԱ.—Վօվօչկա, կարելի՞ է ինձ տեսնել
փոքրիկներին... ես այնպէս եմ ուզում... Մի
աչքով կը նայեմ:
ՆԵՆԱՐ.—Իսկոյն կիմանամ... եթէ կարելի
ինի հորաքոյր Օլգա Պետրովնան ներս մտնել...

Սպասիր այստեղ... (Քնում է: Նորա յետեւից
մտնում է պրօֆեսորը, արագ ծխախոտը վառե-
լով):

ՏԵՍԻԼ 12.

ՕԼԵԱ ԵՒ ՊՐՕՖԵՍՈՐ

ՕԼԵԱ—Բարև ձեզ, պրօֆեսոր:
ՊՐՕՖԵՍՈՐ.—Ախ... օրիորդ: Բարև:
ՕԼԵԱ.—Ասացէք ինդրէմ, պրօֆեսոր, մի-
թէ իսկապէս նրանք հրէշներ են:
ՊՐՕՖԵՍՈՐ.—Այդ ՞վ:
ՕԼԵԱ.—Մանուկները:
ՊՐՕՖԵՍՈՐ.—Ի՞նչ էք ասում: Ի՞նչ էք ասում...
այդ ՞վ ասաց ձեզ:
ՕԼԵԱ.—Կոմսուհին:
ՊՐՕՖԵՍՈՐ.—Ոչ... կոմսուհին... նա... պար-
դոն նա... չափազանցըել է... Ընդհակառակը հիա-
նալի մանուկներ են, հիանալի:
ՕԼԵԱ—Սյդպէս: Ախ որքան ուրախ եմ
ես: Բայց ասացէք, պրօֆեսոր, այդ ինչիցն է
պատահել, որ նոքա երկուսն են ոչ թէ մէկը:
ՊՐՕՖԵՍՈՐ.—Հմ, հմ... ինչպէս ասել... Աս-
տուած գիտէ...
ՕԼԵԱ.—Աստուած, իսկ դուք չգիտէք:
ՊՐՕՖԵՍՈՐ.—Ե՞ս... Ոչ... ես չըգիտեմ:
ՕԼԵԱ—Այդ ինչպէս, Պրօֆեսոր էք և այդ
չըգիտէք:

ՊՐՕՅԵՍ.—Բայց պրօֆեսորն էլ ամեն
բան չի կարող իմանալ:

ՕԼԵԱ.—Ուրեմն այդ բանում ոչ ոք մեղա-
ւոր չէ, որ Աստուած մեզ փոխանակ մի մա-
նուկի երկուսն է տուել: Կընշանակէ ոչ Վօլո-
դիան է մեղաւոր և ոչ էլ ելնան:

ՊՐՕՅԵՍ.—Ոչ... ոչ ոք մեղաւոր չէ... ա
մենակն մեղաւոր չեն...

ՕԼԵԱ.—Բայց ահա պրօֆեսոր, դարձեալ
մի հարց:

ՊՐՕՅԵՍ.—(շտապելով) պարզո՞ն... ինձ հար-
կաւոր է գնալ... Այստեղ ծծմայր են բերել...
(արագ զնում է դէպի սեղանատունը):

ՏԵՍԻԼ 13.

ՕԼԵԱ ԵՒ ԿՈՄՍՈՒՀԻ

ՕԼԵԱ.—Կոմսուհի, դուք ևս չըգիտէք ին-
չու Աստուած մէկի փոխարէն երկու մանուկ է
ուղարկել:

ԿՈՄՍՈՒՀԻ—Դուք յիմար բաներ էք հարց-
նում:

ՕԼԵԱ.—Միթէ այս յիմարութիւն է:

ԿՈՄՍՈՒՀԻ—Այս յիմարութիւն:

ՕԼԵԱ.—Ի՞քս չըգիտեմ, այդ պատճառով
էլ հարցնում եմ... մեծերից... Վօլոդեան ինձ

քանի անգամ ասել է, ինչ որ չըգիտեմ հարց-
նեմ լենաից կամ իրանից:

ԿՈՄՍՈՒՀԻ—Ահա նորան դիմեցէք...
փառք Աստուծոյ հիւանդ է:

ՕԼԵԱ.—Ի՞նչպէս «փառք Աստուծոյ հի-
ւանդ է»: Ինչպէս թէ «փառք Աստուծոյ»...

ԿՈՄՍՈՒՀԻ—Այս սիրելիս, թողէք ինձ
հանգիստ, խնդրեմ... առանց այն էլ ջղերս քայ-
քայւած են:

ՕԼԵԱ.—Բայց ինչու կոմսուհի... Ասացէք
ինչ կայ այստեղ սարսափելի, եթէ Աստուած
մեզ տուել է... (Սեղանատան դռները բացում են,
երեսում է ծառան):

ՏԵՍԻԼ 14.

ՕԼԵԱ, ԿՈՄՍՈՒՀԻ ԵՒ ԾԱՌԱՅ

ԾԱՌԱՅ.—(դռները ամբողջովին բացելով)
Նորին պայծառափայլութիւնը: (Ներս է թող-
նում կոմսին, փակում է դռները եւ զնում սեղա-
նատուն: Միենայն ժամանակ ննջարանից դուրս
է զալիս նենարօկով):

ՏԵՍԻԼ 15

ՕԼԵԱ, ԿՈՄՍՈՒՀԻ, ԿՈՄՍ ԵՒ ՆԵՆԱՐՕԿՈՎ

ԿՈՄՍ—Շնորհաւորում եմ, կոմսուհի...
ցանկալի ուրախութիւն... Ծառան ինձ զեկու-
ցեց, որ Աստուած տղայ է տուել... (Օլեային)

Բարեւ ձեզ... (Նենարօկովին) Շնորհաւորում եմ
ձեզ, Վոլդէմար... Ես հասկանում եմ ձեր ուրա-
խութիւնը: Քառասուն տարուայ ընթացքում
այսօր առաջին անգամն է որ վաղ դուրս եկայ
ծառայութիւնիցս... Շնորհաւորում եմ..., (Նե-
նարօկովը եւ կոմսուիին չեն մօտենում նորսն
եւ շփոթուած կանգնած են): (Երկար պատճառ:) Ի՞նչ է նշանակում այս: (ասելի Երկար պատճառ:) Ես ոչինչ չեմ հասկանում:

ԿՈՄՄՈՒԻՀԻ.—(ընկճուած ձայնով) Կոմմ, նախ
ձեզ պէտք է նախապատրաստել:

ԿՈՄՄ—Ի՞նչ է պատահել:

ԿՈՄՄՈՒԻՀԻ.—Սարսափելի հարուած... Խայ-
տառակութիւն...

ԿՈՄՄ—Բանը ի՞նչումն է, կոմսուի:

ԿՈՄՄՈՒԻՀԻ—Ոչ թէ մէկ... այլ Երկու...
Երկու մանուկ... Երկու...

ԿՈՄՄ—Ի՞նչ... ի՞նչպէս թէ Երկու... ի՞նչ
Երկու... ի՞նչու համար Երկու... (Երկար պատ-
ճառ: Փեսային) Պատասխանեցէք, մեծապատիւ
պարոն, այս ի՞նչ է նշանակում:

ՆԵՆԱՐ.—Բարեհաճեցէք, կոմս... ահա, տե-
սէք... մի զաւակը Աստուծոյ տուրք է, իսկ
Երկուսը կընշանակէ կրկնապատիկ տնւրք է...
Այդ անհերքելի փաստ է... և ահա մենք... պար-
գոն, ի՞նչպէս ձեզ մօտ ընդունուած է ասել, Եր-
կու զաւակ, Երկու տղայ...

ԿՈՄՄ—Դուք ծաղրում էք ի՞նձ... ի՞նչպէս
թէ Երկու տղայ:

ՆԵՆԱՐ.—Այնպէս՝ Երկու... մէկ և... և Եր-
կու:

ԿՈՄՄ—Զ՞ոյդ... կպած:
ՆԵՆԱՐ.—Ի հարկէ զոյդ են... միայն ամե-
նակին չեն կպած... բոլորովին առանձին առան-
ձին են: Մէկը ինքնըստինքեան և միւսը ինքն-
ըստիքեան:

ԿՈՄՄ—Դուք ցնորուել էք ի՞նչ է... կոմ-
սուհի այդ ճիշտ է:

ԿՈՄՄՈՒԻՀԻ—Ճիշտ է: Դժբաղտաբար այդ
սարսափելի իրողութիւն է:

ԿՈՄՄ—(արագ մէջքը ղարձնելով վիսային) Կոմսուի, Ես ձեզ քանի անգամ նախազգուշաց-
րի, որ ձեր աղջկան, կոմսուհուն, չպէտք Եր տալ
այս պարոնին: Այժմ դուք ինքներդ տեսնում
էք որ սա ամեն բանի ընդունակ է:

ՆԵՆԱՐ.—(վերջնականապէս կորցնելով համ-
բերութիւնը) Ասացէք վերջապէս ինդրեմ, Ես ի՞նչ
մեղ ունեմ այստեղ...

ԿՈՄՄ—(շղանալով, Նենարօկովին) Իսկ ով
է մեղաւորը ձեր կարծիքով, կոմսուի աղջիկը...
Ուրեմն իմացած լինէք, մեծապատիւ պարոն, որ
ոչ կոմսուու և ոչ էլ իմ ժառանգութեան մէջ...

ԿՈՄՄՈՒԻՀԻ—Օ, կոմս: Ես արդէն ասացի
դորան, բայց դա ոչինչ չէ հասկանում:

ԿՈՄՄ—(դարձեալ շղառնալով) Դուք արդէն ասել էք. լսեցէք, մեծապատիւ պարոն, թէ ես ինչ կասեմ ձեզ: Ես ամենեին չեմ. կամենում որ ձեր այդ այակսները կոմսուհուն մեծ մայր անուանեն, իսկ ինձ պապ... Ոչ ես, ոչ իմ հայրը, ոչ իմ պապը, ոչ իմ պապի պապը, ոչ իմ պապի պապի պապը... և կարող եմ երաշխաւոր լինել ամբողջ տոհմի կողմից, որ նորանցից ոչ ոք երբէք ջնտակների պապ չի եղել... և այդ տեսակ նորութիւն մտցնել... ես թոյլ չեմ տալ... չեմ թոյլ տալ: Ես ձեզ ասում էի, կոմսուհի, որ չէ կարելի կոմսուհու միակ աղջկան տալ մի մարդու, որը նորան թուաբանութեան դասեր է տալիս... Ես ձեզ ասում էի որ այդ հասարակ մարդիկ ամեն բանի ընդունակ են... Գնանք այստեղից: Իմ սիրտս կըպայթի: (Զեռք-ձեռքի տուած կոմսուհու հետ հապատ դուրս է զնուա: Նենարօկովը լուր յետետաւ է նրանց դէպի սեղանատունը: Դայեակը ներս է մտնում ննջարանից):

ՏԵՍԻԼ 16.

ՕԼԵԱ ԵՒ ԴԱՅԵԱԿ

ՕԼԵԱ.—Դայեակ, դու ուամիկ ես:

ԴԱՅ.՝—Այն, զաւակս: Առաջ գեղջկուհի էի, իսկ յետոյ...

ՕԼԵԱ.—Դայեակ, այդ ճիշտ է, որ մի քանի երեխայ միասին Աստուած միայն ուամիկներին և կատուներին է տալիս:

ԴԱՅ.՝—Թփիւ... Այդ ինչ ես ասում... կատուն անասուն է, իսկ ուամիկը մարդ է:

ՕԼԵԱ.—Այդ... կոմսուհին է այդպէս ասում:

ԴԱՅ.՝—Թփիւ... յիմար քափթառ է քո կոմսուհին:

ՕԼԵԱ.—Դու գոնէ ինձ ասա, դայեակ, այդ ի՞նչու յանկարծ միասին երկու երեխայ է ծնուել:

ԴԱՅ.՝—Աստուած է տուել:

ՕԼԵԱ.—Դու նոյնպէս ասում ես: Աստուած է տուել:

ԴԱՅ.՝—Ի հարկէ, զաւակս... առանց Աստուածոյ մի քայլ չես անիլ, ասած է:

ՕԼԵԱ.—Երբ մի բան չգիտեն, կամ չեն ուզում ասել, իսկոյն Աստուածոյ վերայ են գցում: Դու բացատրիր ինչպէս հարկն է:

ԴԱՅ.՝—Ինչպէս հարկն է: Ահա ես այդ չեմ կարող:

ՕԼԵԱ.—Ահա տեսնում ես: Ուրեմն սյրօֆեսսօրը և դայեակը մէկ են... երկուսն էլ չեն կարողանում բացատրել: Ես Վօլոդեային կը հարցնեմ: Նա ևս գիտնական է:

ԴԱՅ.՝—Եւ շատ էլ լաւ կանես... հարցրունորան: (Նենարօկովը ուրախ դուրս է զալիս սե-

ղանատնից): Ահա նա ինքը (զնում է ննջարանը):

ՏԵՍԻԼ 17.

ՕԼԵԱ ԵՒ ՆԵՆԱՐՈԿՈՎ

ՆԵՆԱՐ.—Նկատնում ես, հէնց որ հին «պլի-ժիմը» գոլօրշիացաւ, իսկոյն թեթևութիւն ես զգում... կարծես թէ եղանակը բացուել է... և օդն էլ աւելի մաքրում է:

ՕԼԵԱ.—Այո... ճիշտ է... վոլոգեա, ասա խնդրեմ...

ՆԵՆԱՐ.—Ի՞նչ է սիրելիս:

ՕԼԵԱ.—Այդ ինչիցն է, որ Աստուած փո-խանակ մէկ տղայի, տուել է մեզ միասին եր-կուսին... ես դայեակին էլ հարցըի, կոմսուհուն էլ, պրօֆեսորին էլ...

ՆԵՆԱՐ.—Նորանց էլ ես հարցըել... և կոմ-սուհուն... և պրօֆեսորին... Այս դու կայծակ:

ՕԼԵԱ.—Ի՞նչ է որ... Միթէ չէր կարելի:

ՆԵՆԱՐ.—Ոչ... ինչու չէ... կարելի է:

ՕԼԵԱ.—Եւ ոչ ինձ չըբացատրեց... Ասա ինձ, վօվօչկա:

ՆԵՆԱՐ.—Անյայտ է... այդ կատարելապէս անյայտ է:

ՕԼԵԱ.—Եւ դու դորանում մեղաւոր չեմ:

ՆԵՆԱՐ.—Ի՞նչում:

ՕԼԵԱ.—Որ երկուսն են և ոչ թէ մէկը:

ՆԵՆԱՐ.—Ես... ամենեին մեղաւոր չեմ:
ՕԼԵԱ.—Բայց ով է վերջապէս մեղաւորը:
ՆԵՆԱՐ.—Թու, տէր Աստուած... Ոչ ոք մե-ղաւոր չէ, հասկացիր... ոչ ոք. և այդ ամենը դատարկ բաներ են: Բայց տես այս... այս դա-տարկ բան չէ... երեք տարի, ամբողջ երեք տարի, այն օրուանից ինչ ես ամուսնացել եմ, շարունակ մտածում էի թէ ի՞նչպէս ազատուեմ զօքանչիցս և աներոջիցս, կոմսուհու և կոմս իզվաղիլովներից... և ազատուելու հնար չէի կա-րողանում գտնել... ոչ մի հնար. և յանկարծ այս տեսակ անսպասելի փրկութիւն... երթանք: Այժմ ես քեզ ցոյց կըտամ իմ երկու գաւակներին: Յան-կալի և անսպասելի փրկիչներին... (բացելով ննջա-րանի դրները, զլուխ տալով, ծանապարհ է տա-լիս): Համեցէք, հօրաքոյր Օլգա Պետրովնա:

(Օլեան հպարտ անցնում է ննջարանը):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

卷之三

ԼՈՒՍԱԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒՅԱՆ

Վօդ. կատակ 1 արար.

ΦΙΛΙ.

Պ. ԱՐԱՔՉՈՒԵԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԳԵՂՐՔ ՄԻՍԱԿԵԱՆ, 20 տարեկան։
ԶԱՔԱՐԵԱՆ, 25 տարեկան։
ՍԻՒԶԻԿ, երիտասարդ օրիորդ։
ԹՈՐՈՍ, ծառայ 40 տարեկան։
ՄԻՍՈՑԵԱՆ, կօշկակար։
ՄՈՐԿՎԻԼԱԶԵ, նախկին վաշտապետ 45 տարեկան։
Գործողութիւնը կատարում է ամառը, գաւառներից
մէկում։

ԲԵՄԸ ՆԵՐԿԱՅԱԳՆՈՒՄ Է աղքատիկ մի սենեակ։
Խորքում հսկղիպականներից աջ—շիրմա։ Շիր-
մայի յետեւից երետու է մահմակալ։ Կողքին չե-
մողան։ Քառանկիւնի մի սեղան, որը ծառայում
է թէ մաշի եւ թէ զբասեղանի փոխարէն։ Սեղա-
նի վերայ զրուած կն լրանկարչովմեան զանա-
զան գործիկներ, աժանազին զբամաֆօն։ Պատու-
հանների վերայ զրուած են լրանկարչովմեան
շրջանակներ։ Պատիկց քարշ է արած որսորդա-
կան հրացան։ Մէջտեղը դոներ—մուտք։ Աշ հան-
գիսականներից, նոյնպէս դոներ, որը տանում է
զէպի խոհանոց։ Մենեակում մեծ անկարգութիւն է
տիրում։

ՏԵՍԻԼ 1

ՄԻՍԱԿ. (առանձին)

Միսակ.—(ավառային հասարակ հագուստով
տուժիաններով։ Արագ մօսենում է այս կամ այն
շրջանակներին, նայում է լրանկարները, շար-
ժում է զլուսը, մօտենուվ է միախն ։ Մի քննիսից
հանում է անյաջող նկարները, բացականչելով) Ֆռւ շարժւել է ։ (միս անգամ) Մատանան տանէ
երկար է պահուած։ (հանած թղթերի փոխարէն
դարսում է նորերը)։

ՄիՍԱԿ.—Թնրոս, թնրոս։

ՏԵՍԻԼ 2

ՄԻՍԱԿ. ԵՒ ԹՈՐՈՍ *

ԹՈՐՈՍ—(մտնելով դժգոհ, գոզոցով սրբութ է երեսը) ի՞նչ ես բորում:

ՄԻՍԱԿ.—Խանութ պիտի գնաս:

ԹՈՐՈՍ—Ժամանակ չունեմ, կատլետի համար միս պիտի ծեծեմ:

ՄԻՍԱԿ.—Թորհս, սիրելիս, խնդրում եմ:

ԹՈՐՈՍ—Չեմ կարայ գնալ, խանումը կը բարկանայ:

ՄԻՍԱԿ.—Հասկացիր, որ ինձ անհրաժեշտ է թուղթ... որովհետև ժամադիր եմ եղել և առանց ապարատի չեմ կարող դուրս գնալ...

ԹՈՐՈՍ—Ես ի՞նչ անեմ:

ՄԻՍԱԿ.—Խնդրում եմ, Թորոս ջան:

ԹՈՐՈՍ—Ի՞նչ:

ՄԻՍԱԿ.—Ես քո փոխարէն կը ծեծեմ միսը:

ԹՈՐՈՍ—Կերթայի հմա վախում եմ կատկետս խարաբ անես:

ՄԻՍԱԿ.—Մի վախիր, Թորոս ջան, ի՞նչու ետ վախենում:

ԹՈՐՈՍ—Դէ լաւայ, ասա ի՞նչ ես ուզում, հմա աղա ջան տես որ էս դեղօրէնքից հեռու պահես միսը թէ չէ խանումը տանիցը դուրս կանի, էն Աստուածը...

* Նկատող, փոխադր. Այս գերը կատարելիս աւելի լաւ կը լինէր խաղալ տեղական բարբառով:

ՄԻՍԱԿ.—Անհոգ եղիք:
ԹՈՐՈՍ—Դէ, ասա տեսնեմ ի՞նչ պտի առնեմ:

ՄԻՍԱԿ.—Մէկ կապոց թուղթ:

ԹՈՐՈՍ—Դէ շուտ արայ, փողը տուր:

ՄԻՍԱԿ.—(Հանելով գրավանից մանր փողը տալիս է Թորոսին) Ահա, միայն շուտ արի:

ԹՈՐՈՍ—(վերցնելով փողը) Էս սահաթիս, (Գնում է դէպի խոհանոց):

ՏԵՍԻԼ 3

ՄԻՍԱԿԵԱՆ (առանձին)

ՄԻՍԱԿ.—(Նայում է ամանի մէջ տպուած լրաանկարները) Սատանան տանի, այստեղ էլ է փչացել:

ՏԵՍԻԼ 4

ՄԻՍԱԿԵԱՆ ԵՒ ԹՈՐՈՍ

ԹՈՐՈՍ—(Ներս է քերում միս ծեծելու մեջ թենան եւ մի աման միս: Մեքենան սարքում է սեղանի վրայ եւ Միսակեանին ցոյց տալով) Տեսն, ըստնց պտի ծեծես համ:

ՄԻՍԱԿ.—Լաւ, լաւ, վազիր (յիշելով) հա, քիչ էր մնում մոռանայի. Թորհս, մի քիչ էլ վիրաժ առ, վիրաժ, չըմոռանաս... և ի սէր Աստուծոյ չընառնես... վիրաժ... և ամենալաւը տպա:

ԹՈՐՈՍ—Դու տես միսը խարաբ չանես, ես
էսայ գալիս եմ (զնում է դէպի խոհանոց):

ՏԵՍԻԼ 5

ՄԻՍԱԿԵԱՆ (առանձին)

(Միսակեանը սկսում է մեքենան պտոյտ տալ,
այդ միջոցին զանգահարում են. նա մօտենում է
միջին զոներին, որից զբարերը տալիս է նորան
մի քանի նամակներ):

ՄԻՍԱԿ.— (բանալով նորանից մէկը արագ
կարդում է) «Սիրելի ժօրժիկ: Այսօր երեկոյեան
ժամը 4-ին վերցրէք ձեր լուսանկարի ապահ-
ուատը և եկէք մեզ մօտ, միայն չուշանաք:
Վերցրէք որքան կարելի է շատ պլաստինկաներ,
որովհետև այսօր մենք լաւ տրամադրութեան
մէջ ենք և ուզում ենք զանազան դիրքերով
նկարուել... մեզ մօտ մեծ ուրախութիւն է տի-
բում: Աղասում ենք անհամբեր...» «Սիրզիկ».
(Մոայլ) Այս... ձեզ մօտ ուրախութիւն է տի-
բում, իսկ իմ սրտիս մէջ միայն վիշտ...
Հետաքրքիր է միւս նամակը... (կարդում է) «Մե-
ծապատիւ պարոն Միսակեան: Եթէ դուք վերջ
չէք տալ ձեր յիմար լուսանկարով շրջել իմ տ-
մառանոցի առաջ, ես բաց կըթողնեմ իմ դա-
զան շներին, որոնք յայտնի են ամբողջ գաւա-
ռում և ձեզ քրքրել կըտամ: Ես իսանդու եմ

ինչպէս տաս հազար «Օտէլլօ»-ներ, և ոչ թէ
միայն թոյլ չեմ տալ հեռուից նկարէք իմ կնոջս
այլ նայել անգամ: Խորհուրդ եմ տալիս զգոյշ
լինել: Զեզ բարի կամեցող նախկին վաշտապետ
«Մօրկվիլլաձէ»:

Պ. Տ. Նախազգուշացնում եմ ձեզ, որ մի-
այն ի նկատի առնելով ձեր երիտասարդ տարիքը
ես չեմ ուզում դիմել խիստ միջոցներին»: — Ի՞նչ
է կպել ինձ այս դատարկագլուխը, շատ հարկա-
ւոր է ինձ նորա կինը, քանի որ ես Սիրզիկին
եմ սիրում... ին, լաւ նամակներ են, ի՞նչ ա-
սած... աւելի լաւ է չկարդալ (յետ է զնում
միա նամակները). բայց մի գուցէ միւս նա-
մակը... (կ սրդում է) «Երիտասարդ պարոն, մի-
թէ դուք այն աստիճան փչացած էք, որ թագ-
նուելով թփերի տակ, դուք ձեզ թոյլ էք տալիս
մերկ կանանց պատկերները հանել... եթէ
բնութեան գեղեցկութիւնը դուք ընդունում էք
միայն մերկ կանանց մէջ... զգուշացէք, որով-
հետև ես պատիւ կունենամ զեկուցանել ձեր մե-
ծառորին և նա ձեզ կուղարկէ ուր որ հարկն է»:
(նետելով նամակը) Ասացէք ինդրեմ, թփերի
տակից պատկերահանը Զաքարեանն է, իսկ պէտք
է տուժեմ ես: Լաւ է եթէ ծառայութիւնիցս
դուրս չանեն... լաւ օր է լուսացել ինձ համար,
ի՞նչ ասած (մտնում է Մօրկվիլլաձէն):

ՏԵՍԻԼ 6

ՄԻՍԱԿԵԱՆ ԵՒ ՄՈՐԿՎԻԼԱԶԵ

ՄՈՐԿՎԻԼ.—Դուք ի հարկէ... Սիսակեանն էք:

ՄԻՍԱԿ.—Ոչ թէ Սիսակեան, այլ Միսակեան:

ՄՈՐԿՎԻԼ.—Այդ միւնոյն է, ես Մօրկվիլաձէն եմ:

ՄԻՍԱԿ.—Ես արդէն պատիւ ունեցայ ձեր նամակը ստանալու... այնպէս որ... չգիտեմ... ինչով կարող եմ...

ՄՈՐԿՎԻԼ.—Այդ ոչինչ... նամակները երբեմ կորչում են... ես եկել եմ ձեզ մօտ... ձեզ... անձամբ... սաստելու համար... Ես, մեծապատիւ պարոն, այդ տեսակ մատրիմօնեալ գործերում խիստ եմ և կատաղի ինչպէս վագր... այն... ես թոյլ չեմ տալ... չեմ թուռ-յլ տա-ալ... հասկացմք... (ցոյց է տալիս բռունցը) Տեմնում էք: Եթէ մէկ տամ, հոգին կաւանդէք:

ՄԻՍԱԿ.—Ի՞նչ էք ասում, ի սէր Աստուծոյ, ես ձեր կնոջը մի գուցէ մի անգամ հանած լինեմ:

ՄՈՐԿՎԻԼ.—Կէս անգամ էլ իրաւունք չունէք... ա-ա, երբ ես ձեզ սանձահարեցի...

ՄԻՍԱԿ.—Ի՞նչ էք ուզում գորանով ասել... ես ձեզանից վերջապէս չեմ վախենում:

ՄՈՐԿՎԻԼ.—Ի՞նչ... ի՞նչպէս... մեծաւորից... վաշտապետից չըվախենալ... անբարոյականութիւն... յեղափոխութիւն... Դուք գիտէք որ 24 ժամում ես ձեզ այստեղից...

ՄԻՍԱԿ.—Խնդրեմ, 48 ժամումն էլ ոչինչ չէք կարող անել... դուք իմ մեծաւորը չէք:

ՄՈՐԿՎԻԼ.—(ալշաճ) Մեծաւորը չեմ... ձեր մեծաւորը չեմ... էն ի՞նչ էր ձեր մեծաւորը չեմ (բարձրացնելով ձայնը). Կրկործանեմ, մի վայրկեանում կըկործանեմ:

ՄԻՍԱԿ.—Ես, ի՞նչ է, «կըկործանէք», «կը կործանէք»... աւելի լաւ է հանգիստ կերպով հասկացէք ի՞նչ եմ ասում... ի՞նչ էք կպել ի՞նձանից: Ես ձեր ամառանոցի առաջ ամենեին չեմ էլ անցնում:

ՄՈՐԿՎԻԼ.—Իսկ ով է անցնում:

ՄԻՍԱԿ.—Ես ի՞նչ գիտեմ:

ՄՈՐԿՎԻԼ.—Իսկ ես գիտեմ որ զնւք էք:

ՄԻՍԱԿ.—Իսկ ես գիտեմ որ ես չեմ:

ՄՈՐԿՎԻԼ.—Չեմ հաւատում, ոչ մի պայմանով չեմ հաւատում... այժմեան երիտասարդները այնչափ անբարոյական են, որ սիրահարութեան համար ամեն բանին ընդունակ են:

ՄԻՍԱԿ.—Իսկ եթէ չէք հաւատում, խընդրեմ ինձ հանգիստ թողնել, ես ժամանակ չունեմ. ես պէտք է միս ծեծեմ.

ՄՈՐԿՎԻԼ.—Ի՞նչ... ի՞նչպէս թէ ծեծել,
ում...

ՄԻՍԱԿ.—Միս ծեծել, կատյետի համարք
չեռացէք վերջապէս գլխիցն:

ՄՈՐԿՎԻԼ.—(բարկանալով) ի՞նչպէս... ի՞նձ...
նախկին վաշտապետին դուրս անել... ես թոյլ
չեմ տալ... չեմ թոյլ տալ... ես ծեր մեծաւորին
կը գանգատուեմ:

ՄԻՍԱԿ.—Խնդրեմ... միայն դուրս կորէք:

ՄՈՐԿՎԻԼ.—(հպարտ) Մեծապատիւ պարոն,
դուք անկիրթ էք և լազուտ... վաղը ձեզ ծառա-
յութիւնից կը վունդեն և դուք յաւիտենական ար-
ձակուրդ կըստանաք:

ՄԻՍԱԿ.—Իմս դեռ յայտնի չէ, իսկ ձեր
կինը արդէն վաղուց է ձեզ արձակուրդ տուել:

ՄՈՐԿՎԻԼ.—Ի-ի-ի՞նչ, յանդնւգն:

ՄԻՍԱԿ.—(սառնածիրտ) Ոչինչ, ոչինչ...
դուրս կորէք: (Մօրկվիլածէն սպառնալիքով դուրս
է զնում միջին դոնից)

ՏԵՍԻԼ 7.

ՄԻՍԱԿ.—Շարունակում է մսի մնջենան
շրջել, եւ յանկարծ յիշելով լուսանկարների շըր-
ջանակների մասին, ընկնում է այս ու այն շըր-
ջանակները՝ նայելու, մօտենում է ամանին որի
մէջ լող են տալիս նկարները եւ անզգուշութեամբ
ջուրը թափում է մսի վերայ):

ՄԻՍԱԿ.—(երկար ժամանակ ապշած նա-
յում է մսի վերայ) Ահա քեզ և կատլետ...
(զգուշութեամբ լուսանկարի ամանը դնում է իւր
աեղը: Մտնում է Թորոսը խոհանոցի կողմից):

ԹՈՐՈՍ—Ոտքերս ջարդւեցին աղայ... սազ
դուքանները ման եկայ, ոչ մի տեղ չըգտայ...
մի տեղ գնացի մի ինչ որ սալդաթ սելեօտկայ
էր առնում, ասի ճկուրած Բստո. սալդաթը ա-
սաւ ովոտ տերէ կուրաժն ու իւմրուղը բռնեց
քթիս տակը:

ՄԻՍԱԿ.—Ախ Թորոս, ես քեզ ասացի վի-
րաժ ոչ թէ կուրաժն:

ԹՈՐՈՍ—Դէ, ես ի՞նչ իմանամ:

ՄԻՍԱԿ.—Իսկ թուղթը բերի՞ր:

ԹՈՐՈՍ—Ոչ:

ՄԻՍԱԿ.—Ի՞նչու:

ԹՈՐՈՍ—Ասին հարցրու, ինչ թուղթ ա ու-
զում... շաքարի... փոշտի... թէ ճանճերի:

ՄԻՍԱԿ.—Բայց չէ որ ես քեզ ասացի:

ԹՈՐՈՍ—(բարկացած) Դէ՞ս ես ժամանակ
չունեմ (մօտենալով մսին) ի՞նչ արիր միսը:

ԱԿԻՍԱԿ.—Միայն գիտես ի՞նչ, Թորոս, մի
փոքր ջուր թափուեց վրէն:

ԹՈՐՈՍ—(հոտ առնելով) Վա-այ, դեղ ես
թափել վրէն, աղայ, բա հմի ես ի՞նչ անեմ...
խանումը ի՞նչ կասի... (ծեռքերը գլխին դնելով):

ՄԻՍԱԿ.—Կազիք, Թորոս, նոր միս բեր...

քո փողից տուր ես քեզ ամսի 20-ին կըվճարեմ:

ԹՈՐՈՍ.—Ռնց չէ, էնա խաբեցիր... հազիր քո փողդ ինձ մօտ ա... կերթամ նոր միս կառնեմ:

ՄԻՍԱԿ.—Բայց Թորոս... այդ վերջին փողս է... դա թուղթի և վիրաժի համար է:

ԹՈՐՈՍ.—Կուրաժ-մուրաժ ես չըգիտեմ... իմ դարդս կատլետն ա (վերցնելով մսի մեջենան, արագ գնում է դէպի խոհանոց):

ՏԵՍԻԼ 8

ՄԻՍԱԿ.—(մտածմոնի մէջ) Ի՞նչ անեմ այժմ, մի բան գրաւ դնեմ... բայց ի՞նչ... տանից դուրս գնալ էլ չեմ կարող... կօշիկս տուել եմ կարկատելու (զանգի ծայն): Ո՞վ կարող է լինել: (Մօտենում է միջին դռներին, մտնում է կօշկակար Սիսոյեանը) Աա... պարոն Սիսոյեան. շատ ուրախ եմ, պյուպէս ուրախ եմ որ դուք վերջապէս շնորհ բերիք... նստեցէք խնդրեմ... էն, ի՞նչ, վերջացրիք արդէն... շատ ուրախ եմ:

ՄԻՍ.—(նստելով) Այս պարոն, միայն առանց փողի չեմ տալ:

ՄԻՍԱԿ.—Էհ... վհաղ... ի՞նչ բան է փողը... ձեռքի կեղտ է... փողը կարող է լինել և չըմինել, ահա կօշիկը... այլ բան է... իսկ փողը...

Ի՞նչ է փողը. ահա Շիրվանզադէն էլ ասում է... դուք Շիրվանզադէի գրուածքը կարդացել էք... ոչ, շատ լաւ հեղինակ է... կամենաք ես ձեզ տամ կարդալու:

ՄԻՍ.—Շնորհակալ ենք, մենք ժամանակ չունենք կարդալու:

ՄԻՍԱԿ.—Շատ ափսոս... իսկ ձեր կարծիքը կօշիկների մասին:

ՄԻՍ.—Փողերը տուէք և կօշիկները վերցրէք:

ՄԻՍԱԿ.—Ի՞նչ տարօրինակ մարդ էք եղել պ. Սիսոյեան... փող չունեմ և կօշիկներ չունեմ... ի՞նչպէս կարող եմ առանց կօշիկների փող գտնել:

ՄԻՍ.—Այլապէս չեմ կարող:

ՄԻՍԱԿ.—Այսինքն... այդ ի՞նչի մասին... ՄԻՍ.—Պյոն որ սպասել չեմ կարող:

ՄԻՍԱԿ.—Ի՞նչ տարօրինակ մարդ էք, ճշմարիտ, սպասեցէք մինչև 20-ը:

ՄԻՍ.—(վճռական) Ամենեին չեմ կարող. առանց այն էլ ձեզ վերայ հաշիւ կայ:

ՄԻՍԱԿ.—Ռըքան է:

ՄԻՍ.—Երեք բուրպի 30 կոպէկ:

ՄԻՍԱԿ.—Ես ձեզ 25 կըտամ միայն սպասեցէք:

ՄԻՍ.—Զեմ կարող համաձայնութիւն տալ:

ՄԻՍԱԿ.—Ի՞նչ ձեր ասածի մարդ էք, ճշմա-

ըիտ... իսկ ես ուզում էի ձեզ համար գրամաշ-
ֆօնը լարեմ... գիտէք... «կոռունկ» (Երգում է)
«կոռունկ ուստի գուքաս...»

ՍԻՄ.—Ինձ «կոռունկներով» չես խափիլ,
մնացէք խաղաղութեամբ (դուքս է զնում միջն
դռնից):

ՏԵՍԻԼ 9

ՄԻՍԱԿԵԱՆ և յետոյ ԶԱՔԱՐԵԱՆ

ՄԻՍԱԿ.—(բարկացած ման է զալիս) Ի՞նչ
անեմ, ի՞նչ անեմ... մի՞ գուցէ չեմօդանի խոր-
քերում բան մնացած լինի: (վնտրում է) Ո՞չի՞նչ...
(հանում է մի թղթի կտոր եւ կարլում): Եղել է
200 ըուբի: Վերցրած է 30 կոպէկ, 50 կոպ.,
1 ըուբի, 1 ըուբի 25 կ., հինգ ըուբ., տասը...
և այլն: Ահա, ահա թէ ի՞նչ օրը հասցրեց ինձ
իմ լուսանկարչութիւնը: Ի՞նչ է մնում ինձ ա-
նել, եթէ ոչ դիմել անձնասպանութեան: Որտե-
ղից ես կարող եմ ճարել 200 ըուբի... ոչ, պէտք
է անձնասպանութիւն գործել, թէև վաղաժամ
մահ է: Գիմնազիայից ինձ վրնդեցին վաղաժամ,
սիրահարուեցի վաղաժամ, կընշանակէ վաղա-
ժամ էլ պիտի մեռնեմ... ի՞նչ արած, ճակատա-
գիր է, բախտ... (մտնում է Զաքարեանը):

ԶԱՔԱՐ.—Ի՞նչ ես այդտեղ փնթինթում...
ներկայացման մասնակցելու ես պատրաստւում:

ՄԻՍԱԿ.—(մոլորուած) Այն... այն...

ԶԱՔԱՐ.—Ահա թէ ի՞նչ, չամլետ պիտի ներ-
կայացնես թէ Օթէլլօ: Միայն, Փօրժիկ, այդ
ի՞նչ է քո երեսի գոյնը, հիւանդ չ՞ս արդեօք:
ՄԻՍԱԿ.—(յուասհատուած) Է՞հ, հիւանդ լի-
նեմ չըլինեմ միւնոյն է, պէտք է մեռնեմ:

ԶԱՔԱՐ.—Ի՞նչ է պատահել:

ՄԻՍԱԿ.—Միւնոյն է չես կարող օգնել:

ԶԱՔԱՐ.—Բայց ի՞նչ է պատահել... այդ
վերջապէս ընկերաբար չէ:

ՄԻՍԱԿ.—Ահա երբ ծառայութիւնիցս գուրս
կըվրնդեն այն ժամանակ կիմանաս... (պատզա)
արքունական փողերն եմ վատնել:

ԶԱՔԱՐ.—Շատ:

ՄԻՍԱԿ.—Երկու հարիւր:

ԶԱՔԱՐ.—Ես այդպէս էլ գիտէի... և երեկ
քո այդ յիմար լուսանկարչութեան վերայ...
նախ վելօսիպեգով էիր գըաւուած, յետոյ գըա-
մաֆօնով, իսկ այժմ այս յիմար լուսանկար-
չութեամբ... ասա խնդրեմ ապուշ չ՞ս դու...
դատարկադուիմ... յիմար... էշ... ի՞նչ անենք
այժմ:

ՄԻՍԱԿ.—Ես պէտք է մեռնեմ:

ԶԱՔԱՐ.—(ձաղը.) Միթէ:

ՄԻՍԱԿ.—Ուրիշ բան չի մնում անելու:

ԶԱՔԱՐ.—Իսկ ի՞նչ կասես եթէ ես գնամ
և մի շիշ կարմիր գինի բերեմ...

ՄԻՍԱԿ.—Այդ չի օգնիլ... այժմ ինձ ոչ
մի բան չի կարող մխիթարել...

ԶԱՔԱՐ.—Իսկ Սիւզիկը:

ՄԻՍԱԿ.—Ի՞նչ Սիւզիկ... ես նորա համար
այլևս գոյութիւն չունեմ:

ԶԱՔԱՐ.—Թողի ի սէր Աստուծոյ: Մեծ բան
է երկու հարիւր րուբլին: Քեզանից մեծ գու-
մարներ վատնողներ կան և գլուխը չեն սպա-
նում... Մի տեղից կըճարենք: Գիտես ի՞նչ, աւե-
լի լաւ է գուրս գնանք մի փոքր մաքուր օդ
ծծելու:

ՄԻՍԱԿ.—Չեմ կարող, կօշիկներ չունեմ...
գիտես ի՞նչ բարեկամ, գնա կօշկակար Սիսոյեա-
նի մօտ և վերցրու իմ կօշիկները, առանց փողի
չի տալիս... դու տուր իմ փոխարէն, իսկ ես
քեզ ամսի 20 ին կըվերադարձնեմ:

ԶԱՔԱՐ.—Չես խաբում... կըվերադարձնես:

ՄԻՍԱԿ.—Տէր Աստուած, ի հարկէ կըվե-
րադարձնեմ:

ԶԱՔԱՐ.—Իսկ մինչեւ վերադառնալս, անձ-
նասպանութիւն չես գործիլ...

ՄԻՍԱԿ.—Ի՞նչ ես կպել ինձանից... ասում
եմ ոչ:

ՏԵՍԻԼ 10

ՄԻՍԱԿԵԱՆ (առանձին)

ՄԻՍԱԿ.—Սուտ է ասում Զաքարեանը, որ
կըգտնէ... ով կըտայ նորան 200 րուբլի... նա

ինձ միայն հանգստացնելու համար է ասում:
Ամեն բան կորած է... պէտք է շտապել... քա-
նի որ ոչ ոք չըկայ: (տխուր հայեացք ձգելով
սենեակի մէջ զտնուած իրերին) Ափսոս են ի-
րերը... պէտք է կարգագրութիւն անել: (նստում
է եւ զրում) Գրամաֆոնը կտակում եմ իմ բա-
րեկամ Զաքարեանին, լուսանկարչական բոլոր
գործիքները կօշկակար Սիսոյեանին, մասցած
իրերը ծառայ թորոսին... Սիւզիկին կուզէի մի
քանի տող գրել, բայց անյարմար է արատաւո-
րել օրիորդի պատիւը: (վեր է կենում, վերցնում
է պատից քարշ արած հրացանը լցնում է, կտ-
պում է սեղանից, հրացանի ոտքից կապում է
թոկ, վերցնում ծեռքը եւ հեռանում է, կանգ-
նելով հրացանի ղիմացը) Մնան բարեաւ կեանք...
ում համար գու մայր ես եղել, իսկ ինձ համար
ցաւ (պատրաստում է թոկը ձգել) Մէկ... եր-
կու... վախենում եմ (թողնում է ծեռքից թոկը
եւ ման է զալիս) Էհ... ոչինչ... այդ անսովորու-
թիւնիցն է, փորձենք նորից (վերցնում է նորից
թոկը) Մէկ... երկու... ոչ գարձեալ վախենում
եմ (քաց է թողնում թոկը): Պէտք մի փոքր հան-
գստանալ: (նստում է, ծեռքերով ծածկում երեսը
եւ յանկարծ վճռողաբար վեր է թոշում տեղից
եւ պատրաստում է անիիջապէս թոկը ձգել)
Ի՞նչ յիմարն եմ, նստել եմ հանգիստ, իսկ ամեն
մի բոպէ Զաքարեանը կարող է ներս մտնել:

(այդ միջոցին ներս են մտնում Զաքարեանը թև Սիւզիկը):

ՏԵՍԻԼ 11

ՄԻՄԱԿԵԱՆ, ԶԱՔԱՐԵԱՆ, ՍԻՒԶԻԿ ԵՒ ԹՈՐՈՍ

ԶԱՔԱՐ.—Ախ, (Սիւզիկը եւ Միսակեանը ուշաթափում են):

ԶԱՔԱՐ.—Թորոս, Թորոս, Չուր, Ջուր (մտնում է Թորոսը վեղրայով):

ԹՈՐՈՍ—Ի՞նչ է, հրդեհ է:

ԶԱՔԱՐ.—(ցոյց տալով Սիւզիկի եւ Միսակեանի վերայ) Ածա:

ԹՈՐՈՍ—Ումից սկսեմ:

ԶԱՔԱՐ.—Միւնոյն է, ածա:

(Թորոսը նախ ածում է վեղրոյից Միսակեանի վերայ յետոյ Սիւզիկի եւ դուրս գնում):

ՄԻՄԱԿ.—(ուշի գալով յարձակում է Զաքարեանի վերայ) Ո՞ր սատանան ձեզ բերեց այսպիսի բոպէին... չեք թողնի մարդ հանգիստ մեռնի ի՞նչ է... ի՞նչու խանգարեցիք... եթէ դուք չըլինէիք ես վաղուց մեռած կըլինէի... և այդ բոլորը քո բաներն է... յիմար: Քեզ ով խնդրեց ինձ ազատել... մեծ լաւութիւն ես արել, ի՞նչ ասած: Այժմ ես ի՞նչ պէտք է անեմ այս յիմար աշխարհում (այդ-միջոցին Սիւզիկը ուշը է գալիս):

ՍԻՒԶԻԿ—Ժօրժիկ, սիրելիս, դու կենդանի ես:

ՍԻՒԶԻԿ.—Դժբաղտաբար կենդանի եմ:
ՍԻՒԶԻԿ—Իմ սիրելիս...

ՄԻՄԱԿ.—Միք մօտենալ ինձ, ես ոճրագործ եմ: (ովհելով Զաքարեանին) Տար ինձ ուտիկանատուն, բանտը, դէպի կախաղան ուր որ լինի...մեծարգոյ օր. Սիւզիկ, ես ձեզ կորցնում եմ ընդմիշտ... ես արժանի չեմ ձեզ... վերջապէս... մաք բարե (ուզում է փախչել):

ԶԱՔԱՐ.—Խելագար... դու առանց կօշիկի ես:

ՄԻՄԱԿ.—Միւնոյն է... թողէք...

ՍԻՒԶԻԿ—Ի՞նձ էլ կասէք միւնոյն է (ոտքը խփելով յատակին): Ես ուզում եմ որ դուք իմ ամուսինը լինէք:

ՄԻՄԱԿ.—Բայց...

ՍԻՒԶԻԿ—(ընդմիշելով) Զըհամարձակուէք պատասխանել: Եւ ի՞նչ կարող էք պատասխանել... մի յիմար բան... բոլոր տղամարդկիկ յիմար են դատում:

ԶԱՔԱՐ.—Օհօ. այդ ով է սովորեցրել ձեզ:

ՍԻՒԶԻԿ—Մայրս: Իմ մայրը խելօք կին է:

ԶԱՔԱՐ.—Ուրեմն Ժօրժիկ, կարող եմ շնորհաւորել քեզ եթէ ոստիկանութեան ձեռքը չը ընկալը այսպիսի կնոջ և մանաւանդ զօքանչի ձեռքն ես ընկնում:

ՍԻՒԶԻԿ—(նայում է նորան արհամարհանքով): Այդ երեխ խանդիցն է: (Միսակեանին) Փօրժիկ, ուզում էք ինձ հետ ամուսնանալ: (Միսակեանը լրում է): Այս, ի հարկէ ուզում է: (Զաքարեանին) Լոռովիւնը համաձայնութեան նշան է: Փօրժիկը ամուսնանում է: (Զաքարեանին) իսկ դժւք, (չիթ է ցոյց տալիս) ահա ձեզ: (Միսակեանին): Եէ Փօրժիկ, երթանք հայրիկիս և մայրիկիս մօտ... ընկնենք ոտքերը ասելով մենք միմեանց սիրում ենք և... և տուէք մեզ 200 բուրլի... հայրիկս արկղից կըհանի 200 բուրլին և կասի ահա ձեզ սիրելի զաւակներս, երջանիկ լինէք: Եւ մենք անմիջապէս կըլինենք և մուսիններ, ախ, ինչ լաւ է, իսկ ձեզ պարոն Զաքարեան (նորից չիթ է ցոյց տալիս եւ ընվերանս անում) ահա ձեզ: Եհ, ինչ ես մտածում Փօրժիկ, հայրիկս և մայրիկս պէտք է գնան կայրան... և եթէ մենք ուշանանք ամեն բան կուրած է:

ՄԻՍԱԿ.—Զեմ կարող, ես կօշիկներ չունեմ:

ՍԻՒԶԻԿ—Լսեցէք պարոն Զաքարեան, հանեցէք ձեր կօշիկները:

ԶԱՔԱՐԾ.—(բարկացած) Զեմ կամենում:

ՍԻՒԶԻԿ—(չմահացութեամբ) Իսկ ես կամենում եմ:

ԶԱՔԱՐԾ.—Ինձ ինչ, որ դուք կամենում էք, պէտք է որ ես էլ կամենամ:

ՍԻՒԶԻԿ—Ինչ անտաշն էք, միթէ չէք հասկանում որ ձեզ խնդրում է օրիորդը:

ԶԱՔԱՐԾ.—Զեմ հանիլ, երբէք չեմ հանիլ:

ՍԻՒԶԻԿ—(ինդրանօք) Սիրելի Զաքարեան, հանեցէք խնդրեմ ձեր կօշիկները... ինձ համար:

ԶԱՔԱՐԾ.—Զեզ հետ ես ոչ մի գործ չեմ կամենում ունենալ:

ՍԻՒԶԻԿ—Խնդրում եմ ձեզ, պարոն Զաքարեան, եթէ այդ ինձ համար չէք ուզում անել, գոնէ Փօրժիկի սիրոյ համար... չէ որ նա ձեր ամենալաւ ընկերն է:

ԶԱՔԱՐԾ.—Այդ պատճառաւ էլ չեմ ուզում, որպինետև նա իմ լաւ ընկերն է:

ՍԻՒԶԻԿ—(կատաղի մօտենում է նորան) Ի՞նչ էք ուզում դորանով ասել, մեծապատիւ պարոն:

ԶԱՔԱՐԾ.—Այս, մեծապատիւ օրիորդ, որ ես չեմ կամենում իմ ընկերոջ դժբաղտացնել:

ՍԻՒԶԻԿ—(վրդոված) Առա ա... ահա թէ ի՞նչ... լաւ... ես ձեզ կըյիշեցնեմ... (հրամական) Ես ձեզ վերջին անգամն եմ հարցնում, կը հանէք ձեր կօշիկները թէ ոչ.

ԶԱՔԱՐԾ.—Ոչ:

ՍԻՒԶԻԿ—(կատաղի) Ո՞-նչ, լաւ, շատ լաւ, ես ձեզ անմիջապէս այնպիսի սկանդալ կըսարքեմ, այնպիսի...

ԶԱՔԱՐԾ.—(ժալտալով) Ի՞նչ արած, Փօրժիկ,

գնանք շիրմայի յետելը կօշիկներս հանեմ։ (Զարարեանը եւ Միսակեանը գ'ում են շիրմայի յետելը) Իսկ սկանդալներ սարքելը, Սիւզիկ, ձեզ նմանապէս մայրիկն է սովորացրել։

Սիհջիկ—Ի հարկէ։ Մայրիկս ամենայն քանում ճարպիկ է։ Երբ մայրիկս սկանդալներ էր անում, ես միշտ դրան ճեխրից նայում էի... տղամարդկանց հետ այլ կերպ չէ կարելի... հայրիկս հէնց որ սկսում է մի փոքր հակառակ խօսել, մայրիկս անմիջապէս սկանդալ է անում... այդ ամենալաւ միջոցն է տղամարդկանց սահմահարելու համար։

ԶԱՅԱՐ.՝ Կեցցէս Սիւզիկ, դուք երևելի ամուսին կը լինիք։ (Միսակեանը եւ Զարարեանը դուրս են զայիս շիրմայի յետելից, առաջինը կօշիկներով իսկ երերողը տուժլեաներով) Դէհ զաւակներս, դուք ազատ էք։

Սիհջիկ—(ըսնելով Միսակ. թելից) Մնաք բարե պարոն Զաքարեան։ Սիս որքան ուրախ եմ, որքան ուրախ։

ԶԱՅԱՐ.՝ Ի՞նչու մասին էք ուրախանում, որ ես առանց կօշիկների՞ մնացի։

Սիհջիկ—Այդ էլ է ինձ զուարձութիւն պատճառում. բայց պարոն Զաքարեան ես ձեզ վերայ այլևս չեմ բարկանում և ի սրտէ ցանկանում եմ, որ դուք նմանապէս շուտով ամուսնաք, դէ գնանք ֆօրժիկ։

ՄԻՍԱԿ.՝ Սիւզիկ, իսկ այսօր ինձ կարելի է ժամը 4-ին գնալ Աքիմեանէնց մօտ։
Սիհջիկ—Այդ ինչ է նշանակում։ Երբէք։
ՄԻՍԱԿ.՝ Բայց, Սիւզիկ, չէ որ նոքա իմ մեծաւորն էն։

Սիհջիկ—Լսել անդամ չեմ կամենում... Այսօրուանից ընդմիշտ քո մեծաւորը ես եմ, հասկացացր։

ԶԱՅԱՐ.՝ Աըդէն երկում են ամուսնական շղթաների կոկոմները։ (Միսակեանին) Ոչինչ սիրելիս մի գուցէ կընաելանաս...։

Սիհջիկ—(անհամբեր) Գնանք շուտով ֆօրժիկ... կարող ենք յանկարծ ուշանալ։

ՄԻՍԱԿ.՝ (Ոյժ առնելով) Սիրելի Սիւզիկ... չընայած որ ես շատ նուիրուած եմ ձեզ... բայց դժբաղտաբար ես չեմ կարող ձեզ հետ ամուսնանալ... ես այնպէս երիտասարդ եմ և այնպէս անփորձ... խղճացէք ինձ։

Սիհջիկ—Այդ ոչինչ, ընդհակառակը այդ մինչև անդամ շատ լաւ է. մայրիկս ասում է որ երիտասարդ ժամանակը պէտք է մարդիկ պսակուեն։

ՄԻՍԱԿ.՝ Եւ բացի դորանից ես այնպէս քիչ սոճիկ եմ ստանում... միայն 40 ըուբելի... ոչ մի ուսման վկայական էլ չունեմ...։

Սիհջիկ—Այդ էլ ոչինչ, մենք մի այնպիսի քեռի ունենք, որ համարեա կախարդ է...։

նա հայրիկիս արդէն վաղուց է ձեզ համար պաշտօն խոստացել և լաւ պաշտօն։ (Միսակեանը մոլորուել է):

ԶԱՔԱՐ.—Ել ի՞նչ ես մոլորուել, յիմար, գոհ եղիր քո վիճակից և պրծաւ գնաց։

ՄԻՍԱԿ.—Ես... ես ոչինչ... ես միայն...

ԶԱՔԱՐ.—Ինչ միայն... սորանից լաւ ի՞նչ ես ուզում։

ՄԻՍԱԿ.—(վախեն.) Ես միայն վախենում եմ ազատութեան մասին...»

ԶԱՔԱՐ.—Խա, խա, խա։ Ինչի՞դ է պէտք քո ազատութիւնը (ցոյց տալով հայեացքով հրացանը) չըտեսար թէ ուր բերեց քեզ քո ազատութիւնը։ Այդպիսի անձնաւորութեան համար ինչպէս դու ես, քեզ պէտք է ձեռքի մէջ պահել։ Սիւզիկից լաւ ամուսին դու չես գտնիլ...

ՄԻՍԱԿ.—Բայց չէ որ դու ի՞նքդ ասում էիր...

ԶԱՔԱՐ.—Ես քեզ ոչինչ չեմ ասել կամ դու ինձ լաւ չես հասկացել... խոնարհուիր ծնկաչոք քո նշանածիդ առաջ և ներողութիւն իրնդրիր։

ՄԻՍԱԿ.—(շոքելով Սիւզիկի առաջ) Սիրելի, այսինքն յարգելի օր. Սիւզիկ, ներեցէք ինձ խնդրեմ որ ես չէի վստահանում ձեզ հետ ամուսնանալ... բայց... բայց այդ... այդ բոլորը Զաքարեանի մեղն էր... նա ինձ վախեցնում էր

իսկ այժմ... այժմ ես ամենկին չեմ վախենում։ Սիհջիկ—(մեկնելով ծեռքը) Ներում եմ... միայն մի պայմանաւ. միշտ և ամեն բանում ինձ պէտք է խոնարհուէք։

ՄԻՍԱԿ.—(համբուրելով ծեռքը եւ ընկճուած ծայնով) Ես... ես համաձայն եմ։

ԶԱՔԱՐ.—Դէ քաջ ասպետ, վեր կաց, և համբուրիր քո նշանածիդ։ (Միսակեանը վեր է կենում եւ քաշուելով համբուրում է Սիւզիկին) Էհ բարեկամներս, իսկ այժմ գնացէք հայրիկի և մայրիկի մօտ, որ նոքա ձեզ օրհնեն... միայն խնդրում եմ չըմոռանաք, որ ես այստեղ սպասում եմ ձեզ առանց կօշիկների։

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

Հ

ԲԱՐԵԼՈՆԵԱՆ ԽԱՌԱՎԿՈՒԹԻՒՆ

Կոմ. 1 արարուածով

Փոխ.

Պ. ԱՐԱՔՍԵԱՆ

ԴՈՐԺԱՊԼ ԸՆՉԻՆՔ

ԻԻԱՆ ՆԻԿԻՏԻՉ ՏՈՒՐԱԲԵԱՆ:
ՍՕՅԻԱ, նորա աղջիկը:
ԱՂԵԲՄԱՆԴՐ ՍԱԴՈՒԽԵԱՆ, նկարիչ:
ՄԱԶՈՒԹԵԱՆ, երիտասարդ, բագուի հանքատէր:
ԵԼԵՆԱ, Սօֆիայի դաստիարակչուհին:
ՍՏԵՓԱՆ, Տուրաբեանի ծառան:

Անցըլ կատարւում է ամառանոցում:

Քեմը ներկայացնում է շքեղ զարդարուած սենեակ։
Աջ կողմից դրտ, որը տանում է Տուրաբեանի սե-
նեակը։ Հեռուից երեսում են լեռներ, լուսատրուած
լուսինով, աջ կողմը սեղան, սպիտակ սփոցով
ծածկուած եւ երեք հոգու սեղան զցած, վերեւից
քարշ է արած ճաղ, ճախ միջին դռան մօտ քու-
ֆետ, բազմոց, բազկաթոռներ եւ սեղան, որի վե-
րայ դրուած է պատկերակալ։ Պատերի վելայ
նոյնպէս պատկերներ եւ այլն։

ՏԵՍԻԼ 1

Ելենան, աջ կողմից մտնում է Ստեփանը
լամպը ծիռքին։

ԵԼԵՆԱ.—Ահա, դիր այստեղ, իսկ հիւրասե-
նեակում բոլորը պատրաստ է։

ՍՏԵՓ.— Ամենագեղեցիկ կերպով, (դնում է
լամպը):

ԵԼԵՆԱ.—Լաւ, և իսկը Աստուծոյ մի մոռա-
նար, զգոյշ եղիր, ապա թէ ոչ նորից կըսլքուես
և փոխարէն գինին բաժակը ածելու, կըթափես
հիւրի օձիքը, ինչպէս այս օրերս արիր։

ՍՏԵՓ.— Այն գինի չէր, այլ տապակիի իւղ էր։

ԵԼԵՆԱ.—Բաւական է դատարկ գուրոս տալ։

ՍՏԵՓԱՆ—(մէկուաի) Դու ինքդ ես դատարկ։

(Քաղաք) Ասացէք ինդրեմ, Ելենա Պավլօվնա, այս
ինչ պատրաստութիւններ են: Այսօր մեզ մօտ
հիւր է գալու:

ԵԼԵՆԱ.—Հիւր... բայց դա գաղտնիք է և տես
որ ոչ ոքի մօտ դուքս չըտաս:

ՍՏԵՓ.—Անհոգ եղէք:

ԵԼԵՆԱ.—Դէ լաւ, գնա:

ՍՏԵՓ.—Իսկ ինչո՞ւ մի է գաղտնիքը:

ԵԼԵՆԱ.—Ոչ, այդ ես քեզ չեմ ասիլ... ո-
րովհետեւ... որովհետեւ (ինքն իրան) ես ինքս չը
գիտեմ:

ՏԵՍԻԼ 2

ՆՈՅՆՔ, աջ կողմից ՏՈՒՐԱԲԵԱՆ

ՏՈՒՐԱԲ.—Ինչ կայ, ամեն քանը կարգին
է: (Նայում է ժամացոյցին) Կէս ժամից յետոյ
նա կարող է այսուեղ լինել, ինչ տեսակ պինի
չը պատրաստել (մօտենում է սեղանին): Այդա-
նիլ 76 թուականի... հիանալի, նա երեխ ճանա-
պարհից լաւ ախորժակ կունենայ... ինչ էք պա-
տուիրել ընթրիքի համար:

ԵԼԵՆԱ.—Թագա ձուկ:

ՏՈՒՐԱԲ.—Հիանալի:

ԵԼԵՆԱ.—Ըւ տապակած վահիկներ:

ՏՈՒՐԱԲ.—Այդ էլ վաստ չէ, հասարակ, բայց

հաճելի... և սեղանը երեք մարդու համար է պատ-
րաստումծ:

ԵԼԵՆԱ.—Ինչպէս միշտ:

ՏՈՒՐԱԲ.—Մենք կաւելացնենք չորրորդը,
երբ նա այստեղ կը լինի... այնպէս կը ձեւացնենք
իբր թէ ոչ ոքին չէինք սպասում: Ընթրիքը պէտք
է լինի բոլորովին հասարակ:

ՍՏԵՓ.—Եւ մինչև անգամ բոլորովին հասա-
րակ:

ՏՈՒՐԱԲ.—Ա՞մ, դու էլ այստեղ ես... խընդ-
դեմ դատարկ դուրս չըտաս, մանաւանդ օրիոր-
դի մօտ: Մենք ոչ ոքի չենք սպասում, մեր հիւ-
րին մենք բոլորովին չենք ճանաչում և պիտի
զարմանանք նորա այցելութեան:

ՍՏԵՓ.—Ես այնպէս կը զարմանամ, ահա կը
պեսնէք:

ՏՈՒՐԱԲ.—Բաւական է, հեռացիր:

ՍՏԵՓ.—(զնում է եւ զրներում կանգ պոնում)
Պարզն, մենք այստեղ բենգալեան կրակներ ու-
նենք, կը հրամայէք վառեմ:

ՏՈՒՐԱԲ.—Ցիմար, չէ որ ես քեզ ասացի,
թէ մենք իբր թէ ոչ ոքին չենք սպասում:

ՍՏԵՓ.—Շատ էլ չենք սպասում, բայց բա-
նի որ գալիս է:

ՏՈՒՐԱԲ.—Դուրս յիմար:

ԵԼԵՆԱ.—Տես որ բան չըկոտրես կամ չըթա-
փես:

ՍՏԵՓ.—(ինքն իրան) Այս մի անիլ, այն մի անիլ... խելքս գլխիս չեն թողնում, ի հարկէ բան կը կոտրեմ։ (կողպում է միջին դոտը եւ գնում է աջ)։

ՏԵՍԻԼ 3

ՏՈՒՐԱԲԵԱՆ և ԵԼԵՆԱ

ՏՈՒՐԱԲ.—Ուր է Սօֆիան։

ԵԼԵՆԱ.—Դեռ չէ վերադարձել զբուանքից։

ՏՈՒՐԱԲ.—Քանի անգամ ես նորան խընդրել եմ չըգնալ այսպէս ուշ ձիով զբունելու։ Մակայն այսօր նորա բացակայութիւնը ձեռնու է, նա չի նկատի մեր պատրաստութիւնները... նորա առաջ մենք նոյնպէս պիտի դարմանանք մեր հիւրի այցելութեանը։ Դուք ինձ հասկանում էք։

ԵԼԵՆԱ.—Ո՞չ։

ՏՈՒՐԱԲ.—Սօֆիային արդէն ժամանակ է մարդու տալու։ Բաղտի բերմամբ այնպէս մի փեսացու է դտնուել, որից լաւ ցանկալ անգամ չի կարելի։ Դուք երեխ հասկանում էք, որ խօսքս մեր երիտասարդ Մաղութեանի մասին է, նորա հօրը ես ճանաչում եմ դեռ մանկութիւնից, որդուն, ճշմարիտ է եօթ տարեկան հասակից տեսած չեմ, որովհետև նա ուսանում էր արտասահմանում, բայց նորա մասին ես ժո-

զովել եմ ամենաճիշտ տեղեկութիւններ։ Մազութեանները վաղուց յայտնի են Բաքւում, իբրև հարուստ և բոլորին յարգելի առետրական ընկերութիւն։ նոքա ահագին նաւթային հանքեր ունեն, ինքը հայրը յայտնեց ինձ իւր ցանկութիւնը և ես ուրախացայ: Լսեցէք: «Սիրելի իւան, քո նամակդ ինձ ամեննեին չըվշտացրեց... ընդհակառակը եթէ քո զաւակը մի փոքր ցնորքների է ենթարկուած, այդ շատ լաւ է, որովհետև այդ բանը իմ որդուս ճաշակով է և ես կարծում եմ, որ նորանց բնաւորութիւնները համապատասխան կըլինեն։ իմանալով այդ, նա արդէն հնարել է մի նախագիծ, որը յայտնեց ինձ իրք գաղտնիք, և ես հաղորդում եմ քեզ»։ Ի հարկէ գուք ևս պիտի... որովհետև ես ձեզ կարդում եմ, պահէք գաղանիքը։

ԵԼԵՆԱ.—Ինչպէս սրբութիւն։

ՏՈՒՐԱԲ.—(կարդում է) «Ուրախացաւ նաև այցելել ձեր ամառանոցը և օգոստոսի 24-ին նա յարմար զգեստով կըներկայանայ ձեզ»։

ԵԼԵՆԱ.—Այսօր։

ՏՈՒՐԱԲ.—Այսօր: (կարդում է) «Գիշեր ժամանակ ինչպէս ճանապարհից մոլորուած նկարիչ, կըգայ խնդրելու քեզանից ապաստարան որպէսզի զբաւէ օրիորդի ուշադրութիւնը, նա կընդունէ այդ գիշեր յայտնի նկարիչ երիտասարդ Մաղունեանի անունը, որի անունը ինչ-

պէս քեզ յայտնի է վերջին ժամանակներս ըսկում է հռչակուել. կըհաւանէք նորան շատ լաւ, հակառակ դէպբում դուրս կըգայ այն, որ նկարիչ Մազունեանը մի դիշեր ունեցել է ձեզ մօտ ապաստարան և առաւօտեան գնացել է շարունակելու իւր ճանապարհորդութիւնը։ Սրտով նուիրուած ձեզ Ա. Մազութեան։ Է՞ն, ի՞նչ կասէք. (պահում է նամակը) ահա և նա (մտնում է Սօֆիան ամազօնկ. զգեստով):

ՏԵՍԻԼ 4

ՍՕՅ. — Ա՞ն ի՞նչ հրաշալի երեկոյ է։

ՏՈՒԻՐԱԲ. — Ա, դու նորից միայնակ է՞ր... գիշերով... քանի անգամ ես խնդրել եմ...

ՍՕՅ. — Ախ հայրիկ, ի՞նչպէս քեզ չէ սազում երբ դու բարկանում ես, ի՞նչ կայ այստեղ. մարդիկը լիքն են փողոցներում։

ՏՈՒԻՐԱԲ. — Միկնոյն է, այդ անվայել է մի գեռահաս օրիորդի համար. այլ բան է, եթէ դու ամուսնացած լինէիր... այնպէս չէ, ելենա Պավլովսա, տիկնող բանը ուրիշ է։

ՍՕՅ. — (հեղնօրէն) Ուրեմն, իմ զաւակս, ամուսնացիր երիտասարդ Մազութեանի հետ, մեր յայտնի նաւթահանքատէրի հետ։

ՏՈՒԻՐԱԲ. — Ցիմար... յիմար կատակ։

ՍՕՅ. — Մազութեան... և ես նորան կըկանչեմ, ախ դու իմ սիրելի Մազութ...

ՏՈՒԻՐԱԲ. — Բաւական է վերջացրու։

ՍՕՅ. — Այո, կըվերջացնեմ, երբ դու ևս կը վերջացնես, ի՞նչու ես դու այդպէս շտապում ինձ ամուսնացնել. մի չարչարիր ինձ, հայրիկս... ես այսօր այնպէս երջանիկ եմ, իսկ դու շատ ես խօսում ինձ հետ նաւթերի և մազութների մասին։ Շուրջս սարեր, դաշտեր, բարձր, մաքուր երկինքը լի է փայլուն աստղերով, նայիր նորանց, նայիր, լսիր ձայնին, ի՞նչպէս նրանք մեզ հետ խօսում եմ։

ՏՈՒԻՐԱԲ. — Թփիւ... աստղերի հետ է սկսել խօսել։

ՍՕՅ. — Ես սպասում եմ բանաստեղծական հոգի, ճակատին դրոշմուած տաղանդ, որպէսզի կարողանամ ձեռք ձեռքի տուած, հպարտ աջակցեմ նորան, նորա բոլոր գործերին։

ՏՈՒԻՐԱԲ. — Լաւ, շատ լաւ, թող լինի այդպէս, ես քեզ այլևս չեմ ձանձրացնի... երկուսս էլ սպասենք (կոմիկ ձեռով) բանաստեղծական հոգի, ճակատին դրոշմուած տաղանդ. սատանան գիտէ... նվ է իմանում, կարելի է և գայ այդ բանաստեղծական հոգին, ճակատին դրոշմուած... խա, խա, խա... կըսպասենք, կըսպասենք (զնում է աջ)։

ՍՕՅ. — (նայում է նըա ետելից զարմացած) Ախ ի՞նչ է նշանակում, Ելենա, այդ ծիծաղի տակ մի ի՞նչ որ դադանիք է եբեռում... սակայն այդ

ինձ չէ հետաքրքրում... σ τελενω, τελενω, իմ
խիստ վարժուհիս, իմացիր... բայց գեռ նստիր
այստեղ, այս բազկաթոռում, որ քեզ յարմար լի-
նի ուշաթափուել... ինձ հետ պատահեց իսկական
արկած։

ԵԼԵՆԱ.—Եւ դորանում խառն է տղամարդ։
ՍՕՅ. —Ի հարկէ... հակառակ դէպքում այդ
արկած չէր հաշուիլ։

ԵԼԵՆԱ.—Օ՛, պատմիր զաւակս, շուտով, շու-
տով, այդ շատ հետաքրքիր է։

ՍՕՅ. —Երևակայիր, այսօր ձին քշեցի դէ-
պի իմ սիրած աւերակները... բարձրացայ սարը,
իջայ ձիուցս, կապեցի նորան ծառից և նստե-
լով քարի վերայ ընկայ մտածմունքի մէջ... իմ
առաջ բացւում էր հերաշալի տեսարան, հեռուից
երևում էր լեռան զագաթը, որը փայլում էր
մայր մտնող արեի ճառագայթներից... առաջս-
ծառեր, բոյսեր, ես զգալով ինձ լաւ, սկսեցի եր-
գել։ «Արի իմ սոխակ» (Ելենան շունչ է քաշում)։
Յանկարծ։

ԵԼԵՆԱ.—(վախեցած) Ի՞՞նչ։

ՍՕՅ. —Նայում եմ ներքեւ... սարի տակին։
ԵԼԵՆԱ.—Մի երիտասամրդ։

ՍՕՅ. —Այո։

ԵԼԵՆԱ.—Դու վախեցար։

ՍՕՅ. —Երբէք... նա այնպիսի համակրելի և
քարի դէմք ունէր, այնպիսի քարի աչքեր... նա

ինձ բարեկեց, մենք սկսեցինք խօսել այդ տեսա-
րանի գեղեցկութեան մասին... բնութեան մա-
սին... և ինչպէս խելօք էր խօսում... նա ամեն
բան գիտէք, իսկ ժամանակը թռչում էր և ես
չընկատեցի ինչպէս արել մայր մտաւ ու շուրջու-
յանկարծ մթնեց։

ԵԼԵՆԱ.—Այ, այ։

ՍՕՅ. —Ես շտապեցի նստել ձիս... և նա...
նա ինձ օդնեց, նա ինձ բռնեց ձեռքիցս, իսկ
նորա միւս ձեռքին ես դրեցի իմ ոտքս, որ հեշ-
տութեամբ բարձրանամ։ Ձիուն սանձը բռնած
նա դուրս բերեց ինձ ճանապարհից և յետոյ ես
նկատեցի ինչպէս նա հետեւում էր ինձ իւր աշ-
քերով։

ԵԼԵՆԱ.—Ախ, ինչ սքանչելի է, ախ...։

ՍՕՅ. —Ի՞նչպէս, դու պէտք է ինձ խստու-
թեամբ խրատէիր, իսկ դու ախ ես բաշում և
աչքերիդ արտասուք է նկատւում։

ԵԼԵՆԱ.—Ախ, այդ լուսնեակ զիշերը և քո
այդ քնքոյշ պատմութիւնը... այդ ամենը ինձ
յիշեցնում է, որ ես էլ եմ ունեցել... այդպիսի
սքանչելի ըոպէներ. սորանից շատ տարի ա-
ռաջ... երբ գեռ ես մօրս հետն էի բնակւում, մի
երիտասարդ, թատրոնի ջութակահար, անունով
Սերժ, մեզ մօտ մի սենեակ էր վարձում. մեծ
տաղանդ ունէր նա, բայց նորան չէին գնահա-

տում, նա նոյնպէս գիշեր ժամանակ, երբ լուս-
սինը փայլում էր:

ՍՕՖ.—Խօսում էր բնութեան գեղեցկութեան
մասին:

ԵԼԵՆԱ.—Ո՞չ, ջութակի վերայ նուագում էր,
և մենք միասին լալիս էինք, հերթով էինք լա-
լիս: Մի անգամ նա ինձ ասում է՝ այստեղ ինձ
չեն գնահատում, ես պիտի գնամ Ամերիկա, մի-
այն չնչին բանն է ինձ արգելում, այն է ճանա-
պարհի փող չունեմ. ես մի փոքր ժառանգութիւն
ստացայ, 1000 րուբլի, պաղատում էի վերցնել
նորան այդ փողը... նա...

ՍՕՖ.—Հրաժարուեց:

ԵԼԵՆԱ.—Ոչ, վերցրեց փողը և գնաց, ան-
յայտացաւ... իսկ ես ստիպուած էի վարժուհի
դառնալ: Արտիստները երևելի մարդիկ են:

ՍՕՖ.—Ի հարկէ արհեստը ազնուացնում է
մարդու սիրտը, իսկ հայրիկս այդ չէ կարողա-
նում հասկանալ, նա երևակայում է, որ ինձ հա-
մար միայն նկարիչ անունն է հարկաւոր... եր-
բէք, ինձ սիրտ է հարկաւոր, ոգի, բանաստեղ-
ծական ոգի, ի՞նչ ես կարծում, կըհանդիպենք
մենք մի անգամ ես:

ԵԼԵՆԱ.—Ես բոլորովին համոզուած եմ, որ
նա կըվերագանայ Ամերիկայից:

ՍՕՖ.—Ո՞վ:

ԵԼԵՆԱ.—Բայց այս, չէ որ դու քոնի մա-

սին էր... լաւ, լաւ բաւական է. այս ցնորքնե-
րի մէջ ես մոռանում եմ մեր հիւրին:

ՍՕՖ.—Ի՞նչ հիւրին:
ԵԼԵՆԱ.—Այ, հիւրին, միթէ ես ասացի հիւ-
րին:

ՍՕՖ.—Շատ պարդ:

ԵԼԵՆԱ.—Այդ այնպէս, ես չըգիտեմ ինչու
մասին էք մտածում... ես այնպէս մոլորուած եմ:

ՍՕՖ.—Խնդրեմ, խնդրեմ... առանց խորա-
մանկութեան... ամենայն բանից երևում է, որ
այստեղ պատրաստութիւններ է տեսնուում, գի-
նին էլ ընտիր տեսակիցն է, և երբ ես ներս մտայ,
հայրիկս էլ մի ինչ որ նամակ թագցրեց ինձա-
նից, ի՞նչու մասին էիք խօսում:

ԵԼԵՆԱ.—Ո՞չինչ... ճշմարիտ:

ՍՕՖ.—Շատ լաւ, բոլորդ էլ իմ դէմ էք, հայ-
րըս և մինչև անգամ իմ Ելենան... ախ ինչ դըժ-
բաղտ եմ (ծածկում է աչքերը):

ԵԼԵՆԱ.—Մի լար, իմ աղաւնեակս, իմ հրեշ-
տակս, ես քեզ բոլորը կասեմ:

ՍՕՖ.—(ուրախ համբուրելով) Ահա, այդ նշա-
նակում է, որ դու ինձ սիրում ես, ես քեզ լը-
սում եմ... ուրեմն մեզ մօտ հիւր է զալու և
երբ:

ԵԼԵՆԱ.—Այսօր:

ՍՕՖ.—Ո՞վ է նա:

ԵԼԵՆԱ.—Նկարիչ... Սադունեանը... բայց...

ԱՕՖ. — Բայց ի՞նչ:

ԵԼԵՆԱ. — Նա բոլորովին նկարիչ չէ և ոչ էլ
Սադունեան է:

ԱՕՖ. — Յետք, յետք ով է նա:

ԵԼԵՆԱ. — Ես չունեմ իրաւունք... ճշմարիտ...
ԱՕՖ. — Ինչպէս կամենաս... ուրեմն ասա
հայրիկին, որ ես ընթթել չեմ կամենում... գը-
լուխս ցաւում է և ես գնում եմ քնելու:

ԵԼԵՆԱ. — Ի՞նչպէս, ինչ ես ասում... այդ ան-
կարելի է, լաւ, ես քեզ կասեմ, բայց դուպէտք
է այնպէս ձեանաս, իբր թէ ոչինչ չըգիտես:

ԱՕՖ. — Ուրեմն այդ նկարիչը:

ԵԼԵՆԱ. — Հանքատէր Մազութեանն է:

ԱՕՖ. — Ես հէսց այդպէս էլ ենթադրում էի,
աա, ահա թէ ինչու էր հայրիկս. ծիծաղում, դու
ուղարկում ես ինձ հանքատիրոջը՝ տաղանդաւոր
նկարչի դիմակի տակ... լաւ ուրեմն (գնում է եւ
կանգ առնում) Ելենա, սս... (Ելենան նայում է
նրան ապշած):

ԵԼԵՆԱ. — Սուս. սս:

ԱՕՖ. — Ոչ ոքին ոչ մի խօսք, թէ ես զի-
տեմ, (գնում է)

ԵԼԵՆԱ. — Ահա թէ ինչ եկաւ գլուխս, բոլորը
պատմեցի... բայց ինչ արած, գոնէ սիրտս հան-
դստացաւ:

ՏԵՍԻԼ 6

ՍԱԴՈՒՆ. — (Միայնակ, նա դեռ քաղիում է
դուռը, յետոյ գլուխը հանում է դոներից եւ ապա
ներս մտնում) Բարի գիշեր... ոչ ոք չըկայ...
մտնենք (նայում է շողջը) այս մի կախարդուած
ամրոց է... սեղանը պատրաստ: Օ՛ ինչ գեղեց-
կուհի նայեց ինձ (վերցնում է շիշը) բարև գե-
ղեցկուհի, ինչ է քո անունը, (կարդում է շիշի
էտիկէտը) Այդանիլ 1876 թուականի... օհօ, փա-
ռաւոր այրի... քո տարիքը ստիպում են ինձ վե-
րաբերուել դէպի քեզ յարգանքով, դու ինձ հա-
մար չես գրւած այստեղ, բայց ով գիտէ, գուցէ
հիւրասէր տանտէրը ինձ ծանօթացնի քեզ հետէ
Սակայն ինչու համար է այդ միջնորդութիւնը,
քանի որ քեզ հետ մենք առանձին ենք և ես
ծարաւ եմ քո տեսութեանդ. ուրեմն բացիր սիրտդ
(ածում է գինին) նորից և նորից. օ ինչ հրաշա-
լի ըմպելիք է, մանաւանդ զբօսանքից յետոյ...
և ինչ դիւրալի է այս բազկաթոռում հանգստա-
նալ (նստում է եւ ցածը ծայնով երգում): «Արի
իմ սոխակ» այս հրաշալի եղանակը չէ հեռա-
նում մտքիցս... ոչ, ես միանգամայն սկսում եմ
յափշտակուել... (մտնում է Ստեփանը)

ՏԵՍԻԼ 7

ՍՏԵՓԱՆ ԵՒ ՍԱԴՈՒՆԵԱՆ

ՍՏԵՓ.—Օ՛հօ... ԵԿԱՆ:

ՍԱԴ.—ՎԵՐՋԱՎԵԿԱ ԿԵՆԴԱՆԻ անձնաւորութիւն, ասա ինձ այս գրախտի բնակիչ...

ՍՏԵՓ.—(ղնելով մատը շրթունքներին) Մ'սս... (ծեռքով հրավիրում է նստել):

ՍԱԴ.—Զարմանալի բան..., համր, ուրուական գնա յայտնիը քո պարոնիդ (Ստեփանը զըլուին տալով դուքս է զնում) Ո՞չ, ես այսօր վերջնականավեկա կախարդուած եմ... տեսնենք ի՞նչ կը լինի սորա վերջը: (խմում է. մտնում է ջուրագեանը, Սադունեանը վեր է թռչում):

ՏԵՍԻԼ 8

ՍԱԴՈՒՆԵԱՆ ԵՒ ՏՈՒՐԱԲԵԱՆ

ՏՈՒՐԱԲ.—Ահա, ահա դուք վերջավեկա:

ՍԱԴ.—Այո, ես վերջավեկա:

ՏՈՒՐԱԲ.—Էհ, շատ ուրախ եմ, անչափ երջանիկ եմ ձեր տեսութեան:

ՍԱԴ.—Դուք չափազանց բարի էք... ես այնպեկա անկոչ...

ՏՈՒՐԱԲ.—Ոչ մի խօսք... տաղանդաւոր նըկարչի համար իմ տանս դոները միշտ բաց են:

ՍԱԴ.—Ի՞նչպէս, դուք գիտէք, միթէ իմ ար-

տաքինը այդպէս պարզ է... թոյլ տուէք ինձներկայանալ:

ՏՈՒՐԱԲ.—Զէ հարկաւոր, ձեր անունն է Աղեքսանդր Սագունեան:

ՍԱԴ.—(կողմ) Ես կախարդուած եմ, (նորան) դուք այդ էլ գիտէք:

ՏՈՒՐԱԲ.—Ես բոլորը գիտեմ, իմ երիտասարդ բարեկամ:

ՍԱԴ.—Բայց ի՞նչպէս. ես պատիւ չունեմ ձեզ հետ ծանօթ լինելու:

ՏՈՒՐԱԲ.—(կողմ) Այս սատանայ, և ի՞նչ ճարպիկ է խաղում իւր դերը, (նորան) ճշմարիտն ասած ինձ նախազգուշացըրել են:

ՍԱԴ.—(զարմացած) Ի՞նչ էք ասում:

ՏՈՒՐԱԲ.—Այո, այս բարեկամս... նստեցէք խնդրեմ, թոյլ տուէք ածեմ. (վերցնում է շիշը) Ի՞նչպէս, շիշը համարեա դատարկ է:

ՍԱԴ.—Այդ շիշը մինչև ձեր գալը աշխատում էր ինձ զբաղեցնել:

ՏՈՒՐԱԲ.—Հիանալի, եղէք այստեղ ինչպէս ձեր տանը... դուք այստեղ ձեր տանն էք, ձեր հարսնացուի տանը: Այլևս ես ոչինչ չեմ ասիլ, եթէ դուք չէք ուզում հասկանալ... այդպէս ուրեմն իմ անկոչ հիւր, խա, խա, ծիծաղելի գէպք. (երկուան էլ ծիծաղում են) դէ քանի որ օրիորդը այստեղ չէ, պատմեցէք ի՞նչպէս է ձեր հայրիկը:

ՍԱԴ. — Հայրիկը:

ՏՈՒԻՐԱԲ. — Այս հայրիկը...ձեր հայրիկը առնղջ է, զմուարթ է:

ՍԱԴ. — Հայրիկը...ի հարկէ...

ՏՈՒԻՐԱԲ. — Ես ձեզ ճշմարիսն ասեմ, չէ որ նա ինձ նախազգուշացրեց:

ՍԱԴ. — Նա...ով:

ՏՈՒԻՐԱԲ. — Ձեր հայրիկը: Էհ, ինչպէս են ձեր գործերը:

ՍԱԴ. — (ինքն իրան) Ինձ ուրիշի տեղ է ընդունում, պէտք է շարունակել: (բարձր) Գործերը, ոչինչ, շատ լաւ են:

ՏՈՒԻՐԱԲ. — Իսկ ձեր նմանթը:

ՍԱԴ. — Ես նաւթ չեմ սիրում, ինձ մօտ միշտ կարտօֆիլէ մոմ է վառում:

ՏՈՒԻՐԱԲ. — Ես հանքերի մասին եմ հարցնում:

ՍԱԴ. — Հանքերի մասին:

ՏՈՒԻՐԱԲ. — Այս, մեր հանքերը ոչինչ, շատ լաւ է. (ինքն իրան) Ենչ հնարեմ... (նորան) մենք ցուցահանդէսում գրինք մազութից շինած Պուշկինին:

ՏՈՒԻՐԱԲ. — Ի՞նչպէս:

ՈՂԴ. — Պուշկինի արձանը մազութից շինած:

ՏՈՒԻՐԱԲ. — Միթէ, ասացէք ինդրեմ:

ՍԱԴՈՒ. — Սպասեցէք... հանդարտ, կարծեմ պատրաստում է երգել:

ՏՈՒԻՐԱԲ. — (ինքն իրան) Սօֆիան պատրաստում է երգել, վատ չէ: ('որսան) Լսեցէք, լսեցէք (երկուսն էլ լուս են. կուկիսների յետելից Սօֆիան երգում է «Արի իմ սոխակ»):

ՍԱԴ. — Ո՞վ էր երգողը... ասացէք ով էր:

ՏՈՒԻՐԱԲ. — Իմ աղջիկս... այս բոպէիս ես ձեզ կըծանօթացնեմ նորա հետ... (զնում է մի քայլ եւ դուքս է զայխ Սօֆիան) ահա և նա:

ՏԵՍԻԼ 9

ՆՈՅՆՔ, ՍՕՖԻԱ. Եհ ելենԱ.

ՍԴԴՈՒ. — (ինքն իր սն) ԱՌ, խորհրդաւոր օրիորդու:

ՍՕՖ. (ինքն իրան) Նա չ:

ՏՈՒԻՐԱԲ. — (ինքն իրան) Երկու կողմիցն էլ մեծ տպաւորութիւն է: (բարձր) Սօֆիա, երևակայիր ինչ անսպասելի դէպք.. թոյլ տուր ներկայացնել քեզ ճանապարհից մոլորուած նկարչին... պարոն Սադունեան:

ՍՕՖ. — (ինքն իրան) Մազութեան... օ իմ ցնորքներ:

ՏՈՒԻՐԱԲ. — (շարունակելով) Իմ աղջիկս... Սօֆիա իվանովսա: (զանգահարուի է) Բայց շուտով ընթրիքը... ելենա Պավլովսա, հրամայեցէք պա-

բոն նկարչի համար ևս պլիբօր սարքեն, դուք
երկի քաղցած էք:

ԱԱ.Դ.—Սաստիկ (ծառան քեզում է կերա-
կուրը):

ԵԼԵՆԱ.—Բոլորը պատրաստ է:

ՏՈՒՐԱԲ.—(վերցնելով անձնողիկը շինում
է օձիքի մէջ) Խնդրեմ: (ցոյց է տալիս ծախ կող-
մը: Հասարակութեան դիմացը նստում է Սաղուն.
նորա ծախ կողմ Սօնեան, աջ Տուրաբեանը, նո-
րա դիմացը Ելենան):

ՍՕՅ.—(ցածր Ելենային) **Փշուեցան ցնորք-**
ներս:

ԵԼԵՆԱ.—(նոյնալէս) Բայց սա բաւականին գե-
ղեցիկ է:

ՍՏԵՓ.—(մօտ քերելով) Համեցէք...թաղա
ձուկ:

ԱԱ.Դ.—Ա՛, իմ սիրած կերակուրը (վերցնում
է եւ շտապով ուսում):

ՏՈՒՐԱԲ.—Ներողութիւն, դուք լաւ կտոր չը
վերցրիք, ահա պոչը (դնում է մի կտոր):

ԱԱ.Դ.—Պոչը կարելի է...առուէք պոչը:

ԵԼԵՆԱ.—Կը հրամայէք կարմիր գինի:

ՏՈՒՐԱԲ.—Այդանիլ...մեր նկարիչը սիրում
է այդանիլ:

ԱԱ.Դ.—(մօտեցնում է քաժակը) Խնդրեմ (քո-
լորը ուսում են):

ՍՕՅ.—(ցածր Ելենային) Ի՞նչ սարսափելի ա-

խորժակ ունի, նկարիչը այդքան չի կարող ու-
տել:

ԵԼԵՆԱ.—(նոյնալէս) Մի ասիր, իմ Սերժը
հանձար էր, սակայն զարմանալի ախորժակ ու-
նէր:

ՍՏԵՓ.—(մօտ քերելով) Նորից չէք հրամայիլ:
ԱԱ.ԴՈՒՆ.—(քարեսիրտ նայելով նորան) Ի՞նչ
բարեպաշտ կերպարանք ունի (Ստեփանը ծիծա-
դում է):

ՏՈՒՐԱԲ.—(զարմանքով) Կեցցէ, այժմ պա-
րոն նկարիչ, բարեհաճեցէք ասել՝ թէ ի՞նչը բե-
րեց ձեզ այստեղ:

ԱԱ.Դ.—Ի՞նչպէս թէ ի՞նչը, ես այստեղ էտ-
իւդներ եմ նկարում:

ՏՈՒՐԱԲ.—(մէկոսի) Երևակայում եմ:

ԱԱ.Դ.—Ես սիրում եմ լեռներ, ծառեր, բոյ-
սեր և նամանաւանդ աւերակներ:

ՏՈՒՐԱԲ.—Ահա, իմ աղջիկս նոյնալէս հա-
փշտակուած է աւերակներով:

ՍՕՅ.—Բնութիւնը միայն այն ժամանակ է
լինում գեղեցիկ, երբ նորանում ոչինչ կեղծ և
շինծու բան չըկայ: Մի անգամ Պետերը որպում,
Պավլովսկի ամառանոցում աչքիս ընկան մի կար-
մունջէ բեկորներ... բայց երբ ես տեսայ, որ
նոքա շինծու են, նորա բոլոր գեղեցկութիւնը
ինձ համար կորաւ. այդպէս էլ պատահում է
կեանքում. օրինակ, մի մարդ գուցէ կարող էր

գրաւել մէկի ուշադրութիւնը, սակայն լինում է անտանելի երբ իմանում ես, որ նա դիմակի տակ է գտնւում։

ՏՈՒԻՐԱԲ.—(Ելենային) Ոչինչ չէ՞նկատել արդեօք. (բարձր) ահա ձեզ փիլիսօփայութիւն։
ՍԱԴ.—Եւ շատ ճիշտ է, ես բոլորովին համաձայն եմ, միայն նուրբ բնութիւնը կարող է գեղեցիկ լինել. օրինակ այստեղի աւերակների մօտ գտնուած տեսարանը։

ՄՕՅ.—(ցած Ելենային) Տես թէ այդ նաւթէ ամանը ինչպէս է խօսում։

ԵԼԵՆԱ.—Բոլորովին ինչպէս իմ Սերժր։

ՏՈՒԻՐԱԲ.—Գիտէք, սիրելի բարեկամ, դուք պէտք է այդ պատկերը նկարէիք կտաւի վերայ։
ՍԱԴ.—Օ՛, նա չափազանց հրաշալի էր, ես չեմ կարող...

ՏՈՒԻՐԱԲ.—(ինքն իրան) Ի հարկէ չես կարող, չէ՞ որ պատկեր նկարելը նաւթէ ֆանտան չէ (բարձր) բայց դուք պէտք էնկարէիք այդ պատկերը... խնդրում եմ ձեզ... ես արդէն երևակայում եմ... և եթէ ձեզ ոչինչ չէ արգելում, թոյլ տուէք առաջարկել ձեզ իմ բնակարանիս վերեի մասը. այստեղ մեծ դահլիճ կայ, ես կըսարքեմ ձեզ համար։

ՍԱԴ.—Դուք չափազանց բարի էք։

ՏՈՒԻՐԱԲ.—Համաձայն էք ի հարկէ, վճռած բան է, շատ շնորհակալ եմ. ես գնամ այս բո-

պէիս կարգադրութիւն անեմ սենեակի մասին. ծգուք մեզանից գոհ կըմաք, ձեզ համար մեզ մօտ լաւ կըլինի. (ինքնիրան) Երեւելի նկարիչ է (ղուրս է զնում):

ՏԵՍԻԼ 10

ՆՈՅՆԻ, առանց ՏՈՒԻՐԱԲԵԱՆԻ

ՍԱԴ.—Ես պատրաստ եմ մնալ, եթէ միայն դուք ինձ թոյլ կըտաք, եթէ թոյլ կըտաք միջնադարեան գեղեցկուհու պատկերը նկարեմ ձեզանից։

ՄՕՅ.—Վերջ դրէք այս կօմեղիային պարոն նաւթէ հանքատէր Մազութեան։

ՍԱԴ.—(ինքն իրան) Հանքատէր... Մազութեան... ահա թէ ում տեղն են ինձ ընդունում (բարձր) իսկ եթէ ես իսկապէս Մազութեանն եմ։

ՄՕՅ.—Ուրեմն աւելորդ էր ձեր աշխատանքը, ես ձեզ ատում եմ։

ՍԱԴ.—Դուք ատում էք Մազութեանին, դա ինձ համար մեծ բաղտաւորութիւն է։

ՄՕՅ.—Խնդրեմ առանց ծաղրելու, ես կսկարող եմ ծաղրել. ձեր երեւելի հնարած նախագծերը լաւ խորտակուեցին... հաշուասէր հանքատէրը նկարչի դիմակի տակ դառնում է ինձ համար աւելի ատելի։

ՍԱԴ.—Օ՛, այդ մեծ ճշմարտութիւն է։

ՄՕՅ.—Դուք եկել էք այն մտքով, որ առա-

ջարկութիւն անէք... բայց ինձ ինչու էք վիրաւորում և ձեզ ստորացնում. եթէ որ դուք եկած լինէիք առանց նախագծերի, գուցէ մենք միմեանց հաւանէինք... այդ միջոցին ինձ համար միենոյնը կըլինէր... Մազութեան էք դուք թէ Սագունեանը, հանքատէր թէ նկարիչ... ես իմ սիրտս չեմ վաճառում:

ԵԼԵՆԱ.—Սօֆեա:

ՍԱԴԻ.—Դուք ինձ չափազանց բաղտաւորացնում էք:

ՍՕՅԻ.—Ի՞նչպէս, դուք դարձեալ շարունակում էք ձեր դերը խաղալ:

ՍԱԴԻ.—Ես իսկապէս նկարիչ Մագունեանն եմ և ձեր Մազութեանին մինչև անգամ չեմ ճանաչում:

ԵԼԵՆԱ.—ՄԻԹԷ:

ՍՕՅԻ.—Ի՞նչպէս, ուրեմն ինչ է նշանակում այս բոլորը:

ՍԱԴԻ.—Երկի մի թիւրիմացութիւն է պատահել, ես ճանապարհս կորցրի և մտայ այստեղ. սկզբից մնացի որովհետև քաղցած էի... յետոյ լսեցի ձեր ձայնը տեսայ ձեզ և մնացի... բայց բաւական է... պէտք է այս կօմեղիային վերջ տալ... ձեր հայրը ինձ խնդրում է մնալ, որովհետև ինձ ուրիշի տեղ է ընդունում, ես չեմ կամենում օգտուել այդ գէպքից... ոչ... պէտք է հեռանալ. թէև դժուար է:

ՍՕՅԻ.—Ես ձեզ վիրաւորեցի:

ՍԱԴԻ.—Ոչ... ոչ...

ՍՕՅԻ.—Ուրեմն ափսոսում եմ... որովհետև դուք արժանի էք վիրաւորանքի: Օ՛ եթէ ես տղամարդ լինէի:

ՍԱԴԻ.—Ի՞նչ կանէիք:

ՍՕՅԻ.—Երբէք չէի յուսահատուիլ:

ՍԱԴԻ.—Ուրեմն դուք տալիս էք ձեր իրաւունքը շարունակելու այս խաղը:

ՍՕՅԻ.—Ես չեմ կամենում, որ դուք հեռանաք:

ՍԱԴԻ.—Օ՛, այդ երջանկութիւնը ինձ խելագարութեան է հասցնում... օ իմ զեղեցկուհիս... ես ձեզ սիրում եմ... իմ անգին հրեշտակս (հարուրում է նորա ծեռքերը, մտնում է Տուրաք.):

ՏԵՍԻԼ 11

ՆՈՅՆՔ, ՏՈՒՐԱՔ. յետոյ ՍՏԵՓԱՆ

ՏՈՒՐԱՔ.—(աջ դռնից) Բրավօ, կեցցէ, միքքաշուիլ, գործը տւելի լաւ է գնացել քան թէ ես ենթադրում էի: Ահա թէ ի՞նչ է նշանակում ճակատագիր... ահա այդպէս լաւ է...

ՍԱԴԻ.—Բայց...

ՏՈՒՐԱՔ.—Օրհնում եմ ձեզ. (Սադ.) զաւակս, արի համբուրեմ քեզ, երկակայում եմ ինչպէս կուրախանայ ծերունի Մազութեանը:

ԵԼԵՆԱ—(ինչն իրան) **ՏԵՐ ԱՍԹՈւած**, Ի՞նչ կը
լինի սորա վերջը:

ՏՈՒՐԱԲ.—Դէ էլ ի՞նչ էք կանգնել, փաթա-
թուեցէք, համբուրուեցէք:

ՍՕՖ.—Բայց հայրիկ...

ՏՈՒՐԱԲ.—Լսել անգամ չեմ կամենում, այդ-
պէս է ընդունուած: (բոթում է նորան Սալոն.
զիրկը) Բաղտաւոր եղէք:

ՍԱԴ.—Թոյլ տուէք, մեծապատիւ պարոն,
բացատրել այս թիւրիմացութիւնը:

ՏՈՒՐԱԲ.—(քաշելով մի կողմը) Լոեցէք ի սէր
Աստուծոյ, միթէ չէք նկատում, որ եթէ ձեզ ա-
նուանէիք, ձեր բաղտաւորութեանը վերջ կըլի-
նէք:

ՍԱԴ.—(ցածր նորան) **Այս**, բայց իբրև աղ-
նիւ մարդ, ես չըպիտի օգուտ քաղեմ այս հան-
գամանքից:

ՏՈՒՐԱԲ.—Դորա մասին առաջ պիտի մտա-
ծէիք, իսկ հիմայ ի սէր Աստուծոյ լոեցէք և թոյլ
տուէք ինձ գործելու: (բարձր) **Ասա** զաւակս, ե-
թէ մի օրիորդ տալիս է իր ձեռքը և սիրտը մի
պարսնին, ինչու համար է անում այդ, նորա ա-
նուան համար, թէ նորա անձնաւորութեան հա-
մար:

ՍՕՖ.—Ի հարկէ նորա անձնաւորութեան հա-
մար:

ՏՈՒՐ.—Ենթաղրիր որ այդ օրիորդը սիրուժ

է մէկին և յետոյ իմանում է, որ նորան սիրած
մարդը ուրիշի անունն է կրում, կը փոխէ արդեօք
իւր դիտաւորութիւնը թէ ՞չ:

ՍՕՖ.—Երբէք:

ՏՈՒՐԱԲ.—Լսում էք, ուրեմն ձեր լեզուն
կարձ պահեցէք:

ՍԱԴ.—Այս, մեծապատիւ պարոն, բայց...

ՏՈՒՐ.—Մեծապատիւ, կանչեցէք ինձ ուղ-
ղակի հայրիկ:

ՍԱԴ.—Շատ լաւ, սիրելի հայրիկ, բայց ա-
սացէք խնդրեմ, դուք նոյն կարծիքի էք ինչ որ
ձեր գուստրն է թէ ՞չ:

ՏՈՒՐԱԲԵԱՆ —Միթէ դուք կարծում էք, որ
ես նախապաշարուած մարդ եմ, գլխաւոր նշա-
նակութիւնը մարդուս համար իւր անձնաւորու-
թիւնն է և ոչ թէ նորա ազգանունը. սակայն բա-
րական է, ահա և շամպանիան բերին, մօտեցնենք
բաժակները և խմենք ձեր նշանագրութեան կե-
նացը. Ստեփան, այժմ կարող ես բենգալեան կը-
կը վառել:

ԱՏԵՓԱՆ —Պարոն այնտեղ էլի մի մարդ է
սպասում:

ՏՈՒՐԱԲ.—Ի՞նչ անյարմար այցելութիւն, ով
է նա:

ԱՏԵ.—Նոյնպէս նշխող է պարոն, նկարիչ:

ՏՈՒՐԱԲ.—Ի՞նչպէս: (ծիծաղում է) **Այ** քեզ
հրաշը, այսօր մեզ մօտ նկարչական հանդէս է,

ինդրիք, տեսնենք ի՞նչ է կամենում (Ստեփանը դուք քաց անելով ներս է թողնում Մազովեհանին):

ՏԵՇԻԼ 12.

ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱԶՈՒԹԵԱՆ

ՄԱԶՈՒԹ.—Ներեցէք ինդրեմ, ձանապարհից մոլորուած համարձակուում եմ ինդրել...

ՏՈՒՐԱԲ.—Խնդրեմ, ինդրեմ երիտասարդ պարոն, այսօր մեզ մօտ նկարչական ժողով է:

ՄԱԶ.—(Նայում է Սօփիայի վերայ. յետոյ Սարդուն. ինքն իրան տառմ է) Իմ նշանածո վատ չէ, իսկ այս տոկոսը ի՞նչ է նշանակում:

ՏՈՒՐԱԲ.—Նստեցէք... Մտեփան, աթոռ տուր (Մազովեհանին) Դուք շատ յարմար ժամանակ էք եկել, մենք այսօր ընտանեական ուրախութիւն ենք տօնում:

ՄԱԶ.—Շատ ջնորհակալ եմ (ինքն իրան) կարծեմ նշանադրութեան մասին է խօսում:

ՏՈՒՐԱԲ.—(Ներկայացնելով) Իմ աղջիկս, Սօփի իւանովնա, Ելենա Պաւլովնա, ձեր արհեստակիցը:

ՄԱԴ.—Շատ ուրախ եմ, թոյլ տուէք հարցնել, դուք պօտեատիստ էք թէ պէյզաժիստ:

ՄԱԶ.—Ես... ամեն բան... իմ մասնագիտութիւնն է գիշերուան պէյզաժները և հէնց այդ

պատճառով ես կորցըի այսօր ճանապարհս, հէնց այս ըոպէիս ես գծեցի լուսնի լանդշաֆտը:

ՍԱԴ.—Հիմայ, գիշերնվ։
ՄԱԶ.—Այս, որովհետեւ լուսնի լանդշաֆտը գիշերներն են նկարւում։

ՍԱԴ.—Չեմ լսած։
ՄՕՖ.—Հետաքրքիր է տեսնել ձեր նկարը։
ՄԱԶՈՒ.—Մեծաւ ուրախութեամբ (հանում է պատկերը) ահաւասիկ։

ՄՕՖ.—Հրաշալի է։
ԵԼԵՆԱ.—Սըանչելի է։

ՏՈՒՐԱԲ.—Հիանալի է։
ՄԱԴ.—Դեղեցիկ է... բայց այս օլիոդրաֆիա է... սա տպուած է և «Ճարազի» պրէմիան է։

ՄԱԶ.—Այս թողէք խնդրեմ. (շուր է տալիս նկարը) միթէ չէք տեսնում, որ կտաւի վերայ է. ձեր ասածը միշտ թղթի վերայ է լինում, իսկ սա կտաւ է, (լնում է պատկերը թղթակալի մէջ):

ՄԱԴ.—Թոյլ տուէք իմանալ, հոչակաւոր արհեստակից, ձեր ազգանունը:

ՄԱԶ.—Ես շատերին յայտնի եմ, իմ ազգանունն է Սագունեան։

ՄԱԴ.—Ի՞նչպէս։
ՄՕՖ.—Ա՛մա։

ՏՈՒՐԱԲ.—Սօփիա, մի հարցնիր այժմ, յետոյ ես քեզ բոլորը կըպատմեմ: (Մազ.) Ես շատ ուրախ եմ, որ զոնէ մի օր իմ տունս մի նկա-

ըիչ է այցելել, ասում եմ մի նկարիչ, որովհետեւ
այս երիտասարդը (ցոյց տալով Սաղոն. վերայ)՝
չընայելով նորա լաւ յատկութիւններին, նկարիչ
չէ, սա Բագուի յայտնի հանքատէր Մագութեանն
է և իմ աղջկայ նշանածը:

ՍԱ.Զ. — Ի՞նչ, ինչ էք ասում, այդ անտանելի սուտ է...կեղծիք է, ինչպէս, մեծապատիւ պարոն, դուք կեղծ անուն էք ընդունել և խորամանկութեամբ տուն էք մտել այստեղ, դուք հանքատէր Մագութեանի որդին էք, ապա ե՞ս ով եմ. իսկ ես ձեզ կասեմ, որ դուք գողացել էք իմ անունս, որպէսզի խլէք իմ հարսնացուն, դուք արակածախնդիր էք, մեծապատիւ պարոն, ես իսկոյն կըյայտնեմ ոստիկանութեան:

ՍԱ.Դ. — Ներեցէք: (Տուր.) Ասացէք խնդրեմ, ինչ ազգանունով ես ձեզ ներկայացայ, չէ ո՞ր ես ինձ անուանեցի նկարիչ Մագունեան:

ՏՈՒՐԱԲ. — Ճշմարիտ է...բայց չէ որ դուք իսկապէս...

ՍԱ.Դ. — Ես իսկապէս Մագունեան եմ:

ՏՈՒՐԱԲ. — Տէր Աստուած (Մազ.) իսկ դուք:

ՄԱ.Զ. — Ես բագուեցի նաւթահանքատէր Մագութեան եմ, իմ միակ ժառանգ լսայտառակութիւն...

ՏՈՒՐԱԲ. — Ուրեմն դուք...Սօփիա հեռացիր... ալս ես յիմարս: (Սաղոն.) Մեծապատիւ պարոն ի հարկէ ինձ...

ՍԱ.ԴՈՒ. — Ի՞նչպէս, դուք այդ ի՞նձ էք ասում,
հայրիկո:

ՏՈՒՐԱԲ. — Ես հայրիկ չեմ. ես փոխեցի մը-
տադրութիւնս:

ՄՈՅ. — Հայրիկ, այդ ի՞նչ է նշանակում, ով
է անում այդպէս և ով է մեղաւորը այս թիւրի-
մացութեան:

ՍԱ.Դ. — Ես մեղաւոր չեմ, որ դուք ինքներդ
հրաւիրեցիք ընթրել, և որովհետեւ ես քաղցած էի
մնացել:

ՄՈՅ. — Ես էլ մեղաւոր չեմ, որ հետաքըր-
քրուեցի, թէ ում համար էր պատրաստուած թան-
գագին գինին:

ԵԼԵՆԱ. — Ես էլ մեղաւոր չեմ:

ՍՏԵՓ. — Ի հարկէ ես էլ մեղաւոր չեմ:

ՏՈՒՐԱԲ. — Ուրեմն ով է մեղաւորը, կասէք ես:

ՄՈՅԻԱ. — (ծիծաղ) Եթէ ճշմարիտն ասել, ի
ի հարկէ դու, հայրիկ:

ՍՏԵՓ. — | Ի հարկէ դուք:

ՍԱ.Դ. — |

ՏՈՒՐԱԲ. — Ե՞ս:

ՄՈՅ. — Դու հայրիկո, և միենոյն ժամանակ
իմ ճակատագիրս, որովհետեւ ես նորան սիրեցի
(տալիս է Սաղոն. ծեռքը):

ՄԱ.Զ. — Ի՞նչպէս...դուք...այդ արդէն վե-
րին աստիճանի անքաղաքավարի է, այս նոր լսայ-
տառակութիւն է:

ՏՈՒՐԱԲ. — Ինչպէս... ինչպէս էք դուք համարձակւում... ես էլ ինչ եմ ասում թէ ով է մեղաւորը... ահա սա... դուք մեծապատիւ պարոն:

ՄԱԶ. — Թոյլ տուէք:

ՏՈՒՐ. — Ի հարկէ դուք... գողացել էք տաղանդաւոր նկարչի անունը, բայց բաղտի բերմամբ նա ինքը ներկայացաւ և նորան հաւանեց աղջիկս. ասում եմ բաղտի բերմամբ, որովհետեւ նորան ես նոյնպէս հաւանում եմ: Ես ձեզ օրհնեցի և իմ օրհնանքը յետ չեմ վերցնի:

ՄԱԶ. — Հիանալի... սորանից յետոյ ինձ մընում է միայն ուրախանալ, որ ես չունէի պատիւ, ունենալ ձեր և ձեր աղջկայ համակրութիւնը, որովհետեւ ամուսնանալ մի օրիորդի վերայ, այդպիսի ընտանիքից... զա մի մեծ... ես չեմ վերջացնում... միաք բարկ (զնում՝ է):

ՏՈՒՐԱԲ. — Այ դու նաւթէ աման, լաւ է որ չը վերջացրից ապա թէ ոչ:

ՄՕՖԻԱ. — Մի բարկանալ, սիրելի հայրիկ, ես այնպէս բաղտաւոր եմ:

ԵԼԵՆԱ. — Եւ ես:

ՄԱԶ. — Իսկ ես ամենից շատ. միայն նախ և առաջ թոյլ տուէք լինդրել ձեզանից մի բան, ամենակարենոր բանը:

ՏՈՒՐԱ. — Ես ձեզ ոչինչ բանում չեմ մերժիւ:

ՄԱԶ. — Ասացէք ինդրեմ ձեր աղգանունը:

ՏՈՒՐԱԲ. — Խա, խա, խա. կատարեալ բարիլոնեան խառնակութիւն: (Բոլորը ծիծաղում են)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՈՒՔ

Ա Ի Ե Տ Ի Ս Ա Ղ Ա

ԿԱՄ

ՐԱԶՈՒՄԹԱԼՈՒ ՓՈՍՏԱՑԻՆ ԿԱՅԱՐԱՆԸ

Վօղեւիլ-Էսկիզ I գործողութ

ՀԵՂ.

Պ. Ա Ր Ա Ք Ս Ե Ա Ն

ԳՈՐԾԱՂ ԸՆՉԻՆՔ

ԱԻԵՏԻՍ-ԱՂԱ, Բաղունթալու փոստի սմատրիտել 55
տարեկան:
ՊՈՂՈՍ, եամշէիկ:
ԱԼԻ, ստարօստա:
ԻԻԱՆՈՎ, ճանապարհորդ:
ԱԼՕԵԱՆՑ } ճանապարհորդ վաճառականներ:
ՄԱՏԱՂԵԱՆՑ }
ՏԻԿ. ՇԱՄԻՐԱՄ, այրի 35 տարեկան:
ՎԱՐԹԱՆՈՒՇ, սրա աղջիկը 7 տարեկան:
ՄՈՒԽԻՄԻ ՅԱԿՈԲ, 75 տար.:
I ԹՈՒՐՔ } ճանապարհորդներ:
II ԹՈՒՐՔ }
ԻՇԽԱՆ ՆԱՏԱԶԵ, վրացի ճանապարհորդ 55 տար.:
ԷՄՏԱՏԵ, սրա ծառան:
ՊԱՆԿՐԱՏՈՎ, ռուս ճանապարհորդ:

ԲԵՄԸ ՆԵՐԼԱՅԱԳՆՈՄ է գալառական փոստային մի կեղտոտ սենեակ—պատերին մի քանի տեղ կախուած են փոստային յայտարարովթիմներ՝ դիմացը էժանազին պատի ժամացոյց, որ քանելով ցոյց է տալիս օրուայ ժամը 3-ը։ Ամարային շոգ ժամանակ է։ Զաիկ մի հասարակ սեղան զանագան թղթերով, հաւրեչով եւ այլն. աչ թախուած, ծախս եւ մէջտեղը ղոներ։ Զախ ղոնն զիսին զբուած է „Դամսկայ“, աչ „Օճայ“.

Վարագոյրը բարձրանալիս սեմը դատարկ է. լրսից լսում են զանազան ծայներ «տ պ ո՞ո ո՞...» „СТОЙ!“, «այ տղա պաստրոնկան պահիր!...» Լըռ-տում են նաեւ զանգերի ծայներ եւ մի մեծ շան հաջոց. ամեն ինչ ցոյց է տալիս, որ յնտ ընկած մի տեղ է որտեղ բացի այս կայարանից ոչ մեշինովթիմ չկայ։

ՏԵՍԻԼ 1.

Մանում են ԱԻԵՏԻՍ ԱՂԱ եի ԻԻԱՆՈՎ

Ա. — (միջին ղոների մօտից զորում է դէպի ղորկու) Ալի...Ալի...օ Պօղոսի չաղը բուրա!...
Ի. — Նետ, դա էտո չօրտ զնաետ չտո տակոե, տակայեա բասպուշչեննօստ...նիգդե եանի-

չեզօ պօդօբնավօ նե վիդել...եամշչիկի պազվա-
լիախւտ օսկօրբլիատ պասսաժիրօվ:

Ահ.—(որ ման էր զալիս, } Ալի...Ալի...
դարձեալ մօտենուա է դոներին} Ալի...Ալի...

Ալի.—(բեմի յետելից) Բալի...

Ահ.—Ման սանա դեղիմ Պօղօսայ չաղր բու-
րայ...

Իհ.—(վիրատը ծետվ) Օն մենիա նազիվաետ
կաչանօմ կապուստի...Էտօ չ'օրտ զնաետ չտո-
տակօե:

Ահ.—Կաչան կապուստամ...

Իհ.—Նու դա, եա բիլ պերվիմ սլեդօվա-
տել նօ նիկտօ նե վալրավե բիլ պերեգնատ մե-
նիա, կակօե մնե դելօ չտօ օն օֆիցեր իլի չի-
նօմնիկ: Եսլի վի նե օշտրաֆուիտե եվօ, տո եա
ժալօբու նապիշու վժալօբնօյ կնիգե:

Ահ.—(նոյն ծետվ դոների մօտ) Ալի...Ալի...

Ալի.—(բեմի յետելից) Բալի...

Ահ.—Այ զահրմար...ադա ման սանա դեյ-
մադըմ Պօղօսայ չաղր բուրա...

Ալի.—(բեմի յետելից) Գեալը...գեալըր...
(Մտնուա է Պօղօսը եամշչիկի զգեստով եւ մեծ փա-
փախով):

ՏեՍԻԼ 2.

ՆՈՅՆՔ ԵՒ ՊՕՂՕՍ

Ահ.—Ասա, ասա տեսնեմ ինչ ես արել...

ՊՕՂ.—Ի՞նչ եմ արել, աղա.

Իհ.—Դա վօտ պադաժդի եա տեքե պօկաժու...

ՊՕՂ.—Պակաժի...:

Ահ.—Սուս արա...սուս արա, ասա տեսնեմ
ասամ...

ՊՕՂ.—Աւետիս-աղա, էնա հենց որ պօլստան-
կից դուս էկանք, մին էլ տենամ եամշիկ Պէտ-
քօն մեր եղեկիցը գալիս ա, հենց որ մեզ մօդա-
ցաւ մին էլ տենեմ բդաւեց—ասմա՝ (վատ ար-
տասանովթեամբ) «Եյստրանիս-վիդիշ եա եվօ բլա-
ղարօդի վիզու». Ես էլ ասի «ա մի շտճ կաչան
կապուստա վիզեօմ», էդ ասելու բաշտան աղա
ջան սա ինձ...գլխիս տուաւ ու Պետրօն առաջն
կտրեց...

Իհ.—Նու վօտ վիդիշ տի սկազալ կապուստա:

ՊՕՂ.—Դա սկազալ, ի բարին սկազալ:

Իհ.—Նու վօտ (Աւ-ին) Դայտե ժալօբնուիւ
կնիգու...

Ահ.—Ասա: Ասա որ բախշի:

ՊՕՂ.—Ըզվինի բարին ջան, ադին լազ ըգ-
վինի...

Իհ.—Դա չտօ մնե «իզվինի, իզվինի», նա
չտօ մնե տվօե իզվինենին...

Ահ.—Իզվինի եմու, վի դօբրի կաչա... (ան-
միջապէս) դօբրի չալաւեկ...

Իհ.—Նու լազնօ, սմատրի դըռւգօյ լազ պօ-
օստօրօժնէե...Գդե մուժսկախա, եա նեմօզօ օտ-
քօխնու (զնում են բացի Աւ-ից):

ՏԵՍԻԼ 3.

ԱԻԵՑԻՄ ԱՐԱ ՃԵՆԱԿ.

(Վերցնում է մի զիրք, նստում է սեղանի առաջ եւ գցում է համրիշի վրայ) Երկու մանեթ մի աբասի, մի մանեթ երեք շահի, տասնըհինդ շահի... (այդ միջոցին մանում են Ըլօհանց եւ Մատաղեանցը ճանապարհորդական զգեստներով եւ իրերով):

ՏԵՍԻԼ 4.

ՆԱ, ԱԼՕԵԱՆՑ ԵՒ ՄԱՏԱՂԵԱՆՑ.

ԱԼՕ.—ԱՌ, Աւետիս-աղա բարով...

ԱԻ.-(ուշադրովին չղարձնելով շարունակում է): ՄԻ մանեթ երկու աբասի, երեք մանեթ ու տասնըութ կապէկ:

ՄՏ.—Բարով Աւետիս-աղա.

ԱԻ.-(շարունակ ստոր) ՄԻ մանեթ տասնըութ շահի...

ԱԼ.—(բարձր) Աւետիս-աղա...

ԱԼ.—(շանգիստ) Հա լաւ, Բնչ էս բղաւըմ, քար հօ չեմ...

ՄՏ.—Բա որ ասմենք բարով, ընչի չես ձեն հանըմ...

ԱԻ.—(լուս հաշուելով) Գործ ունեմ, գործ ունեմ...

ԱԼ.—ԷՌ լաւա, թող էտ ջնրախ դաւթարը, արի մի քիչ զակուսկի անենք: (Մատ-ին) Նիկո-գայոս, էն խուրջնը բաց արա մի քիչ զակուսկի անենք...

ԱԻ.—(որ մինչ այդ ժամ ուշադրովին չէր դարձնում, յանկարծ վեր է թուշում) Ասեմ սամաւըը քցեն:

ԱԼ.—Զէ, մենք թէզ ենք դնալու, հարկաւոր գործ ունենք...

ԱԻ.—(Հիասթափուած նստում է եւ շարունակում) Հա:

ՄՏ.—Հա Աւետիս աղա, շատ հարկաւոր գործ աւնինք (բացում են խորջինը, նստում են թախտի վրայ եւ ուսում):

ԱԼ.—Համեցեք է, Աւետիս-աղա

ՄՏ.—Աւետիս-աղա, համեցեք:

ԱԻ.—(սառը) Զեմ ուզում:

ԱԼ.—Վա, ընչի, տես ինչ լաւ դօշա է...

ԱԻ.—Զեմ ուզում:

ԱԼ.—Դու ես իմանըմ (միմեանց նշաններ են անում եւ ցոյց են տալիս Աւետիսի վրայ, որը այդ միջոցին գլուխը կախ՝ իբր պարապում է):

ԱԼ.—(ցած. Մատաղ-ին) Ի՞նչքան տանք...

ՄՏ.—Տասը շահի...

ԱԼ.—Զի վերցնի, մանեթից պակաս չի վերց-
նում:

ՄՏ.—Փորձի տես.

ԱԼ.—Բա Աւետիս-աղա... Բա մեզ ձի չես տա-
լու:

ԱԻ.—Զի չկայ:

ԱԼ.—Բա հնց անենք որ ձի չկայ:

ԱԻ.—Զի չկայ չէ.

ՄՏ.—Ախը Աւետիս-աղա, մենք գործ ունենք,
շատապում ենք:

ԱԻ.—Ը՞ն, ձի չկայ չէ:

ԱԼ.—Բա էնքան ձիանքն ինչ են էլել, քա-
նի տրոյկա ունէք.

ԱԻ.—Իրեք տրոյկա էր—մէկը՝ ժանդարմի
պօլկօֆսիկնա գնացել, մէկը քննիչն ա գնացել,
մէկն էլ փոշտն ա գնացել. ձի չկայ չէ.

ՄՏ.—Բա որ էդպէս ա, տուր ժալօբնի գիր-
քը գրենք.

ԱԻ.—(կատաղած) Ը՞ն, դէ կորի... ամեն մի
շան որթի գալիսա, ժալօբա հա ժալօբա, դէ,
դրի տեսնեմ ինչ ես անըմ:

ԱԼ.— Աւետիս-աղա! դու սրան անգաճ մի
դնի (ծածուկ ծեռվն է տալիս փողը) Դու ինձ լոի
տես... տես ի՞նչ եմ տալի:

ԱԻ.—(ձեռքը ցած մեկնելով եւ մի աշքով նա-
յելով) Տենեմ տենեմ ի՞նչ էս տալի, էս ի՞նչա ին-
չա... մի մանեթա - էս մի մանեթով ես ինչ անեմ

ախը—կնիկս Պապովի չայ ա ուզում էրեխեքս
բատինկեք են ուզում. չէ ձի չկայ չէ.

ԱԼ.—Դէ լաւ, հը աչքո դիր (տալիս է դար-
ձեալ փող):

ԱԻ.—Տենեմ էդ ինչ ես տալի... էս ինչա
երկու մանեթ? հա լաւ ա լաւ ա (Մօտենալով
միջին ղոներին ըղաւում է) Ալի, Ալի աթլարի
գեաթը (Նրանց) համէդեք վեշչեքը գարսեցէք պե-
րեկլադնօյի մէջը. էսա ձիանքը կ' ծեն.

ԱԼ.—Է՞ն մնաս բարով, Աւետիս աղա.

ԱԻ.—Մնաս բարով, մնաս բարով:

ՄՏ.—Աւետիս-աղա, մնաս բարով:

ԱԻ.—Մնաս բարով, մնաս բարով (զնում են):

ՏԵՍԻԼ 5.

ԱԻԵՏԻՄ-ԱՂԱ

(Նստելով սեղանի առաջ հաշում է) Երկու
մանեթ մի աբասի, մի մանեթ տասնըհինգ շա-
նի, երեք մանեթ էրկու աբասի... (մտնում են տիկ.
Շամիրամ, Վարդանոյշ եւ Մովսիսի-Յակոբ):

ՏԵՍԻԼ 6.

ՆԱ, Տ. ՇԱՄԻՐԱՄ, ՎԱՐԴԱՆ եւ Մ.-ՅԱԿՈԲ.

ՎԱՐԴԻ.—(մտնելով Շամիրամի հետ, կոպիտ
լաց լինելով) Մամա, չայ եմ ուզում, մամա.

ՇԱՄ.—Սուս արա, վարթանուշ.
 ՎԱՐ.—Մամա չայ...
 ՇԱՄ.—(բարկացած) վարդանուշ:
 ՎԱՐ.—(նոյնպէս) Մամա.
 ՇԱՄ.—Զօռ, դէ սուս արա էլի:
 (Մուսխի-Յակոբ տախտի վրայ նստած ըստ-
 նօթի է քաշում):
 ՇԱՄ.—(Մօսենալով Աւելիսին քաղցր) Բա-
 րե ձեզ.
 ԱԻ.—(առանց նայելու շարունակում է հա-
 շուել) Երեք բասսի, տամնու չորս ջահի, երկու...
 ՇԱՄ.—Բարե ձեզ, պարոն.
 ԱԻ.—(չնայելով) Բարեվ բարեվ...
 ՇԱՄ.—Ասացէք խնդրեմ որտեղ է այստեղի
 սմատրիտելը:
 ԱԻ.—Զեմ գիղի, չեմ գիղի:
 ՎԱՐ.—Մամա չայ...
 ԱԻ.—Հա չայ. ես եմ, ես եմ սմատրիտելը:
 ՎԱՐ.—Մամա...
 ՇԱՄ.—(բարկանալով բայց իրան զսպելով)
 Վարդ... (Աւետիսին) Ուրեմն դուք էք սմատրի-
 տելը, շատ ուրախ եմ, շատ ուրախ, խնդրեմ ծա-
 նօթանանք. Տիկ. Շամիրամ (ձեռք է տալիս):
 ԱԻ.—(Ձեռք տալով) Հա լաւ լաւ:
 ՄԽՄ.—(Հազիւ մօսենում է եւ ձեռք է տա-
 լիս) Մուխսի-Ակօփն եմ (մեկնում է ըստօթամանը
 եւ վերադառնում տեղը):

ՇԱՄ.—(ցոյց տալով Մուխսու վրայ) Սա էլ
 ցաւ է դառել ինձ համար, իմ քրօջ տունը Աս-
 տուած քանդի, էկաւ թէ՝ լաւ ընկեր եմ գտել,
 համեստ, խոհեմ մարդ է...ամբողջ ճանապար-
 հին մի խօսք չէ ասել և իմ պահելու է դառել,
 փոխանակ ինձ կաւալերութիւն անելու. ուրեմն
 այդպէս, եթէ կարելի է հրամայեցէք շուտով ձիե-
 րը լծեն, որ ես ազատուեմ այս անտանելի մար-
 դուց:
 ԱԻ.—(կտրական) Զի չկայ:
 ՇԱՄ.—Ուրեմն ի՞նչ անենք...որքան ժամա-
 նակ պիտի սպասենք:
 ԱԻ.—4—5 ժամ. Երկու օթախըն էլ շատ
 մարդիք կան:
 ՇԱՄ.—0' օյ օյ 5 ժամմ. 5 ժամ ի՞նչ պիտի
 անենք այս շոգ տեղը:
 ԱԻ.—Գնացէք այնտեղ կանանց օթախը, սա-
 մավար պահանջեցէք և սպասեցէք:
 ՎԱՐ.—Մամա ջան, չայ...
 ՇԱՄ.—Զօռ, դիմ դու արիր (Աւելին) Ապա ի՞նչ-
 ուես է այդ որ ձի չկայ...
 ԱԻ.—(բարկանալով) Ծ'ն ձի չկայ չէ...երեք
 տրոյկայ էր. մինը՝ ժանդարմի պոլկօվուկնա գնա-
 ցել, մինը՝ քննիչն ա գնացել—մինն էլ փոշտն ա
 տարել...ձի չկայ չէ էլի, փիա:
 ՇԱՄ.—(վախեցած) Լաւ լաւ, միք բարկա-

Նալ, կոպասենք, որտեղ է կանանց սենեակը.
(Ամետիսը ցոյց է տալիս դուռը):

ՎԱՐ.—Մամա չայ կխմբնը.

ՇԱՄ.—Այ չօռ խմես հա (քարկացած զնում է):

ՏԵՍԻԼ 7.

ՆԱ, ԻԻԱՆՈՎ յետոյ թուրքեր.

ԻՒ.—(դոներից զլուխը հանելով) Պրիկաժիտե
սամօվար...

ԱԻ.—Զիշաս (դոներում բարձր) Ալի օ բու-
սի սամաւար իստիր... (քիչ յետոյ տանում են):

ՏԵՍԻԼ 8.

ՆԱ, ՇԱՄԻՐԱՄ յետոյ թուրքեր.

ՇԱՄ.—(դոներից զլուխը հանելով) Խնդրեմ
եթէ կարելի է հրամայեցեք սամավար տան:

ԱԻ.—(ուրախ) Սամաւար, էս սհաթիս. (դոնե-
րում) Ալի, Ալի, օ Պրիկորն պասաժիրի սամա-
վար իստիր. (տանում են սամաւարները):

ՏԵՍԻԼ 9.

ՆԱ. ԵԿ 2 ԹՈՒՐՔԵՐ դուրս են գալիս տղամարդկանց
բաժանմունքից,

I Թ.—Աւետիս աղա, բաս բզա հաւախ վե-
րասան աթլար:

ԱԻ.—Աթլարի եօխտուր:

II Թ.—Նեջա եօխտուր. բու գիւն իւչ գիւն
օլաջախ քի բզ բուրդախիխ:

ԱԻ.—(սառը) Նեյնիմ:

I Թ.—Նեջա նեյնիմ-բուգիւն բաս սանա հա-
զարդա տրոյկա եօլանդն օզգիասիննա վար, բըզ-
դան օթիւր եօխտուր...

ԱԻ.—(լեզուն կապուելով) Օ բիրի ժանդարի
պալկօմիկ իդի, բիրի սլեսչի իդի, բիրի դա փոշ-
տայ գեօնդարդըմ...

II Թ.—Բա օ ուռուսի նա իդի:

ԱԻ—Օ դա կազեօննի իդի:

I Թ.—Բաս օ իքի էրմանի նա իդի, ման օ
Ալօեանցը թանիերամ, բզա ալիշ-վերիշ վար:

ԱԻ.—Օ դա շահադլար իդի...սան էլա բի-
լիրսան աթլարի վար ման վերմամիշամ, բիր ազ
դա սաբր էյլա...չայ իչն...

I Թ.—Զայ, չայ նա չայ բեշ սամավար թօքտղ
դահա երի եօխտուր:

ԱԻ.—(ծիծաղելով) Հարդա բեշի թօքտղ-ալ-
թիսնգա օրդա թօքնդա: (ծիծաղում է) սաբր էյլայ
կարդաշ սաբր էյլայ:

II Թ.—Նեջա սաբրելա կարդաշ, օ օթախ-
դա օ կարդ ադամ վար քի-ադամ բիր եր թափ-
մասայ օթուրան: Բու գեջա բզըմ մաֆլաշլարնն
եաթմիշիխ...

ԱԻ.—Սաբր էյլայ կարդաշ սաբր էյլայ...

Լ թ.—Բիր սահման սողրայ բզա աթլաբ
վերմիեասան անդոսսուն Աղլահա (Ա-ին): Գեղաք
(զնում են աջ):

ՏԵՍԻԼ 10.

ԱՒԵՑԻՍ-ԱՂԱ.

—(մինակ) Զեր գլխի արել էնա ձիանք տւի...
հլա շատ կապասէք (նստ. հաշում է): Կէս գը-
րուանքայ Պապօվի չայ մի մանեթու քսան կա-
պեկ. Աշխենի բաթինկեքին՝ էրկու մանեթ տասը
շահի, Անիչկին տետրակ ու կարանդաշ՝ էրկու
շահի, Արտուշկին կանֆետ մի շահի...հըմ...եր-
կու մանեթ, օխտանասուն էրկու կապեկ, մի շա-
հի, էրկու մանեթ ութանասուն հինգ կապեկ: ի-
րեք շահի կը մնայ ինձ պապիրողի փող բա ախր
չաքմէս ուզում էի կրկատել տալ (զլուխը քորե-
լով) չի դուս գալիս...
(Քեմի յետելից լատում են նոյն ճայները ինչպէս
սկիզբո):

ՏԵՍԻԼ 11.

ՆԱ, ԻՇԽ. ՆԵՏԱԶԵ ԵՒ ԷՍՏԱՏԵ (մտնում են).

ՆՏ.—Էստատէ, սադ արիս սմատրիտելի:

ԷՄ.—Ախլաւ բատօնօ (մօտ. Աւ-ին), վի սմատ-
րիտելի:

Ա.Ի.—(շարունակելով) Իրեք շահի, իրեք շահի...

ԷՄ.—Վի սմատրիտելի (տեսնելով որ ուշա-
դրութիւն չեղարձնում): Բաւա կացի ա էս օջախ-
քորի...Գասպագին վի, սմատրիտելի:

Ա.—(սառը) Հա լաւ...դա դա...

ՆՏ—(հրամայական) Բիճօ, Է'ստատէ...

ԷՄ.—Էս գախլաւթ բատօնօ սմատրիտելի:

ՆՏ.—Ութխար սամավարի գաղգաս, չայ մին-
դա, մե ծաւալ օթախշի (զնում է):

ՏԵՍԻԼ 12.

ԱՒԵՑԻՍ ԵՒ ԷՍՏԱՏԵ.

ԷՄ.—(նրա յետելից) Ախլաւ բատօնօ (Աւ-ին)
բարինա ոկազալ սամավար պաստանաւիահ-դա
թիթօն ուշօլ օթախշի:

Ա.Ի.—(ուրախ) Սամավար...չիչաս. (դռներում)
Ալի. (զեմի յետելից լսում է «Բալի») Օ գիւրջէ
կնեազի սամավար իստիր (զեմի յետելից «Բու-
ռհաթ»):

ԷՄ.—Մաշ շեն խար...ուկացըրաւաթ...վի գաս-
պագին սմատրիտելի:

Ա.Ի.—Դա...սմատրիտել, սմատրիտել:

ԷՄ.—Աղա շենի ճիրիմէ...կադա վի լոշ-
կայ դալ:

Ա.Ի.—(հասկանալով) Լօշկայ...լօշկայ պրինեսիլ, կադա չայ պադաւալ:
 ԷՍ.—(կողմ) Բիճօս, տուտուցի դօփիլա էս օխերի. (նրան): Եա նի չայնի լօշկայ սկաժիտ, ցխենս գեռւբների շէ ուբեդուրօ:
 ԵԻ.—Եա նի պանիմաիւ:
 ԷՍ.—Պաւա նի պանիմաիշ շէ ուբեդուրօ:
 Ա.Ի.—Նի զնաիւ:
 ԷՍ.—Պաւա նի զնաիւ շէ ուբեդուրօ, ցխենս գեռւբների...արօյկաս:
 Ա.Ի.—Տրոյկայ:
 ԷՍ.—Հօ տրոյկաս:
 Ա.Ի.—Լօշմդ:
 ԷՍ.—Հօ լօշմդ...ապա լօշադ գեռւբների վեր գեսմիս...
 Ա.Ի.—Լօշադ նետու:
 ԷՍ.—Պաւա նետու, մամա ար ծամիծդդեբայ, ցօցխալս ար գադամըչերի, (տաքանալով) շեն մէ ասրէ նու միզուրեփ, նակուծաթ գաքցն:
 Ա.Ի.—(նոյնպէս քարկանալով) Ը հ ասըմեմ ձի չկայ չէ...
 ԷՍ.—Պաս զվիրի...զաչեմ կրիչիտ...բօգօր շագիձիան աբիժայտի միզօ մէ...ձմա մղաւս մէ միմիօշիկի դա բիձաշվիլի մէպուրէ:
 Ա.Ի.—Դէ կորի է:

ՏԵՍԻԼ 13.

ՆՐԱՆՔ ԵԻ ՆԱՏԱԶԷ.
 ՆՏ.—(զլուխը հանելով) Է՛ստատէ.
 ԷՍ.—Բաթօնօ շենի ձիրիմէ:
 ՆՏ.—Մօդի փեխսացմելի գամխադէ:
 ԷՍ.—Էխլաւ շենի ձիրիմէ: (զնում է. Աւետիս-աղան դարձեալ նստում է սեղանի առաջ եւ հաշտում):

ՏԵՍԻԼ 14.

Ա.ԻԵՏԻՍ ԱՂԱ ԵԻ ՊԱՆԿՐԱՏՈՎ.
 ՊՆ.—(մոնելով ազատ) Սլիշ, դաւայ սկօրեյէ լօշադեյ:
 Ա.Ի.—Հա լաշադեյ...էնա ստացար—նետու լաշադեյ:
 ՊՆ.—Կակ նետու, շտօ տի մնէ տալկուեշ, եա եշօ պա կազեօննօմու տրեխօվանիու.
 Ա.Ի.—Կազեօննի, պակաժի.
 ՊՆ.—(ծոցից հանելով մի թուղթ) Նա, չիտայ:
 Ա.Ի.—(հազիւ կարդալով) «Դանօ սիէ ստատ-սկօմու սօվետնիկու պաշտօվօ-տելեղրաֆնօվօ օկ-րուդայ (վախենալով նայում է նրան) Գասպադի-նու ֆեղօրօվու եղուչեմու դլիա ըելիզիի պօչտ: (վախեցած դոներում) Ալի, Պողոս, Գէորգ, ադա շուտ... (նրան) չիչմս... չիչմս (կողմ) վայ էս ինչ

Էկաւ գլուս, բա ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ...Ալի,
Գէ՛ռդ, Պօղոս.

ՏԵՍԻԼ 15.

ՆՐԱՆՔ, ԱԼԻ, ԳԷՈՐԳ ԵՒ ՊՕՂՈՍ (մտնում են):

Ա.Ի.—Իզվինի վաշէ...գասպարին...չիչաս...
Վի չիչաս լոշադ բուդետ (Նրանց): Աղա բունի
ափարն մանի օթախա-թեզ (ցած վախենալով), լի-
վիզօր դը բիլիրսան (Պանին) պրաշու մօյ կօմ-
նատ, չիչաս լոշադ բուդետ (Նեան), աղա թեզ ա-
փարըն մանըմ օթախայ, աթլարի հազիր էյլն
(Պանին) Պոժալուստայ չիչաս մօյ կօմնատայ—
լոշադ չիչաս:

ՊՆ.—(Ճիծաղելով) Նիչկօ: (զնում է Ալիի հետ
միջին դռներից).

ՏԵՍԻԼ 16.

ԱԻԵՏԻՍ, ՊՕՂՈՍ, ԳԷՈՐԳ.

Ա.Ի.—Ես ի՞նչ էկաւ գլուխս ձեր հօքուն մեռ-
նեմ, հիմի ես ի՞նչ անեմ, էս որ սկսի ըեվիզիայ
անել հօ տունս քանդուեց. Էսքան պասաժիները
ըստի նստած...ի՞նչ կասի (եամշչիկներին): Աղա
դէ շուտ արէք, շուտ արէք, շուտ արէք դնացէք

քոլոր պասաժիրներին ասէք թող դուս գան...
Ալիին ասէք մի էրկու ֆուրդօն լծի ու մի դի-
լիջան, շուտ. Էս պասաժիրներին ճամբու գցի, ա-
սէք ըեվիզօրը գալիս ա, էլ ձի չէք գանի, դէ
շուտ, ի՞նչ էք էշացել (մեկին հրուտ է դամսկի,
միահին մուժուկի սենեակները, որոնք շուտով դուրս
գալով հեռանում են միջին դռնից):

ՏԵՍԻԼ 17.

Ա.Ի.—(անհանգիստ այս ու այն կողմն ընկ-
նելով ձեւեր է անում) Վայ Վայ, էս ինչմ...ախը
էս ոնցմ (մօտենալ. միջին դռն): Ա.Դէ շուտ ա-
րէք ձիանքը պատրաստ ա—շուտ արեք...լոշադ
գատով...օմնիբուս գատով...ադա թեզ ֆուրդօնն
հազըր դ՞ր...

(Դուրս են վազում ամենքը շտապով, միքանիսը
իրանց իրերի ծանրութիւնից ընկնում են եւ դար-
ձեալ շտապում. Անտը օգնում է. առհասարակ մեծ
շփոթութիւն է տիրում):

Ա.Ի.—Փառք Աստուծոյ ազատուեցի, Ալի...
Ալի...

ՏԵՍԻԼ 18.

ԱԻԵՏԻՍ ԵՒ ԱԼԻ.

Ա.Ի.—Գեօնդարդըմ գետաի:

Ա.Ի.—Բաս օ նաշչալնիկ նա իդի:

ԱԼ.—Օ դա թամաշա էլղի, նեջա գետտիւ
ԱԻ.—Թամաշա էլղի, աղա ման սանա դէյ-
մադըմ մանըմ օթախայ ափմը:

ԱԼ.—Իստամադի ման նեյնիմմ:

ԱԴ.—Աղա ախը էւին եխլաման...

ՏԵՍԻԼ 19.

ՆՐԱՆՔ ԵՒ ՊԱՆԿՐԱՏՈՎ.

ՊՆ.—(ՄՄՆԵԼՈՎ) Նու, չտօ, լօշադի գատովիւ:

ԱԼ.—Հազր դր...կուլիէլ...

ԱԻ.—Գատով, կուլիէր գատով:

ՊՆ.—Նու խաբաշօ, ա դդէ մաեա բումագայւ:

ԱԻ.—(ՄԱԼՈՎ) գգես:

ՊՆ.—(ՆԱՅԵԼՈՎ) թղթին եւ Աւ-ին ծիծաղում է)

ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ.

ԱԻ.—(ՆՐԱՆ ՀԵՏԵԿԵԼՈՎ) ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ
ԽԱ ԽԱ.

ՊՆ.—(ԱԼԵԼԻ ԽԻԱՄ) ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ.

ԱԻ.—(ԱՐԾԱԳԱՆՔ ՄԱԼՈՎ) ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ
ԽԱ ԽԱ.

ԱԻ.—(ՂԱՐՃԵԱԼ) ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ.

ՊՆ.—Ա-վի տօ չկօ սմէեօտես, ԽԱ ԽԱ ԽԱ
ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ.

ԱԻ.—Նիզնախւ, ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ.

ՊՆ.—ԴՈՒՐԱԿ, ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ.

ԱԻ.—ԴՈՒՐԱԿ, ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ.

ՊՆ.—Վի դուրակ, ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ.
ԱԻ.—Դա եա դուրակ, ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ ԽԱ.
ՊՆ.—Նու րազ լօշադի գատովի, տօ եա սկա-
ժուպրաւդու, էտօ բումագա տօ վեդ նէ մօյիեա,
էտօ մաեօ օտցայ, ա օն զնաչիտ սլուժիլ ըանշէ
ու լեւիզօրայ, ա եա տօ եղու վ՛մալենսկույի
գուբերնիու, ժրեբիու վինիմատ. պէճնեալ, ԽԱ ԽԱ
ԽԱ...

ԱԻ.—(ՂԵՌ ԱԱՂՋԱԾ յԵՍՈՒ ՄԵՆՆԵԼՈՎ ՆՐԱ ԾԻ-
ԾԱՂՋ ԻՆՔՆ ԷԼ Է ԱԿՈՒՄ ԾԻԾԱՂԵԼ) ԽԱ ԽԱ ԽԱ
ԽԱ ԽԱ ԽԱ:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ՃՈՂՈՐԾՈՒԱԾ ԾԱՌԱՅ

Վողրվ. 1 ար. փոխադ. Արաբսեանի

ՓՈԽԱԴ.

Պ. ԱՐԱՔԵՍԵԱՆԻ

ԵՐԱԾ ԾԱԼԹՈՓԸ

ԴՈՐՁՈՂ ԱՆՇԻՆՔ

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ ԿՐԻՍՏՈՆԵԱՆ

ԱՍՏԻՃԱՆԱԼՈՐ:

ՍՈՖԻԱ ԳԱԼՎՏԵԱՆ ՆՈՐԱ ԿԻՆԸ:

ՀԱՄԲՈ ծառայ:

ԹԵՐՄԻՇԵԱՆ ԿՐԻՍՏՈՆԵԱՆ:

Միջակ սենեակ: Սեղան, նորա մօս մի բազէաթոռ: Մի քանի աթոռներ, բազմոց երկու բազէաթոռ: Բազմոցի զլխին հայելի:

ՏԵՍԻԼ 1.

ՊԵՏՐ.—(ՆԱՍՏԱԾ ԲԱԶԿԱՂՈՒՈՒՄ) և այդպէս որոշուած է, տօնախմբութեան չեմ գնալ...կուղարկեմ Համբօին և կասեմ որ շնորհաւոր է... (ԺՈՂՈՎՈՂՈՂԻՆ) ինքներդ դատեցէք, երեք միայն պսակուել եմ, իսկ այսօր պարտաւորում են գնալ տօնախմբութիւն շնորհաւորելու... (ԿԱՆԵԼՈՒ) Կարապետ (բարձր) Կարապետ:

ՏԵՍԻԼ 2.

ՀԱՄԲ.—(ՄԱՆԵԼՈՒ) հրամմէ աղա ջան: ՊԵՏՐ.—Անմիջապէս գնայ Մարտիրոսեանենց մօտ և ասայ, որ պարոնը շնորհաւորում է տիկնոջ տօնախմբութիւնը և ներողութիւն է խնդրում, որ անձամբ ինքը չի կարող գալ... հասկացար:

ՀԱՄԲ.—Հրամել էս, աղայ,

ՊԵՏՐ.—Դէ շտապիր...միենոյն ժամանակ...

երկու տեսակ ճաշ կ'ըերես հիւրանցից...հասկացմար:

ՀԱՄ.—Հրամել էս աղայ:

ՏԵՍԻԼ 3.

ՊԵՏՐ.—Է, փառք Աստուծոյ...այդ հարցից ազատուեցինք...իսկ ուր է իմ Սօֆիկը...

ՏԵՍԻԼ 4.

ՍՕՖ.—(դուրս թռչելով) Ա-խ...

ՊԵՏՐ.—Միթէ կարելի է այդպէս վախացնել...

ՍՕՖ.—Դեռ ասում ես «քաջ եմ»...մինչև անգամ հարազատ ամուսնուց վախեցար...սակայն հասկանալի է...բայց և այնպէս այսօրուանից ես կը լինեմ քոյ մեծաւորը...հասկացաք մեծապատիւ պարոն:

ՊԵՏՐ.—(ծգուելով նրա առաջ) Լսում եմ ձերդ բարկութիւն:

ՍՕՖ.—Ինչ որ ձեզ հրամայեն—դուք պիտի կատարէք:

ՊԵՏՐ.—Լսում եմ ձերդ գերազանցութիւն:

ՍՕՖ.—Մեծապատիւ պարոն, հրամայում եմ ձեզ անմիջապէս համբուրել ձեր կնոջը:

ՊԵՏՐ.—Պատրաստ եմ ձեռդ վսեմափայլութիւն:

ՍՕՖ.—Սաշա, դու ծաղրում ես ինձ...բարձրութիւն, գերազանցութիւն, վսեմափայլութիւն...ես այդպէս չեմ ուզում...ես ուզում եմ որ դու ինձ Սօֆիկ անուանես:

ՊԵՏՐ.—Խա, խա, խա: Այ քեզ մեծաւոր (Տալարութէ):

ՍՕՖ.—Բաւական է, իսկ որտեղ է մեր ծառան, աղախինը, դայակը...ինչպէս դու ինձ նորան ներկայացրիր:

ՊԵՏՐ.—Զերդ գերազանցութիւն...

ՍՕՖ.—Դարձեալ...

ՊԵՏՐ.—Համբօն, ձերդ գերազանցութիւն—Սօֆիկ...ուղարկուած է Մարտիրոսեանենց մօս, տիկնոջ տօնախմբութիւնը շնորհաւորելու և յետոյ ճաշարանից ճաշ բերելու...հրաշալի ճաշ...

ՍՕՖ.—Երևակայում եմ:

ՊԵՏՐ.—Միայն, առաջին և վերջին անգամն է. վաղուանից բարեհաճեցէք եփել, տապակել, թխել և արհասարակ տանտիկնութիւն անել, Համբօնի հրամանատարութեան տակ:

ՍՕՖ.—(ուղախ) Ախ ինչ լաւ կը լինի...այժմ կը նշանակէ ինչ ուզեմ կանեմ:

ՊԵՏՐ.—(Համբուրելով) Ինչ որ ուզես:

ՍՕՖ.—Վաղը անպայման կը պատրաստեմ քաղցր կարկանդակներ (մտածելով): Սաշա, իսկ Համբօն կարկանդակներ իմանում է պատրաստել:

ՊԵՏՐ.—Այ քեզ տանտիկին... խա, խա,

պէտք է սովոր է կարկանդակները ծառայից. խա,
խա, խա:

ՍՕՖ.—(Նորա շրթունքները ծածկելով) չը
համրձակուես...դու դարձեալ ծաղրում ես...եթէ
ես իմանայի որ դու այդպէս մարդ ես...ես եր-
բէք չէի ամուսնանալ քեզ հետ:

ՊԵՏՐ.—(ծաղրելով նրան) Եթէ ես իմանայի,
որ դու քաղցր կարկանդակներ պատրատել չը
գիտես...ես երբէք չէի ամուսնանալ...

ՍՕՖ.—(ոտքը հատակին խփելով), Սաշա:

ՊԵՏՐ.—(նոյնպէս) Սօֆիկ:

ՍՕՖ.—Եւ դուք կը շարունակէք ծաղրել ձեր
կնճջը...ես...ես կը բաժանուեմ ձեզանից...կեր-
թամ դատարան և կասեմ...

ՊԵՏՐ.—(շարունակելով) Պ. պ. դատաւորներ,
նա ինձ ծաղրում է քաղցր կարկանդակներով...

ՍՕՖ.—Ոչ, ամենաին այդպէս չէ... ես ու-
րիշ տեսակ կասեմ...

ՊԵՏՐ.—Իսկ ես այնպէս կասեմ, որ դա-
տաւորները իսկոյն ապահարզան կը տան ինձ...

ՍՕՖ.—(հպարտ) հետաքրքիր է ի՞նչ կարո-
ղէք ասել...

ՊԵՏՐ.—Ես կասեմ պ. պ. դատաւորներ, նա-
յեցէք ի՞նչ դժբաղտ արարած եմ ես...իմ կինս
քաղցր կարկանդակներ չէ իմանում պատրաս-
տել...ի նկատի առէք այդ հանդամանքը և կամ
ապահարզան տուէք ինձ, կամ սովորեցրեք նո-
րան կարկանդակ պատրաստել...

ՍՕՖ. — Սաշա, դարձեալ, անպիտան...

ՏԵՍԻԼ 5.

(Համբօն մտնելով ներս է զերում երկու ծաշ):

ՀԱՄԲ.—Շատ բարեւ արին, աղա, ասին շատ
շնորհակալ ենք:

ՊԵՏՐ.—Կեցցէս Համբօ...դէ շուտ սեղանը
պատրաստիր... (դուրս է զնում):

ՀԱՄԲ.—Հրամել ես աղա... (պատրաստում
է սեղանը):

ՏԵՍԻԼ 6.

ՍՕՖ.—(ժողովուրդին) Ի՞նչ ծիծաղալի դեմք
ունի (նորան): Համբօ, դու կարկանդակներ պատ-
րաստել չես իմանում:

ՀԱՄԲ.—Եդ ինչա որ:

ՍՕՖ.—Կարկանդակ չը գիտե՞ս:

ՀԱՄԲ.—Իմ բանս չի:

ՍՕՖ.—Խա, խա, խա: Պէտք է օգնել Համ-
բօին, չէ որ ես այժմ տանտիկին եմ... (օգնում է)
շատ լաւ, ամեն բան իրան տեղն է... Համբօ իսկ
դու քո պարոնիդ սիրում ես:

ՀԱՄԲ.—Իմ գործս չէ...

ՍՕՖ.—Խա, խա, խա... Համբօ, դու միշտ այդ-
պէս ծիծաղալի ես...

ՀԱՄԲ.—ՄԵՆՔ ՄԻԱՎ ՄԵՂՈՎ ՀԱՉ ԵՆՔ ԽԱՄ-
ԲՄՅԻՒ:

ՏԵՍԻԼ 7.

ՊԵՏՐ.—(ԴՈՒՐՍ ԳԱԼՈՎ) ՊԱՄՐԱՄՍՄԷ:

ՄՕՅ. — Այս պատրաստ է... մենք միասին
պատրաստեցինք:

ՊԵՏՐ.—Գովում եմ... իսկ այժմ ճաշենք...
նստիր տանտիկնոջ տեղը և կարքագրիր...

ՄՕՅ. — Ես չեմ ուզում տան տիկնոջ տեղը
լինեմ, այլ ուզում եմ իսկական տանտիկին լի-
նեմ...

ՊԵՏՐ.—Ահա երբ կը սովորէք կարկանդակ-
ներ պատրաստել, այն ժամանակը իսկական տան
տիկին կը լինէք:

ՄՕՅ. — (ՈՒՍԵԼՈՎ ՍՈՒԱԾ) Ահ, ինչ համեղ է...
ինչ լաւ է պատրաստուած... (ՈՒՍՈՒՄ Է):

ՊԵՏՐ.— Այ քեզ տանտիկին... ինքը իրա հա-
մար ածել է կերակուրը, ուտում է... իսկ ես պէտք
է նայեմ...

ՄՕՅ. — (ՅԻՇԵԼՈՎ) Սաշա, սիրելիս, ներիր (ա-
ծում է նորա համար):

ՊԵՏՐ.— (ԱԿՍՈ՛ԱՄ Է ՈՒՍԵԼ): Այս ի՞նչ է պատա-
հել այսօր մեր ճաշարանի տիրոջ հետ—եր-
բէք այսպիսի համեղ սուալ կերած չեմ:

ՀԱՄԲ.— Կերակուրը ճաշարանից չէ աղայ,

դուք ասիք, որ Մարտիրոսեանցից բերեմ... ես էլ
ինչպէս հրամայեցիք այնպէս էլ արի:

ՊԵՏՐ.— Այդ ի՞նչ ես արել յիմար... (Սօֆիային)
հասկանում ես—ի՞նչ խայտառակութիւն... Մար-
տիրոսեանները իրանց արիստոկրատ են ձեաց-
նում... և ես նորանց հետ մօտիկ ծանօթութիւն
չունեմ... հանկարծ այս յիմարը նրանցից մեզ հա-
մար երկու ճաշ է բերել...

ՄՕՅ. — Խա, խա, խա:

ՊԵՏՐ.— Լսիր յիմարի գլուխ, ահա քեզ ե-
րեք ըուբին, գնայ առ մի տօրտ և աար Մար-
տիրոսիանենց տուն... ասայ, որ պարոնը շնորհա-
կալութիւն է անում ուղարկուած ճաշի համար.
Ներողութիւն է խնդրում և ուղարկում է ձեզ
տօրտը... հասկացար, լաւ հասկացար յիմարի
գլուխ:

ՀԱՄԲ.— Հրամել ես աղա (զնում է):

ՏԵՍԻԼ 8.

ՊԵՏՐ.— Ինչպէս ես հաւանում մ... այ ա-
պնւշ...

ՄՕՅ. — Իսկ իմ կարծիքով, Համբօն շատ խե-
լացի է վարուել. նա իմացել է, որ ես սունկով
սուալ շատեմ սիրում... և ահա նա գնացել է Մար-
տիրոսեանենց մօտ:

ՊԵՏՐ.— Կատակը մի կողմը, ես սաստիկ վա-

խենում եմ, որ դորանից մի բան դուրս չը դայ
(շարունակում է ուտել):

ՍՈՅ.—(հանկարծ) Սաշա:
ՊԵՏՐ. (վերթոշելով) հմմ...ի՞նչ կայ:
ՍՈՅ.—Գիտես ես ի՞նչ եմ մտածել:

ՊԵՏՐ.—Չը գիտեմ ի՞նչ եմ մտածել...երեխ

դարձեալ կարկանդակների մասին...

ՍՈՅ.—(ծաղրելով) կարկանդակներ... կար-
կանդակներ...շարունակ կարկանդակներ... ոչ,
ահա թէ ես ի՞նչ եմ մտածել: Թոյլ տուր ինձ այ-
սօր հրաւիրել թէյի հիւրեր...ես տանտիկնու-
թիւն կը անեմ, թէյ կը պատրաստեմ...սիրելիս
թոյլ կը տամա...

ՊԵՏՐ. — (համբուլելով՝ նորան) Ուրախու-
թեամբ...հրավիրիր ում որ կամենաս: Ահա քեզ
փող—կարքադրիր ի՞նչպէս կամենաս:

ՍՈՅ.—Ես կը հրաւիրեմ Միրվելիաններին և
ես տան տիկնութիւն կանեմ ի՞նչպէս մեծ
կին...

ՊԵՏՐ.—Բայց միթէ դու փոքը կին ե՞ս...

ՍՈՅ.—Սաշա...անպիտան, քեզ հետ խօսել
չի կարելի, դու շարունակ ծաղրում ես ինձ...

ՊԵՏՐ.—Բայց դու իսկապէս որ շատ լաւ
ես մտածել...Միրվելիանները շատ համակրելի
զոյգ են...միայն տես որ մեր յիմար Համբօն դար-
ձեալ մի բան չը խարն է...նա կատարեալ ա-
պուշ է:

ՍՈՅ.—Ոչ Սաշա, նա այնպէս բարի երես
ունի...նա գիտեմ շատ նման է ուղղագրութեան
ուստիցին...

ՊԵՏՐ.—Իսկ դու հարցրու մի անգամ նո-
րան թէ—ի՞նչպէս թէյով հիւրասիրեց նա ինձ
առաջին անգամ...Մի անգամ ես հրամայեցի դնել
ի՞նքնաեռը...սպասում...եմ...մի...երկու ժամ, ոչ
ի՞նքնաեռն է երեսում ոչ Համբօն...Գնում եմ խոհա-
նոց և ի՞նչ եմ տեսնում. խողովակի մէջ ջուր է
ածել իսկ ի՞նքնաեռի, այսինքն որտեղ որ ջուրն
են ածում...ածուխ է լցրել...Ես սամտիկ բար-
կացայ և ասում եմ «այդ ի՞նչ եմ անում յիմար
աւանակ»: «Ի՞նչ անեմ աղայ ասում է, սամովա-
բը ծակա, ջուրը չի պահում»:

ՍՈՅ.—Եխ ի՞նչ խելօքն է եղել (ծիծաղումէ):

ՊԵՏՐ.—Վերջապէս մի կերպ ես սովորաց-
րի ի՞նքնաեռը դնել...դարձեալ սպասում եմ, դարձ-
եալ գնում եմ խոհանոց և ի՞նչ եմ տեսնում.
Համբօն աշխատում է գրկել ի՞նքնաեռը և չէ կա-
րողանում, որովհետեւ տաք է...Ասում եմ ի՞նչ են
անում: Ասում է «ուզում եմ բերեմ օթախը—
տաք է»:

ՍՈՅ.—(շարունակ ծիծաղ). Եխ ի՞նչ ծիծա-
ղալի է:

ՊԵՏՐ.—Բայց թէ մի բան որ հասկացաւ,
երկըորդ անգամ նոյն մխալը չի անիլ:

ՏԵՍԻԼ 9.

ՀԱՄԲՈ—(Խոնելով) համեցեք աղայ երեք
մանեթը...

ՊԵՏՐ.—Ինչ երեք մանեթ:

ՀԱՄԲՈ—Տօրտի փողը աղայ:

ՊԵՏՐ.—(զարմացած) Պարտքով վերցրի՞
բնչէ:

ՀԱՄԲՈ—Զէ աղայ Մարտիրոսեանները տուին
փողը...

ՊԵՏՐ.—Ի՞նչ:

ՀԱՄԲ.—Ինչպէս որ գուք համայեցիք, գնացի
պիրողը առայ, բերեցի նրանց մօտ: Աղախնու
ձեռքով ինձ դուրս եին ուղարկել մէկ րուրի,
ես էլ ասի պիրոզի զինը երեք մանեթա մի մա-
նէթ չիւ:

ՍՕՅ.—(սաստիկ ծիծ.) Ես կը մեռնեմ ծի-
ծաղից:

ՊԵՏՐ.—Մորթեց, մորթեց, (Նորան) Ասայ
խնդրեմ գլխումդ ուղեղ կայ:

ՀԱՄԲ.—Կայ աղայ:

ՍՕՅ.—Շատ լաւ ես արել Համբօ: (Ժողո-
վովողին) Ինչպէս էք հաւանում ա: Տարել է նուէր
տորտր և վերցրել է երեք րուրի...խա, խա...:

ՊԵՏՐ.—Ահա դու ծիծաղում ես, բայց գի-
տես թէ ինչ կարող է դուրս գալ դորանից:

ՍՕՅ.—Ոչինչ: Վաղը ինքտ կերթաս և ան-

ձամբ կը բացատրուենս... (Համբօին) Գնա Միբ-
վելեանների մօտ և ասայ թէ, տիկինը և պարո-
նը խնդրում են ձեզ թէյի: Հասկացմը:

ՀԱՄԲ.—Այս հասկացայ:

ՍՕՅ.—Տէս որ չը խառնես, կասես. տիկի-
նը և պարոնը խնդրում են ձեզ թէյի: Կրկնիր:

ՀԱՄԲ.—Տիկինը և պարոնը խնդրում են ձեզ
թէյի...

ՍՕՅ.—Դէ գնայ, շուտ:

ՀԱՄԲ.—Այս բոպէիս (Չնում է),

ՏԵՍԻԼ 10.

ՊԵՏՐ.—Ոչ միքան չես կարող հասկացնել այդ
ապու շին...

ՍՕՅ.—Ինքդ ես մեղաւոր: Մի բան ասե-
լուց յետոյ պէտք է ստիպես որ կրկնի, Տեսնում
ես ինչ խելացի կին ես ունեցել:

ՊԵՏՐ.—Այս խելացի ես, բայց տես որ հիւ-
րերը կը գան, խակ դու ոչինչ պատրաստ չունիս:

ՏԵՍԻԼ 11.

ՍՕՅ.—Սաշա սիրելիս, ներիր...ես անմի-
ջապէս ամեն ինչ կը պատրաստեմ: (Գնածէ)

ՊԵՏՐ.—Մարտիրոսեանների զործր... վատ
է,—կարող են վիրաւորուել...ապնէշ...տխմար...
(Ման է զալիս):

(Մտնում է Սօֆիկը թէյի պարագաներով):

ՏԵՍԻԼ 12.

ՍՕՅ. — Մեծապատիւ պարոն, դուք այստեղ անգործ ման էք գալիս, մինչդեռ ձեր կինը հոգնում է աշխատանքից:

ՊԵՏՐ. — Իսկոյն, իսկոյն իմ անխոնջ մշակ: (Միասին սեղան են պատրաստում):

ՍՕՅ. — Իսկ այժմ, ամեն ինչ պատրաստ էս... տեսնենք ինչ լուռ է բերում Համբօն... (վնքաբար) Սաշա, դու ինձ սիրում ես:

ՊԵՏՐ. — Ամենևին:

ՍՕՅ. — Սաշա:

ՊԵՏՐ. — Սօֆիկ:

ՍՕՅ. — Ոչ դու ճշմարիտն ասայ, սիրում ես ինձ:

ՊԵՏՐ. — Ամենևին:

ՍՕՅ. — Ստում ես, ստում ես... Աչքերից երեսում է որ ստում ես:

ՊԵՏՐ. — Է լաւ... սիրում եմ... հետոյ:

ՍՕՅ. — Համբուրի ինձ:

ՊԵՏՐ. — Մեծառութիւնութեամբ ձերդ գերազանցութիւն: (Համբուրում՝ է):

ՏԵՍԻԼ 13.

ՀԱՄԲ. — (Ներս մտնելով) Խաչիկեանները շատ բարե արին և ասին ոք կը գտն ամբողջ ընտանիքով:

ՍՕՅ. — Ի՞նչ ես ասում:

ՀԱՄԲ. Խաչիկեանները ասում եմ շատ բարե արին ու ասին ոք ամբողջ ընտանիքով կը դան:

ՍՕՅ. — Ես քեզ ում մօտ ուղարկեցի: Միր վելեանների մօտ... Միր վել լիանների, իսկ դու գնացել ես Խաչիկեանների մօտ...

ՀԱՄԲ. — Լաւ չեմ իմացել, խարնել եմ:
ՊԵՏՐ. — (ծիծաղում՝ է):

ՍՕՅ. — Լսմւմ ես, Սաշա, ինչ է արել. փոխանակ գնալու Միրվելիանների մօտ, գնացել է Խաչիկեանների մօտ... Տէր Աստ., իսկ նոքա վեց երեխայ ունին և իրանք երկու այդ նշանակում է ութը հոգի: Սաշա, որտեղ պէտք է մենք նորանց նստացնենք, ինչով հիւրասիրել...

ՊԵՏՐ. — Այժմ ինչ կասես: Այժմ իմ հերթն է քոյ վերայ ծիծաղելու... Բայց ինչ արած... (Համբօին) գնայ շուտով ուտելիք գնելու...

ՍՕՅ. — (Համբօին) Այդ ինչ արիր դու: Դու ինձ մօրթեցիր: Որտեղ ես պէտք է նորանց տեղաւորեմ: Հասկացար:

ՀԱՄԲ. — Հրամելիք, հասկացայ:

ՍՕՅ. — Գնայ այս բողէիս և մէկ ըուբու կարկանդակ առ, 60 կոպ. հաց., 3 ֆունտ պանիր, երկու ֆունտ վիշինայ... Շուտ գնայ...

ՀԱՄԲ. — Ես սաաթիս (զնում՝ է):

ՏԵՍԻԼ 14.

ՍՈՅ.— (Կահատրում է սեղանը): Ի՞նչ աշնեմ...ինչ անեմ ես այդքան բազմութիւնը...Տէ՛ք Աստուած, երանի ես չամուսնանափի...ինչ գըլխովս եմ տալիս Խաչատուրեաններին...ի՞նչ անել, ինչ անել...

ՊԵՏՐ.— (սառնասիրտ) հիւրասիրել հիւրերին...

ՍՈՅ.— (ծաղրելով) հիւրասիրել հիւրերին... Հիւրասիրիր դու...Դու ես ամեն բանի մէջ մեղաւորը...Համբօն ապուշէ որովհետև քեզ մօտէ ծառայում:

ՊԵՏՐ.— Բայց ահա շուտով հիւրերը կը դան, իսկ տանտիկինը բարկացած կը լինի...այդ լաւչէ...

ՍՈՅ.— Չեմ լինի բարկացած...Դու կուզես բարկացած եղիր...իսկ ես չեմ բարկանալ...

ՊԵՏՐ.— (ըռնելով նորա ձևոքից տանում է նորան ուժալի հայելին) Նայիր, սա ովէ է այնտեղ կանգնած,— տանտիկինը որը պատրաստում է 8 հիւրին հիւրասիրել, թէ մի փոքրիկ երեխայ, որին չարութեան համար անկիւնն են կանգնացըրել:

ՍՈՅ.— (նայելով հայելու մէջ) Խա, խա, խա, ինչ ծիծաղալին եմ ես...Սաշա...Ներիր ես էլ չեմ անիլ. դէ եկ շուտ պատրաստուենք ապա

թէ ոչ շուտով կս բողէն, ճիւրերը զալ (սկսուէ պատրաստոթիւն սեսնել):

ՊԵՏՐ.— Հա, քիչ էր միում մօռանում էի: Այսօր ինձ մօտ մի անկոչ հիւր էր դալու թէրմիշիան ազգանունով:

ՍՈՅ.— Թէրմիշիան: Ես կը փախչեմ...ուղղակի կը փախչեմ...գիտես ի՞նչ...Ես կասեմ Համբօին, որ նա ոչ որին չը ընդունէ...կասէ, տանը չեն պրծաւ գնաց...

ՊԵՏՐ.— Շատ լաւ, այդպէս էլ կը կարքադրենք...

ՍՈՅ.— Ես զգւում եմ նորանից...նա այնպիսի Փատէ... (Ներկայացնում է նորան, երկուան էլ ծիծաղում են):

ՏԵՍԻԼ 15.

ՀԱՄԲ.— (Մտնում է առնելիքներով) Պատրաստ է, հացը միայն մոռացայ այս բոպէիս կը երթամ...

ՍՈՅ.— Նախ իքնաեռը դիր: (Համբօն շուարած է) Ինչու ես կանգնել:

ՀԱՄԲ.— Ես նորից գնացի Խաչատուրեանների մօտ...

ՊԵՏՐ.— Ի՞նչու համար:

ՀԱՄԲ.— Ասի որ նեղութիւն չը կերն գալու, որովհետև տէկինը ասում է տեղ չը կայ այդ-

քան մարդ ընդունելու...և ուտելու էլ բան չը կայ...

ՍՕՖ.—(սպլշած) ի՞նչ:

ՀԱՄԲ.—Շնորհակալութիւն արին և ասին որ չ' գալ:

ՍՕՖ.—Յիմար, ապհւշ, տխմար: Այդ ի՞նչ ես արել:

ՊԵՏՐ.—Այժմ տեսար «խելացի ամուսին»—
(Համբօխն) Տիսմար:

ՀԱՄԲ.—Հրամել ես աղա:

ՊԵՏՐ.—Էշի զլուխ:

ՀԱՄԲ.—Հրամել ես աղա:

ՍՕՖ.—Այժմ ի՞նչ անեմ ես: Ես կը մեռնեմ...ճշմարիտ կը մեռնեմ...Մաշա սիրելիս օգնիր ինձ...ի՞նչ անեմ այժմ:

ՊԵՏՐ.—Նոյնը ի՞նչ որ ինձ էիր խորհուրդ տալիս—հանգստանալ և մօռանալ...

ՍՕՖ.—Մոռանալ...բայց ի՞նչ կասեն այժմ...
ի՞նչ կարծիք կը ունենայ այժմ իս մասին տիկին
և սշատուրեանը, ամեն տեղ պէտք է բամբառէ
ինձ (Համբօխն) իսկ մեղաւողը դու ես, դու...

ՀԱՄԲ.—Հրամանքեզ:

ՍՕՖ.—Հրամանքեզ, հրամանքեզ... ուրիշ
բան չը զիտէ... ես քեզ... (մօտենում է նորան) հասկանում ես... (խիստ) կը խեղատէի... (դիմերով
ժողովրդին) Դուք սովորացըք այժմ ես ի՞նչ ա-
նեմ: (Համբօխն) Այսուհետեւ իրաւունք չունենաս

քո խելքով բան բռնել...դու պէտք է միայն կա-
տարես այն, ինչ որ քեզ հրամայում են: Հաս+
կացմար:

ՀԱՄԲ.—Հասկացա:

ՊԵՏՐ.—(կատալով) Կրկնիր:

ՍՕՖ.—Մաշա, եթէ դու կը շարունակես ինձ
ծաղրել ես լաց կը լինեմ... (Սօֆ. աշխերի մէջ ե-
րեւում է արտասովնք)...
ՊԵՏՐ.—Բայց գիտես ի՞նչ:

ՍՕՖ.—Ի՞նչ, սիրելիս ասա:

ՊԵՏՐ.—Արի երկուսս էլ լաց լինենք:

ՍՕՖ.—Չեմ ուզում, չեմ ուզում լաց լինել...
(կսում է զանզի ծայն) Համբօ, նայիր եթէ այդ թէր-
միշեանն է չը ընդունէս... ես չեմ կարող... չեմ.
կամենում (փախչում է, Պետրոսեանը հետեւից):

ՏԵՍԻԼ 16.

ԹԷՐՄԻՇ.—Տանն ե՞ն.

ՀԱՄԲ.—(ը ծանաշելովնորան) Համեցէք պա-
րոն, համեցէք...

ԹԷՐՄԻՇ.—(հանելով վերարկուն) Շատ ու-
րախ եմ, շատ ուրախ... (կայում է չորս կողմը)
լաւ է, շատ լաւ: (կստում է եւ դիմում հասարա-
կովթեան) Պէտք է ձեզ ասեմ որ... Մարմարեանը
պմունացել է մի հետաքրքիր օրիորդի հետ:
(սկսում է երգել, իսկ Համբօն նայում է նորան

կասկածանքով) Վատ չէ...վատ բնակարան չէ...
(վեր է կենում, Համբօխն) Իսկ դու այստեղ ինչ ես:

ՀԱՄԲ.—Ծառայ:

ԹէՐՄԻՇ.—Ան, ծառայ...այդ լաւ է...ես
շատ եմ սիրում ծառաներին... (լրութիւն) Ահա
ինչ, ասա որ նրանց սպասում է սի երիտասարդ...

ՀԱՄԲ.—Հրամել ես: Ազգանունը ինչպէս ա-
սեմ:

ԹէՐՄԻՇ.—Թէրմիշեան:

ՀԱՄԲ.—(արագ մօտեն. նրան) Թէրմիշեան.
Տանը ոչ ոք չը կայ:

ԹէՐՄԻՇ—Ի՞նչպէս, դու ասացիր, որ տան-
նեն, իսկ այժմ...

ՀԱՄԲ.—Տիկինը ասաց, եթէ այն խայտա-
ռակ մարդն է Թէրմիշեանը, ասայ որ տանը
չեն...տանը ոչ ոք չը կայ...համեցէք դուրս գնա-
ցէք...

ԹէՐՄԻՇ.—Ինչպէս ես համարձակվում յի-
մար...

ՀԱՄԲ.—(տալով վերարկուն) Դէ, դէ, շատ
մի խօսիր:

ԹէՐՄԻՇ.—(հազն. վերարկուն) Ինչ խայտա-
ռակութիւն...լսուած բան է մյս...այդ ոչ մի օ-
րինաւոր մարդ իրան չի թոյլ տալ:

ՀԱՄԲ.—Դուրս գնացէք պարոն, դուրս...

ԹէՐՄԻՇ.—Ասա քո տիկնոջ, որ նա...խայ-

տառակ կին է...իսկ պարոնիդ ասա, որ նա գրե-
հիկ...և Բուրբօն է...այս Բուրբօն... (գնում է):

ՏԵՍԻԼ 17.

ՀԱՄԲ.—(մօտենալով դռներին) Գնաց, գնաց:

ՏԵՍԻԼ 18.

ՍՕՖ.—(մանելով Աղեքսանդրի հետ) Ի՞նչ էիր
խօսում նրա հետ:

ՀԱՄԲ.—Ես սկզբից դեռ չը ճանաչեցի նո-
րան, իսկ երբ նա ինձ ասեց իրա ազգանունը ես
նորան ճամփու դրի և ասացի, որ «տիկինը չէ
ուզում տեսնել այդ խայտառակ մարդուն»:

ՊԵՏՐ.—(սարսափած նայում է Սօֆ.) Իսկ
այժմ, իսկապէս ես չը գիտեմ ինչ անեմ: (Համ-
բօխն) Էշի գլուխ: Դու գիտես որ մեզ ամբողջ
քաղաքում խայտառակեցիր,

ՀԱՄԲ.—Հրաման քեզ:

ՊԵՏՐ.—Տեղափոխուել...այսքաղաքից պէտք
է տեղափոխուել... որովհետեւ իայսառակուս ծ
ենք... (Համբօխն) Տեսնում ես դատարկագլուխ թէ
ինչ ես արել դժու:

ՀԱՄԲ.—Հրամանքեզ:

ՍՕՓ.—Գիտես ինչ Սաշա, գնանք—դուք
Մարտիրոսեանների մօտ իսկ ես Խաչատուրեան-
ների մօտ և անձամբ բացատրուենք...

ՊԵՏՐ. — (Համբ. նորան) Քո առաջարկութիւնը խելացի է... երթանք միայն շուտ... (Համբին) տուր շուտով վերարկուս: (Համբօն ընկնում է այս ու այն կողմը... պարոնին տալիս է տիկնոջ վերարկուն, իսկ տիկնոջ պարոնի — յանկարծ նայելով միմեանց վերայ եւ մօտենալով հայելուն երկուսն էլ ծիծաղութ են):



(Վահագի) 3/13/1925

Wetzel's "Theatre Royal" was established
in 1792 by Christopher Wetzel, a man
of German descent who had been
a member of the Virginia Cavalry during the
Revolutionary War. He left his home
in Virginia and came to Kentucky in 1790
and settled in what is now called Wetzel's
Creek, about two miles from the mouth of the

i

- ~~877~~
- | | | |
|-----|--|-------|
| 24. | Սերմ և ցանք. Գ. Ղազարհանի. | — 25 |
| 25. | Գիքորը, Յովհաննէս Թումանեանցի | — 20 |
| 26. | Մեթոդիկա, Ա. Ռուգէի, փոխ. Յ. Տէր. Մի-
րաքեանի | 1 50 |
| 27. | Հայկական վայելչագրութիւն և գեղա-
գրութիւն, Գ. Լոռնեանի, տետրակ Ա. | — 40 |
| 28. | » » տետրակ Բ. | — 40 |
| 29. | » » տետրակ Գ. | — 40 |
| 30. | Ընդհանուր աշխարհագրութեան դասա-
գիրք, մասն Ա. թարգմ. Ա. Օբեղեանի | — 70 |
| 31. | Մենեօրոս, Համառօտ պատմութիւն քաղա-
քաքակրթութեան | 1 — |
| 32. | Հայոց եկեղեցական տարրական դպրոցների
ուսումնական ծրագիր | — 45 |
| 33. | Կլէն, Դործնական կաթնատնտեսութիւն
թարգմ. Ա. Միիթարեան | — 50 |
| 34. | Բօկլ. Անգլիայի բաղաքակրթութեան պատ-
մութիւնը, թարգմ. Վարդգէս Աղանեանց | — 75 |
| 35. | Վ. Լունկեիչ. Նախամարդու կեանքը. թրգմ.
Յ. Թաղէսսեան | — 25 |
| 36. | Ընդհ. աշխարհագրութեան դաս. ա . մ. Լ.
Բաբայեան. | — 60 |
| 37. | Ալիլ Լոռիա. Սօցիօլօգիֆա. Պըսիստ. | — 60 |
| 38. | Փոթորկից առաջ, վէպ Արիս. Յովհաննիս-
եանի | 1 — |
| 39. | Գրաբառի հոլովումը և խոնարհումը Ստ.
Մալիսսեանի | — 25 |
| 40. | Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց | 1 — |
| 41. | Մысли старого служаки, Шеварднадзе | — 25 |
| 42. | Դասագիրք ընդհանուր պատմութեան Պ.
Վինօգրադովի մասն Բ. Գ. Խաժակ | 1 — |
| 43. | Արագեան. Անիի աւերակները. | — 1 — |
| 44. | Արաքսեան ժողովրդական թատրօն Ժողո-
վածու Ա. | — 1 — |

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

Դասագիրք ընդհանուր պատմութեան.
Պ Վինօգրադօվի, Նոր-Դար, Թարգմ.
Գ Խաժակի:

Համառօտ պատմութիւն Ռուսաստանի
կազմ Ա. Նազարեթեան:

Հայ Գրողներ, հատոր Բ., կազմ. Ղ. Աղայ-
եան, Ա. Ահարոնեան, Վ. Փափազեան. և Յ.
Թումանեան:

Հայ գրողների Ա. հատորի գինն է 2 լ.

«Գուտտենբերգ» գրախանութը վերա-
փր վճարով գրքեր ուղարկում է նրանց,
որոնք ուղարկում են կանխավճար:

Դիմել Тифлисъ Книгоиздательство и
Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Га-
лустяна, Штабная ул. д. Палаева № 2

1-0
10

517

«Ազգային գրադարան



NL0167903

